Հայաստանում աղքատության գենդերային ասպեկտը բազմակի ճգնաժամերից հետո

Հարցազրույցները՝
Մարիամ Խալաթյանի
Արփի Մանուսյանի
Սոնա Մարտիրոսյանի

Հեղինակներ՝
Մարիամ Խալաթյան
Արփի Մանուսյան
Նվարդ Մարգարյան

Խմբագրումը՝
Արփի Մանուսյանի

Սրբագրումը՝
Ազնիվ Նասլյանի

Շարվածքը և ձևավորումը՝
Նորա Գալֆայանի

Հետազոտությունն իրականացվել է Շվեդիայի ֆինանսավորմամբ:

Բովանդակության համար պատասխանատու է բացառապես «Սոցիոսկոպ» ՀԿ-ն:

Վերլուծության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել Շվեդիայի կառավարության, «Կանանց ռեսուրսային կենտրոնի» և «Հայաստանում կանանց հիմնադրամի» տեսակետների հետ:

Բովանդակություն

Շնորհակալական խոսք **4**

Մեթոդաբանական ակնարկ **5**

Ներածություն. աղքատության [գենդերային] դրությունը .. **10**

ԲԱԺԻՆ 1 | Տնային տնտեսությունները և ընտանիքի կառուցվածքը ... 21

Սոցիալական քաղաքականություններ և ծրագրեր 26

Աղքատության քաղաքական ընկալումը 36

ԲԱԺԻՆ 2 | Կանանց ընտանեկան դրությունը և պայմանները՝ որպես աղքատության ցուցիչ 45

Տան բացակայությունը՝ որպես աղքատության և խոցելիության առանցքային չափում 54

Կրթության, առողջության և աղքատության փոխառնչությունները 63

Վարկեր և պարտքեր. կանանց ֆինանսական բեռը 71

ԲԱԺԻՆ 3 | Կանանց աշխատանքային փորձառությունը. կառուցվածքային սահմանափակումներ 83

Կանանց փորձառությունները պետական աջակցության համակարգում 89

Ամփոփում **93**

Գրականություն **98**

Annex 1 | Methodological Overview **99**

Annex 2 | Summary **103**

Շնորհակալական խոսք

Շնորհակալություն ենք հայտնում Շիրակի և Կոտայքի մարզերում բնակվող բոլոր այն կանանց, որոնք համաձայնեցին մասնակցել մեր հետազոտությանը և ներկայացնել իրենց փորձն ու պատմությունները:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկեր կազմակերպություններին՝ «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ին, «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՍՀԿ-ին, «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ-ին և «Ալվան ծաղիկ» ՀԿ-ին՝ ընտրված համայնքներում կանանց հետ կապ հաստատելու, համապատասխան տարածք տրամադրելու և հարցազրույցների անցկացումն ապահովելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Կանանց ռեսուրսային կենտրոնին»՝ այս կարևոր հարցերի շուրջ համագործակցության և ֆինանսական աջակցության համար, ինչպես նաև «Հայաստանում կանանց հիմնադրամին»՝ հետազոտությունը համաֆինանսավորելու և մշտական աջակցության համար:

Մեթոդաբանական ակնարկ

Աղքատության չափման ավանդական մեթոդները հաճախ բավականաչափ զգայուն չեն և անտեսում են դրա գենդերային ասպեկտը: Չնայած աղքատության գնահատման գործընթացում եկամտի, մասնավորապես տնային տնտեսության եկամտի հաշվարկները ամենատարածվածն են, դրանք երբեմն բաց են թողնում աղքատության այլ չափման միավորները, մասնավորապես ոչ դրամական, ինչպիսիք են, օրինակ, չվճարվող տնային աշխատանքը, ժամանակի օգտագործումը, որոշումների կայացման դինամիկան և այլն (Shahnazaryan, 2022): Աղքատության չափման տարբեր ուսումնասիրություններ առաջարկում են տնային տնտեսություններից բացի չափումը կենտրոնացնել անհատների վրա, ինչը հնարավորություն կտա բացահայտելու ընտանիքի ներսում դինամիկան, գենդերային անհավասարության հարցերը, այլ թաքնված դժվարությունների ազդեցությունը աղքատության չափման վրա (Vijaya et al., 2013):

Հայաստանում աղքատության և սոցիալական անհավասարության հարցերը մեզ՝ որպես հետազոտողների, վերջին տարիներին տարել են ուսումնասիրության մի դաշտ, որտեղ անդրադարձել ենք աղքատության և աշխատանքային իրավունքներին, ճգնաժամերի ազդեցությանը աշխատանքային իրավունքների պաշտպանության վրա, աշխատանքային իրավունքների և արհմիությունների գործականության հարցերին, ինչպես նաև զբաղված աղքատության հիմնախնդրին: Այս հետազոտությունների առանցքում հիմնականում կանայք են եղել: Սոցիոսկոպի՝ 2024 թվականին իրականացրած հետազոտությունը՝ զբաղված աղքատության և աշխատանքային իրավունքի մասին **Ծիրակի և Գեղարքունիքի մարզերում**, ցույց տվեց, որ հաճախ կանայք կատարում

են ֆիզիկական ծանրաբեռնվածություն պահանջող տարաբնույթ աշխատանքներ, սակայն դա չեն ընկալում և ձևակերպում իբրև աշխատանք (Խալաթյան, Մարգարյան, 2024)։ Կանանց աղքատության բարձր մակարդակը պայմանավորված է տնտեսական, մշակութային, սոցիալական մի շարք գործոններով, այդ թվում՝ զբաղվածության հնարավորությունների սահմանափակմամբ, կանանց դերի մասին սոցիալական և մշակութային կարծրատիպային ընկալումներով, ընտանիքի ներսում սահմանափակումներով, ինչպես նաև ընտանեկան բռնության դրսևորումներով, աշխատավարձի գենդերային խզվածքով, սոցիալական պաշտպանության համակարգի բացերով և ոչ գենդերազգայուն քաղաքականություններով։ Այս հարցերի շուրջ պատասխանների փնտրտուքն էլ մեզ բերեց այս հետազոտության նպատակի ձևակերպմանը՝ ***վերլուծել աղքատության գենդերային ասպեկտը Հայաստանում բազմակի ճգնաժամերից հետո՝ հետազոտահենք ջատագովություն անելու և աղքատության գենդերային խնդիրներին այլընտրանքային լուծումներ առաջարկելու համար:*** Ուսումնասիրության կենտրոնում կանանց պատմություններն ու փորձառություններն են, ինչպես նաև աղքատության խնդրի գենդերային չափման առանձնահատկությունների վերլուծությունը։ Հետազոտության նպատակին հասնելու համար մենք ոչ միայն վերհանել ենք գործող պետական քաղաքականությունների բացերն ու խնդիրները, այլև դրանք համադրել ենք կանանց անձնական պատմությունների և ընկալումների հետ։ Այսպես՝ հետազոտական նպատակին հասնելու համար սահմանել ենք հետևյալ հետազոտական խնդիրները՝

> բացահայտել և վերլուծել աղքատության գենդերային ասպեկտին առնչվող քաղաքականությունները պետության սոցիալական, զբաղվածության ծրագրերում և քաղաքականություններում, վերհանել դրանց բացերն ու խնդիրները,

- աղքատությանն ուղղված պետական սոցիալական ծրագրերի, առաջարկվող բարեփոխումների, վիճակագրական տվյալների, հարակից փաստաթղթերի, թեմատիկ ուսումնասիրությունների միջոցով վերհանել աղքատության և կանանց հիմնախնդիրների միջև իրական կապերը,

- վերլուծել աղքատության վերաբերյալ գերիշխող քաղաքական գաղափարաբանությունն ու դիսկուրսը (հատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին),

- վերհանել կանանց շրջանում աղքատության տեսանկյունից առավել խոցելի խմբերը,

- վերլուծել, թե ինչպես է չվարձատրվող խնամքի աշխատանքը խոչընդոտում, որ կանայք գտնեն վարձատրվող աշխատանք և տնտեսական անկախություն ձեռք բերեն,

- վերլուծել, թե ինչպես են փոխհատվում կանանց աղքատությունն ու նրանց նկատմամբ գենդերային կամ ընտանեկան բռնությունը,

- հասկանալ կանանց աղքատության, կրթության և առողջության հարցերի փոխառնչության բազմաչափ բնույթը:

Հիմնվելով նշված հետազոտական հարցերի վրա՝ իրականացրել ենք երկփուլ որակական ուսումնասիրություն: Առաջին փուլում փաստաթղթերի երկրորդային վերլուծության միջոցով ուսումնասիրել ենք աղքատության հաղթահարմանն ուղղված պետական քաղաքականությունները, սոցիալական և զբաղվածության ծրագրերը, ինչպես նաև պաշտոնական վիճակագրական տվյալները՝ հատուկ ուշադրություն

դարձնելով դրանցում գենդերային ասպեկտի բացահայտմանը: Փաստաթղթերի վերլուծության արդյունքում առանձնացրել ենք այն կանանց խմբերը, որոնք առավել խոցելի են աղքատության տեսանկյունից, մասնավորապես՝ 30–45 տարեկան.

- միայնակ մայրերը[1],
- տնային տնտեսությունների ղեկավար կանայք,
- տեղահանված և փախստական կարգավիճակ ունեցող կանայք,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանայք:

Առանձնացված խոցելի խմբերից յուրաքանչյուրի համար իրականացրել ենք 4 խորքային հարցազրույց Ծիրակի և Կոտայքի մարզերում բնակվող կանանց հետ: Ծիրակի մարզի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն շարունակաբար արձանագրվում է որպես Հայաստանի ամենաաղքատ մարզը: Կոտայքի[2] մարզն ընտրվել է, քանի որ Կանանց ռեսուրսային կենտրոնը 2025 թվականի աշնանը այնտեղ իրականացրել է քայլարշավ՝ կանանց խնդիրների վերհանման և հասցեագրման նպատակով: Ընդհանուր առմամբ իրականացրել ենք 16 դեպքի ուսումնասիրություն (8-ը՝ Ծիրակի, 8-ը՝ Կոտայքի մարզում)՝ ապահովելով վերևում նշված չափանիշերի համամասն ներառումը: Սկզբում նախատեսում էինք հետազոտությունն իրականացնել բացառապես մարզկենտրոններում, սակայն կոնկրետ թիրախային խմբերի կանանց ընդգրկելու անհրաժեշտությունը պահանջեց ընտրանքի ձևավորման հարցում ավելի ճկուն մոտեցում: Այդ նպատակով հետազոտության տարածքն ընդլայնվել է՝ ներառելով Գյումրիին և Հրազդանին հարակից քաղաքներ, ինչպես նաև երկու գյուղական համայնք, ինչը հնարավորություն տվեց ապահովելու չափանիշերին համապատասխան մասնակիցների ընդգրկումը:

1 | Հետազոտության ընտրանքում ներառվել են նաև ամուսնալուծված կանայք, որոնք թեև իրավական առումով միայնակ մայր չեն, սակայն գործնականում երեխաների խնամքն իրականացնում են միայնակ՝ առանց հայրերի մասնակցության կամ աջակցության: Այս իրավիճակում նրանք իրենց իսկ ընկալում են որպես միայնակ մայրեր:

2 | Հարցազրույցների անցկացման ժամանակ Կոտայքի մարզն իր առանձնահատկությունն ուներ. այն անապահովության գնահատման նոր կարգի գործարկման պիլոտային մարզերից մեկն էր (Սյունիքի մարզի հետ միասին), սակայն այս հանգամանքը հետազոտության ընտրանքի ուղիղ չափանիշ չի եղել:

Վերլուծական տեքստն ընթերցելիս կարևոր է հաշվի առնել, որ հետազոտությունն ունի սահմանափակումներ և չի ընդգրկում խոցելի այլ խմբերի կանանց, նրանց պատմություններն ու փորձառությունները, որոնք նույնպես ուսումնասիրման արժանի են: Այդպիսի խոցելի խմբերն են հաշմանդամություն ունեցող կանայք, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ կանայք, գյուղաբնակ կանայք, տրանս կանայք: Թեև այս ուսումնասիրությունը չի ընդգրկում բոլոր խոցելի խմբերի կանանց, այնուամենայնիվ, այն խորապես քննում է աղքատության գենդերային ասպեկտը և ակներև է դարձնում հիմնախնդիրներ, որոնք ընդհանուր գծերով վերաբերելի են աղքատության մեջ ապրող ամենատարբեր կանանց խմբերին: Միաժամանակ կարևոր է ընդլայնել հետազոտական շրջանակը և ներառել բոլոր խոցելի խմբերի կանանց՝ վերհանելու խնդիրների և կարիքների բոլոր նուրբ շերտերն ու տարբերությունները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.
աղքատության [գենդերային] դրությունը

Հայաստանը վերջին տարիներին գտնվում է խորքային սոցիալ-քաղաքական և տնտեսական փոխակերպումների փուլում: Թավշյա հեղափոխությունը (2018 թ.), Քովիդ-19 համավարակը (2019 թ.), Ղարաբաղյան երկրորդ պատերազմը (2020 թ.), ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից հայերի զանգվածային տեղահանությունը (2023 թ.) զգալի ազդեցություն են թողել երկրի հանրային-քաղաքական կյանքի կազմակերպման և սոցիալ-տնտեսական մարտահրավերների կառավարման վրա:

Չնայած պատերազմից հետո անվտանգային խնդիրներին ու մարտահրավերներին՝ աղքատությունը շարունակում է լինել Հայաստանի առջև ծառացած գերիշխող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրը: Թեև վերջին տասնամյակում որոշակի առաջընթաց է արձանագրվել աղքատության ցուցանիշերի նվազման ուղղությամբ, սակայն հատկապես համավարակի և հետպատերազմյան ճգնաժամերի հետևանքով 2020-ից հետո աղքատության ցուցանիշերը կրկին աճել են: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած «Պարենային ապահովություն և աղքատություն, 2025 թ. հունվար-սեպտեմբեր» զեկույցի[3]՝ 2024 թվականի տվյալներով ՀՀ բնակչության աղքատության մակարդակը 21,7% է՝ նախորդ տարվա 23.7%-ից նվազելով 2 տոկոսային կետով: Քաղաքային և գյուղական բնակավայրերում աղքատության ցուցանիշերը տարբերվում են: Մասնավորապես՝ քաղաքային աղքատության մակարդակը 2024-ին միջինում եղել է 19.3%, իսկ գյուղական աղքատության մակարդակը՝ 26%: Քաղաքներում ծայրահեղ աղքատությունը 0.6% է, գյուղերում՝ 0.7%[4]:

3 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2025). *Պարենային ապահովություն և աղքատություն, 2025 թ. հունվար-սեպտեմբեր*. վերցվել է՝ https://armstat.am/am/?nid=82&id=2775:

4 | Հերգնյան, Ս. (2025). *Արսեն Թորոսյանն աղքատության ոչ համադրելի թվեր է համեմատել և ռեկորդային ցուցանիշեր արձանագրել*. վերցվել է՝ https://www.hetq.am/hy/article/178062:

Հայաստանում աղքատությունը սահմանվում և գնահատվում է «հիմնական կարիքների արժեքի» մեթոդով՝ հիմնված սպառողական զամբյուղի դրամական արժեքի գնահատականի վրա, ինչն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային և ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Ըստ այդմ՝ աղքատ են համարվում այն տնային տնտեսությունները, որոնց բյուջեն/սպառումը անբավարար է այդ զամբյուղի արժեքն ապահովելու համար[5]:

Աղքատության մակարդակի քանակական չափումը կարևոր ցուցանիշ է բնակչության բարեկեցության, ինչպես նաև ընդհանուր կենսամակարդակի գնահատման համար: Աղքատության քանակական չափման մեջ կարևոր է ուսումնասիրել և ներառել կենսապահովման տարբեր բաղադրիչներ՝ առողջապահություն, կրթություն, պարենային անվտանգություն, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը[6]: Բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան անհրաժեշտ է նկարագրել նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից: Ոչ նյութական աղքատության բնորոշիչներից են վատ առողջությունը, կրթության ցածր մակարդակը, անգրագիտությունը, սոցիալական անպաշտպանությունը, մարդու իրավունքների ոտնահարումները, սեփական խնդիրների մասին խոսելու և դրանք պատկան մարմիններին և այլոց հայտնելու անկարողությունը[7], ուստի ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական, սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է: Միավորված ազգերի կազմակերպությունն իր «Կայուն զարգացման» առաջին նպատակն է հռչակել աղքատության վերացումը՝ իր բոլոր ձևերով և դրսևորումներով, և թիրախ է սահմանել 2030 թվականին ամենուրեք և բոլոր մարդկանց համար իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, որը ներկայում չափվում է որպես օրական 1,25 ԱՄՆ դոլարից

5 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2022). *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը*. վերցվել է՝ https://armstat.am/file/article/poverty_2022_a_6.pdf:

6 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2024). *Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.* վերցվել է՝ https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf :

7 | Նույն տեղում:

պակաս սպառում[8]: Ըստ Հայաստանում աղքատության բաշխվածության՝ աղքատ բնակչության 41,6%-ը բնակվում է գյուղական, իսկ 58,4%-ը՝ քաղաքային բնակավայրերում, որից 30%-ը՝ Երևանում, իսկ 28,4%-ը՝ այլ քաղաքներում: Շիրակի մարզը շարունակում է լինել Հայաստանի ամենաաղքատ մարզը, որտեղ աղքատության մակարդակը 2024-ին եղել է 43,%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 2,4%: Շիրակի մարզին հաջորդում է Տավուշի մարզը, որտեղ աղքատությունը 39,9% է, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 2%: Աղքատության ամենացածր մակարդակը Սյունիքի մարզում է՝ 6,2%[9]:

Գենդերային տեսանկյունից աղքատության ուսումնասիրությունը կարևոր է տնտեսական և սոցիալական անհավասարությունների ամբողջական շրջանակը հասկանալու և արտացոլելու համար: Կանանց և տղամարդկանց աղքատության փորձառությունները հաճախ խիստ տարբեր կարող են լինել միմյանցից՝ պայմանավորված համակարգային գենդերային նորմերով, ռեսուրսներին անհավասար հասանելիությամբ, տնային տնտեսություններում և համայնքներում ունեցած տարբեր դերերով և պարտականություններով: Կանայք առավել հավանական է, որ աշխատեն ոչ ֆորմալ, ցածր վարձատրվող ոլորտներում, կրեն չվճարվող խնամքի աշխատանքի բեռը և բախվեն իրավական և ինստիտուցիոնալ խոչընդոտների, որոնք սահմանափակում են նրանց տնտեսական հնարավորությունները[10]:

Այս անհավասարությունները հաճախ անտեսանելի են աղքատության գնահատումներում, որոնք հաճախ գենդերային առումով ոչ զգայուն են, ինչը հանգեցնում է որոշում կայացնողների կողմից այնպիսի քաղաքականությունների մշակման, որոնք համընդգրկուն կերպով չեն արձագանքում կանանց և այլ մարգինալացված գենդերային խմբերի կոնկրետ կարիքներին և լուծում դրանք: Գենդերազգայուն մոտեցումը

8 | ՄԱԿ Հայաստան. *Կայուն զարգացման նպատակներ*. վերցվել է՝ https://armenia.un.org/hy/sdgs/1:

9 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2025). *Աղքատության պատկերը Հայաստանում 2024 թ*. վերցվել է՝ https://www.armstat.am/file/article/poverty_2025_am_2.pdf:

10 | UN Women. (2020). *From insights to action: Gender equality in the wake of COVID-19.* Retrieved from https://www.unwomen.org/en/digital-library/publications/2020/09/gender-equality-in-the-wake-of-covid-19.

հնարավորություն է տալիս համակողմանիորեն վերլուծելու և մշակելու նպատակային ռազմավարություններ, որոնք խթանում են սոցիալական հավասարությունը և ներառական զարգացումը (Chant, 2010):

Կանայք, մասնավորապես երիտասարդ, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, գյուղաբնակ, տեղահանված, փախստական կարգավիճակ ունեցող, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչ, առերեսվում են բազմապատիկ խոչընդոտների: Հատկապես նկատելի է կանանց և տղամարդկանց՝ աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակի գենդերային խզվածքը, որը 2022 թվականի դրությամբ եղել է 32.3%՝ աճելով նախորդ տարվա համեմատ 0.6 տոկոսային կետով: 25-34 տարեկան կանանց խմբում խզվածքը հասել է 41%-ի, ինչը հիմնականում պայմանավորված է ընտանեկան պարտականություններով և աշխատանքի ու ընտանիքի համատեղման դժվարությամբ: 15-74 տարեկան կանանց զբաղվածության մակարդակը եղել է 41%, մինչդեռ տղամարդկանցը՝ 62%: Գործատուների և ինքնազբաղվածների մեծ մասը տղամարդիկ են (64%), իսկ առանց վարձատրության աշխատողներն առավելապես կանայք են (67%): Սա հատկապես բնութագրական է գյուղատնտեսական ոլորտին, որտեղ կանայք հիմնականում ներգրավված են ցածր արտադրողական գործունեության մեջ՝ հաճախ առանց վարձատրության[11]: Հայաստանում աղքատ են կանանց 23,7%-ը և տղամարդկանց 23,8%-ը, իսկ ծայրահեղ աղքատ են կանանց 1,2%-ը և տղամարդկանց 1%-ը: Աղքատ բնակչության 54,6%-ը կանայք են, 45,4%-ը՝ տղամարդիկ[12]: Աղքատության մակարդակը ուղիղ համեմատական է տնային տնտեսությունում առկա երեխաների և տարեցների թվաքանակի հետ, և հատկապես խոցելի են այն տնային տնտեսությունները, որտեղ բնակվում է երեք և ավելի անչափահաս երեխա, ինչպես նաև մեկ կամ

11 | ՄԱԿ Կանայք (2023). *Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարության գենդերային ազդեցության գնահատում. քաղված դասեր Հայաստանում կանանց տնտեսական հզորացման և առաջընթացի մասին.* վերցվել է՝ https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2025/01/1710315133rt7lurfrjmrboqpavpwnxvpbtdju8gqftkvwaloc.pdf:

12 | Նույն տեղում:

երկու տարեց անձ: 2023 թվականի տվյալների համաձայն՝ աղքատ է 0-18 տարեկան աղջիկների 32,3%-ը, իսկ տղաների՝ 31,2%-ը: Ընդ որում՝ ծայրահեղ աղքատությունը աղջիկների շրջանում եղել է 1,9%, իսկ տղաների շրջանում՝ 1,7%[13]: Հայաստանում երեխաների գրեթե 20%-ն ապրում է բազմաչափ աղքատության մեջ: Ընդ որում՝ այստեղ կարևոր է նկատել, որ կանանց շրջանում բազմաչափ աղքատությունն[14] ավելի բարձր է, քան տղամարդկանց շրջանում (18,3%՝ կանանց շրջանում և 16,2%՝ տղամարդկանց շրջանում), իսկ երեխաների շրջանում բազմաչափ աղքատության մակարդակն ավելի բարձր է մեծահասակների շրջանում համապատասխան ցուցանիշից: Բազմաչափ աղքատների 27,6%-ը երեխաներ են[15]:

Աղքատության գենդերային չափումները

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ 2022 թվականին ՀՀ-ում կանանց միջին վաստակը եղել է տղամարդկանց վաստակի 60,8%-ը, ըստ այդմ՝ վարձատրության գենդերային խզվածքը[16] եղել է 39,2%[17]: Կանայք փոքր-ինչ ավելի շատ են ներկայացված գյուղատնտեսության մեջ, ինչով էլ բացատրվում է ընտանիքի օգնող կամ չվարձատրվող անդամների թվաքանակում կանանց մեծ մասնաբաժինը: Մյուս կողմից՝ ավելի «տղամարդկային» ոլորտներ կարելի է համարել հանքարդյունաբերության, էլեկտրականության, գազի, շինարարության, փոխադրումների և պետական կառավարման ոլորտները: Այդուհանդերձ, ինչպես այլ երկրներում ևս, կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներում գերակշռում են կանայք, ինչը վկայում է կանանց ոլորտային սեգրեգացիայի առկայության մասին: Կանայք ավելի հազվադեպ են ղեկավար պաշտոններ զբաղեցնում՝ չնայած նրան, որ բարձր

13 | Նույն տեղում:

14 | Բազմաչափ աղքատությունը զրկանքի վիճակ է, որի դեպքում անձը կամ տնային տնտեսությունը միաժամանակ բախվում է անբարենպաստ պայմանների տարբեր ոլորտներում, այդ թվում՝ առողջապահության, կրթության և կենսամակարդակի: Այս մոտեցումը տարբերվում է եկամտի վրա հիմնված միաչափ չափումներից, քանի որ այն տալիս է աղքատության ավելի ամբողջական պատկեր՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են վատ սնունդը, մաքուր ջրի կամ էլեկտրաէներգիայի բացակայությունը և կրթության ցածր մակարդակը: Սահմանումը՝ ըստ World Bank Group-ի:

15 | Նույն տեղում:

16 | Աշխատավարձի գենդերային ճեղքվածքը տղամարդկանց և կանանց միջին ամսական աշխատավարձի տարբերությունն է՝ հարաբերած տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձին՝ արտահայտված %-ով: Տե՛ս https://armstat.am/file/article/analysis_of_the_gender_pay_gap_armenia_am.pdf

17 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2023). *Հայաստանի կանայք և տղամարդիկ*. վերցվել է՝ https://armstat.am/file/article/gender-2023.pdf:

և միջին որակավորման մասնագետների, ինչպես և գրասենյակային ծառայողների թվում գերակշռում են կանայք: Ի հակադրություն սրա՝ որակավորում չպահանջող աշխատանքների գերակշիռ մասն իրականացնում են տղամարդիկ: Ընդհանուր առմամբ, կանայք ավելի հաճախ են զբաղված բարձր որակավորում պահանջող աշխատանքներում, քան տղամարդիկ[18]:

2022 թվականի տվյալներով՝ չվճարվող աշխատանքով զբաղվածների 64%-ը կանայք են: Նրանք ներգրավված են սեփական սպառման ապրանքների արտադրության (օրինակ՝ գյուղմթերք, հագուստի կար, պահածոներ) և ծառայությունների մատուցման մեջ (տնային խնամք, երեխաների և հիվանդների խնամք): Գենդերային դերերի մասին պատմական և մշակութային ընկալումները, ինչպես նաև աշխատավայրերում երկարատև աշխատանքային ժամերը խոչընդոտում են անձնական և մասնագիտական կյանքի համադրումը, ինչն էլ կանանց ստիպում է նախընտրել չվճարվող աշխատանքը[19]: 15 և ավելի բարձր տարիքի կանայք և աղջիկներն իրենց ժամանակի մոտ 21,7%-ը տրամադրում են չվճարվող խնամքի և տնային գործերին, մինչդեռ տղամարդկանց մեծ մասը նման աշխատանքներ իրականացնելու վրա ծախսում է իր ժամանակի մոտ 4,4%-ը[20]: Ավելին՝ աշխատանքային տարիքի կանանց կեսից քիչն է ակտիվ աշխատաշուկայում, ինչը պայմանավորված է հիմնականում երեխաների և ընտանիքում հաշմանդամություն ունեցող անդամների խնամքի պարտականությունների կատարմամբ[21]: Քովիդ-19 համավարակը սրեց չվճարվող խնամքի աշխատանքի ոլորտում առկա գենդերային անհավասարությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանայք, ի տարբերություն տղամարդկանց, ավելի հակված էին թողնելու իրենց աշխատանքը՝ չվճարվող տնային խնամք մատուցելու համավարակի ընթացքում[22]:

18 | ՄԱԿ Կանայք, ՀՀ վիճակագրական կոմիտե (2020). *Հայաստանի աշխատաշուկայում վարձատրության գենդերային խզվածքի և գենդերային անհավասարության վերլուծություն.* վերցվել է՝ https://armstat.am/file/article/analysis_of_the_gender_pay_gap_armenia_am.pdf:

19 | ՀՀ Կառավարություն (2025). *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը.* վերցվել է՝ https://www.arlis.am/hy/acts/206364/latest, https://www.e-draft.am/projects/6821/about:

20 | UN Women data, Retrieved from https://data.unwomen.org/country/armenia.

21 | World Bank. (2023). *Proportion of time spent on unpaid domestic and care work (% of 24-hour day).* Retrieved from https://genderdata.worldbank.org/en/indicator/sg-timuwrk.

22 | World Bank Group. (2024). Armenia: *Country Gender Assessment.* Retrieved from https://documents1.worldbank.org/curated/en/099100824162527996/pdf/P179877-90d0c0e9-71f5-456a-a683-a1a576083a16.pdf.

Երկարատև գործազրկությունը կանանց շրջանում 53.7% է, ինչը գերազանցում է տղամարդկանց համապատասխան ցուցանիշը՝ 46.7%: Կանայք, հատկապես տնային տնտեսությունների միակ կերակրողները, ավելի խոցելի են ֆինանսապես, իսկ աշխատավարձերի տարբերությունը խորացնում է այդ խոցելիությունը: 30-40 տարեկան կանայք հաճախ դուրս են մնում աշխատաշուկայից՝ մասնագիտական փորձի պակասի, հմտությունների նվազման և շուկայի պահանջներին չհամապատասխանելու պատճառով[23]:

Աղքատության գենդերային չափման մյուս բնութագրիչը կրթության, մասնագիտական ուսուցման և զբաղվածության հնարավորությունների հասանելիությունն է: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի կանայք և տղամարդիկ. 2023[24]» զեկույցի՝ 2022 թվականին հանրակրթությունում համախառն ընդգրկվածության ցուցանիշը 84,5% է աղջիկների համար և 81,3%՝ տղաների համար: Նախնական մասնագիտական կամ արհեստագործական կրթության մեջ, ըստ 2022 թվականի տվյալների, համախառն ընդգրկվածության ցուցանիշը եղել է 2,8% աղջիկների համար և 8,1%՝ տղաների համար, իսկ միջին մասնագիտական կրթության մեջ այդ ներգրավվածությունը համապատասխանաբար եղել է 16,7% աղջիկների համար և 14,1%՝ տղաների համար[25]: Բարձրագույն կրթության առաջին աստիճանում (բակալավր) ներգրավվածների 64,1%-ը կանայք են, իսկ 43,9%-ը՝ տղամարդիկ, իսկ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում (մագիստրատուրա) ներգրավվածությունը համապատասխանաբար 16,6% է կանանց համար և 8,5%՝ տղամարդկանց համար[26]: Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում հակադարձ գենդերային անհավասարության պատճառները հետագա ուսումնասիրության կարիք ունեն: Սակայն այլ երկրների հետ համեմատության մեջ կարող ենք տեսնել, որ այս հակադարձ ցուցանիշին նպաստող

23 | ՀՀ Կառավարություն (2025). *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը.* վերցվել է՝ https://www.arlis.am/hy/acts/206364/latest:

24 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2023). *Հայաստանի կանայք և տղամարդիկ.* վերցվել է՝ https://armstat.am/file/article/gender-2023.pdf:

25 | Նույն տեղում:

26 | Նույն տեղում:

հիմնական գործոններն են բարձրագույն կրթության ցածր ընկալվող արժեքը, տղամարդկանց վրա վաղ տարիքից գումար վաստակելու հասարակական ճնշումը, սահմանափակ որակավորված աշխատանքի հնարավորությունները, ոչ ֆորմալ կամ «հանցավոր» աշխատանքի ավելի բարձր խթանները և ավանդական գենդերային նորմերը: Ուստի շատ տղաներ նախընտրում են միջին մասնագիտական՝ արհեստագործական կրթությունը, ինչով մասամբ բացատրվում է տղամարդկանց ցածր ներգրավվածությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ: Գենդերային նորմերով և սպասելիքներով պայմանավորված՝ տղամարդկանց համար աշխատելու անհրաժեշտությունը հաճախ գերակայում է կրթության շարունակականությանը, իսկ պարտադիր զինվորական ծառայությունը նույնպես նպաստում է տղամարդկանց կրթության ընդհատմանը[27]: Հայաստանում կանայք շարունակում են կենտրոնացած լինել ավանդաբար «կանացի» համարվող ուսումնական ոլորտներում: Այնուամենայնիվ, ի տարբերություն համաշխարհային միտումների, նրանք ավելի ու ավելի են ներկայացված որոշ STEM ոլորտներում, մասնավորապես՝ մաթեմատիկայի և վիճակագրության, որտեղ կանայք այժմ կազմում են ինչպես ուսանողների, այնպես էլ շրջանավարտների մեծ մասը՝ մոտ 59%-ը: Սա նշանակալի տեղաշարժ է, քանի որ կանայք թերներկայացված էին այս ոլորտներում մինչև 2016 թվականը: Այնուամենայնիվ, տղամարդիկ շարունակում են գերիշխել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ճարտարագիտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ճարտարապետությունը և շինարարությունը, որտեղ նրանք ուսանողների 62-91%-ն են: Միաժամանակ, կանայք գերներկայացված են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, սոցիալական աշխատանքը, առողջապահությունը, արվեստը և հումանիտար գիտությունները[28]: Ոլորտային այս տարանջատումն ըստ սեռերի պայմանավորված է կանանց կարողությունների

27 | World Bank Group. (2024). *Armenia: Country Gender Assessment.* Retrieved from, https://documents1.worldbank.org/curated/en/099100824162527996/pdf/P179877-90d0c0e9-71f5-456a-a683-a1a576083a16.pdf.

28 | Նույն տեղում:

վերաբերյալ հասարակական ընկալումներով, այլ ոչ թե նրանց իրական կարողություններով:

Անդրադառնալով աղքատության գենդերային չափման հաջորդ բնութագրիչին՝ գյուղատնտեսության մեջ և ոչ ֆորմալ աշխատանքում կանանց ներգրավվածությանը, անհրաժեշտ է նշել, որ գյուղական տնային տնտեսությունների 26.5%-ը ղեկավարում են կանայք, ինչը հաճախ պայմանավորված է տղամարդկանց սեզոնային միգրացիայով: Հայաստանում տնտեսապես ակտիվ կանանց ավելի քան 40%-ը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում՝ գերազանցելով տղամարդկանց մոտ 30% ներգրավվածությունը: Այս կանանց մեծամասնությունը ոչ ֆորմալ հիմունքներով աշխատում է ընտանեկան ֆերմերային տնտեսություններում՝ չունենալով աշխատանքային պայմանագրեր և սոցիալական պաշտպանություններից օգտվելու հնարավորություն, ինչպիսիք են անաշխատունակության և երեխայի խնամքի նպաստները, քանի որ նրանք սովորաբար դասակարգվում են որպես ինքնազբաղված կամ տնտեսապես ոչ ակտիվ: Բացի այդ՝ գյուղական վայրերում ինքնազբաղված կանանց երկու երրորդն ընդհանրապես չի վարձատրվում[29]: Հայաստանի գյուղաբնակ կանայք մեծապես ներգրավված են անասնապահության, մասնավորապես՝ կաթնամթերքի արտադրության մեջ՝ ներառյալ կթումը, վերամշակումը և կաթնամթերքի վաճառքը: Հաշվի առնելով դրա կարևորությունը տնային տնտեսությունների եկամտի համար՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք հաճախ համագործակցում են անասնապահությանն առնչվող աշխատանքներում[30]: Ոչ ֆորմալ աշխատանքում կանանց այս գերներկայացվածությունը սահմանափակում է նրանց հասանելիությունը տնտեսական ռեսուրսներին և արժանապատիվ աշխատանքի հնարավորություններին: Այս զբաղվածությունը հաճախ զրկում է նրանց աշխատանքային անհրաժեշտ պաշտպանությունից, սոցիալական

29 | FAO. (2025). *Country profile-Armenia: Family Farming Knowledge Platform.* Retrieved from: https://www.fao.org/family-farming/countries/arm/en/.

30 | Նույն տեղում:

նպաստներից և արհմիութենական ներկայացվածությունից: Հետևաբար շատ կանայք զրկված են վճարովի արձակուրդից, աշխատանքային կենսաթոշակներից, ինչը մեծացնում է նրանց խոցելիությունը տնտեսական անկայունության նկատմամբ: Ավանդական գենդերային դերերը կանանց վերագրում են չվճարվող խնամքի աշխատանքի, այդ թվում՝ երեխաների և տարեցների խնամքի հիմնական պատասխանատվությունը: Այս բեռը սահմանափակում է նրանց մասնակցությունը աշխատաշուկայում և նրանց հասանելիությունը հանրային ծառայություններին: Երեխաների և տարեցների խնամքի մատչելի ծառայությունների սակավությունը ավելի է սրում այս խնդիրը՝ խոչընդոտելով կանանց տնտեսական հնարավորություններին և սոցիալական աջակցության համակարգերին հասանելիությունը: Կանայք, հատկապես գյուղական համայնքներում բնակվող, էթնիկ փոքրամասնության և հաշմանդամություն ունեցող, հաճախ են բախվում առողջապահական ծառայությունների հասանելիության խոչընդոտների: Այս խոչընդոտների թվում են ժամանակակից հակաբեղմնավորիչների, ընտանիքի պլանավորման և մայրական առողջության ծառայությունների սահմանափակ հասանելիությունը: Մարգինալացված խմբերի նկատմամբ խտրականությունը և կարծրատիպերը խոչընդոտում են նրանց հասանելիությունը անհրաժեշտ առողջապահական ծառայություններին: Գենդերային բռնությանը և ինստիտուցիոնալ մարտահրավերներին անդրադառնալը ևս առանցքային է աղքատության գենդերային չափման համատեքստում: Գենդերային բռնությունը, այդ թվում՝ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը, շարունակում է լինել Հայաստանում մարտահրավերներից մեկը: Չնայած վերջին տարիներին որոշակի օրենսդրական փոփոխություններին՝ օրենքների կիրարկման և բռնության զոհերի աջակցության ծառայություններում դեռևս շատ բացեր կան: Կանայք հաճախ դժվարությունների

են հանդիպում իրավաբանական օգնություն, ապաստարաններ և հոգեբանական աջակցություն ստանալու հարցերում, մասնավորապես մարզային և գյուղական համայնքներում: Դեռևս այս ոլորտում առկա բացասական կարծրատիպերն ու նախապաշարումները, ինչպես նաև հաճախ ինստիտուցիոնալ արձագանքման թերությունները ստեղծում են լրացուցիչ խոչընդոտներ գենդերային բռնության ենթարկվող կանանց համար օգնություն փնտրելու և գտնելու համար: Կանայք Հայաստանում բախվում են նաև տնտեսական անհավասարության, այդ թվում՝ աշխատուժի մասնակցության ցածր մակարդակի և աշխատավարձի անհավասարության: Նրանք թերներկայացված են ձեռներեցության մեջ և հաճախ սահմանափակ հասանելիություն ունեն ֆինանսական ռեսուրսներին, ինչպիսիք են վարկերը և ակտիվների սեփականությունը: Այս տնտեսական խոչընդոտները սահմանափակում են կանանց կարողությունը՝ ներդրումներ կատարելու իրենց բարեկեցության մեջ և օգտվելու սոցիալական պաշտպանության մեխանիզմներից[31]:

31 | World Bank Group. (2024). *Armenia: Country Gender Assessment*. Retrieved from: https://documents1.worldbank.org/curated/en/099100824162527996/pdf/P179877-90d0c0e9-71f5-456a-a683-a1a576083a16.pdf.

ԲԱԺԻՆ 1 | 1.1 | Տնային տնտեսությունները և ընտանիքի կառուցվածքը

Աղքատության գենդերային ասպեկտները հասկանալու մյուս կարևորագույն բաղադրիչը տնային տնտեսությունների և ընտանիքի կառուցվածքի ուսումնասիրությունն է: Հայաստանում աղքատության ֆեմինիզացումը ոչ միայն հետևանք է եկամուտների անհավասարության, այլ նաև խոր արմատացած է տնային տնտեսությունների կազմակերպման պրակտիկաներում, ընտանիքում պարտականությունների բաշխման մեջ, ինչպես նաև սոցիալ-մշակութային ակնկալիքներում:

Վերլուծության այս հատվածն անդրադառնում է միայնակ մայրերի և կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական խոցելիություններին, տնային տնտեսություններում ռեսուրսների և որոշումների կայացման լիազորությունների անհավասար բաշխմանը, ինչպես նաև կանանց վրա միգրացիայի ազդեցությանը՝ մասնավորապես գյուղական համայնքներում: Միայնակ մայրերը և այն տնային տնտեսությունները, որոնք գլխավորում են կանայք, Հայաստանի տնտեսապես ամենախոցելի խմբերից են: Գենդերային նորմերը, կանանց վրա թողված խնամքի պարտականությունները և աշխատաշուկայի անբարենպաստ պայմաններն այն կառուցվածքային խոչընդոտներից են, որոնք անմիջապես և բացասաբար են ազդում կանանց տնտեսական կայունության վրա: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ կանայք գլխավորում են հայկական տնային տնտեսությունների մոտ 20%-ը[32]: Այս կանանցից շատերը միայնակ ծնողներ, այրիներ կամ ընդլայնված ընտանիքի անդամների խնամակալներ են: Կանանց գլխավորած տնային տնտեսություններն ավելի հավանական է, որ բախվեն նյութական զրկանքների, բնակարանային

32 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2023). *Հայաստանի կանայք և տղամարդիկ.* վերցվել է՝ https://armstat.am/file/article/gender-2023.pdf:

անապահովության և սննդի անբավարարության, քան այն տնային տնտեսությունները, որոնք գլխավորում են կանայք և տղամարդիկ միաժամանակ[33]:

Կանանց գլխավորած տնային տնտեսություններում առկա խնդիրներն ու անբարենպաստ կենսական պայմանները մասամբ բխում են լավ վարձատրվող աշխատանքի սահմանափակ հասանելիությունից: Միայնակ շատ մայրեր սահմանափակվում են ոչ ֆորմալ կամ ցածր աշխատավարձով վարձատրվող աշխատանքներ կատարելով՝ խնամքի պահանջարկի և երեխաների խնամքի ծառայությունների բացակայության կամ դրանց անմատչելիության պատճառով: Հայաստանի աշխատաշուկան շարունակում է բնութագրվել սեռային հիմքով մասնագիտական տարանջատմամբ, որտեղ կանայք գերներկայացված են կրթության և առողջապահության ոլորտներում, որոնք թերագնահատված և թերվարձատրվող են: Ավելին՝ սոցիալական պաշտպանության մեխանիզմները բավարար չեն միայնակ ծնող ունեցող ընտանիքների կարիքներին արձագանքելու համար[34]:

Խարանը և մշակութային վերաբերմունքը նույնպես խորացնում են միայնակ մայրերի մարգինալացումը: Ավանդական համայնքներում կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները երբեմն ընկալվում են որպես «անավարտ» կամ բարոյապես կասկածելի, ինչը կարող է հանգեցնել սոցիալական մեկուսացման և ոչ ֆորմալ աջակցության ցանցերին հասանելիության հնարավորությունների նվազեցման: Սա էլ ավելի է սրում նրանց խոցելիությունը և սահմանափակում տնտեսական դիմադրողականության և լիազորությունների զարգացման հնարավորությունները:

Տնային տնտեսություններում գենդերային անհավասարությունը հաճախ թաքնված է «ընտանեկան միասնության»

33 | World Bank Group (2024). *Armenia: Country Gender Assessment.* Retrieved from: https://documents1.worldbank.org/curated/en/099100824162527996/pdf/P179877-90d0c0e9-71f5-456a-a683-a1a576083a16.pdf.

34 | UN Women (2019). *Armenia Country Gender Equality Brief:* Retrieved from: https://eca.unwomen.org/sites/default/files/Field%20Office%20ECA/Attachments/Publications/2020/05/Armenia%20Country%20Gender%20Equality%20Brief.pdf.

վարագույրի հետևում: Տնային տնտեսությունների ներսում ռեսուրսների վերահսկման և բաշխման վերաբերյալ դինամիկան զգալիորեն ազդում է կանանց աղքատության փորձի վրա: Երկծնող ընտանիքներում տղամարդիկ ավելի հավանական է, որ վերահսկեն տնային տնտեսության եկամուտները և կայացնեն ֆինանսական որոշումներ, մասնավորապես գյուղական կամ պահպանողական համայնքներում, որտեղ հայրիշխանական նորմերը խորապես արմատավորված են[35]: Տնտեսական որոշումների կայացման լիազորությունների բացակայությունը կանանց դարձնում է ավելի կախյալ ամուսիններից, ինչի հետևանքով կանայք չեն կարողանում կամ գրեթե չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել իրենց և իրենց երեխաների բարեկեցության վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն տնային տնտեսություններում, որտեղ կանայք ավելի քիչ ֆինանսական ներդրում ունեն ընտանեկան բյուջեում, նրանք ավելի քիչ ազդեցություն ունեն որոշումների կայացման վրա՝ երեխաների կրթությունից մինչև առողջապահական ծախսերի վերաբերյալ[36]: Կանանց չվճարվող աշխատանքը, ինչպիսիք են տնային աշխատանքը և խնամքը, հաճախ չի ճանաչվում որպես ներդրում տնային տնտեսության մեջ, ինչը նրանց դերը ֆինանսական քննարկումներում ավելի է մարգինալացնում: Ավելին՝ տնային տնտեսությունների ներսում ռեսուրսների բաշխումը հաճախ արտոնություններ է տալիս տղամարդ անդամներին, մասնավորապես որդիներին՝ դուստրերի նկատմամբ: Սա կարող է դրսևորվել գենդերային անհավասարության մեջ սննդի, կրթության ոլորտում ներդրումների և նույնիսկ հանգստի կամ անձնական զարգացման հնարավորությունների հասանելիության մեջ: Նման գործելակերպը ոչ միայն կարճաժամկետ հեռանկարում կանանց և աղջիկներին դնում է անբարենպաստ վիճակում, այլև շարունակում է աղքատության և գենդերային անհավասարության միջսերնդային ցիկլերը[37]:

35 | Նույն տեղում:

36 | OECD. (2020). How's Life? 2020: Measuring Well-being. Retrieved from https://documents1.worldbank.org/curated/en/127381468326701628/pdf/846340PUB0Box30Measuring0well0being.pdf.

37 | IMF Working Papers (2016): Gender Budgeting: Fiscal Context and Current Outcomes: Retrieved from: https://www.elibrary.imf.org/view/journals/001/2016/149/article-A001-en.xml

Գենդերային աղքատության[38] վրա միգրացիայի ազդեցության ուսումնասիրության համար կարևոր է նշել, որ տղամարդկանց արտագաղթը Ռուսաստան և այլ երկրներ խոր ազդեցություն ունի Հայաստանում տնային տնտեսությունների կառուցվածքների և աղքատության գենդերային դրսևորման վրա: Քանի որ աշխատանքային տարիքի տղամարդկանց մոտավորապես 10-15%-ը ներգրավված է սեզոնային կամ երկարաժամկետ միգրացիայի մեջ, շատ տնային տնտեսություններ փաստացի ղեկավարվում են կանանց կողմից, նույնիսկ եթե պաշտոնապես չեն ճանաչվել որպես այդպիսին[39]: Մի կողմից՝ աշխատանքային միգրացիայի դիմած ընտանիքի անդամներից ստացված դրամական փոխանցումները կարող են մեղմել աղքատությունը և ապահովել ընտանիքների համար անհրաժեշտ եկամուտը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական աջակցությունը հաճախ անկայուն է, անկանոն կամ ենթակա է արտաքին ցնցումների, ինչպիսիք են աշխարհաքաղաքական լարվածությունը կամ ընդունող երկրներում տնտեսական անկումները: Մյուս կողմից՝ աշխատանքային միգրանտների կանայք պարտավորված են լինում ստանձնել տնային տնտեսության կառավարման, երեխաների դաստիարակության, տարեցների խնամքի հարցերը և երբեմն լրացուցիչ աշխատանքներ. ընտանիքի կարիքների բավարարման հարցերը մեծ մասամբ մնում են բացառապես կանանց վրա: Երկարատև բաժանման հոգեբանական և հուզական հետևանքները, զուգորդված պատասխանատվությունների ավելացման հետ, կարող են լրջորեն ազդել կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա:

Շատ հաճախ տնային տնտեսության տղամարդ ղեկավարների բացակայությունը մեծացնում է կանանց որոշումների կայացման պատասխանատվությունը, բայց առանց ռեսուրսների կամ հասարակական աջակցության աճի: Ավանդական

38 | Գենդերային աղքատությունը վերաբերում է աղքատության անհամաչափ ազդեցությանը կանանց և աղջիկների վրա, որը հաճախ անվանում են «աղքատության ֆեմինիզացում»: Դա անհավասարության մի ձև է, երբ կանայք ավելի հավանական է, որ աղքատ լինեն այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսիք են գենդերային խտրականությունը, կրթության և զբաղվածության անհավասար հասանելիությունը, չվճարվող տնային աշխատանքի բեռը և սոցիալական նորմերը: Սահմանումը՝ ըստ CAP. (2020). *The Basic Facts About Women in Poverty.* Retrieved from https://www.americanprogress.org/article/basic-facts-women-poverty/#:~:text=The%20gender%20wage%20gap&text=For%20every%20$1%20earned%20by%20white%2C%20non%2DHispanic%20men%2C,number%20of%20hours%20they%20work.

39 | Միգրացիայի միջազգային կազմակերպություն. (2012). *Աշխատանքային միգրացիան Հայաստանում. Առկա միտումները և քաղաքականության տարբերակները. Հայաստանում աշխատանքային միգրացիայի կառավարման կարիքների գնահատում.* վերցվել է՝ https://publications.iom.int/books/labour-migration-armenia-existing-trends-and-policy-options-report-needs-assessment-labour-0:

գենդերային նորմերը դեռևս կարող են սահմանափակել նրանց շարժունակությունը, համայնքային գործերին մասնակցությունը կամ գյուղատնտեսական հողերի և վարկերի հասանելիությունը, հատկապես գյուղական վայրերում: Արդյունքում հավելյալ պատասխանատվությունը իրական լիազորությունների վերածելու նրանց կարողությունը դեռևս սահմանափակ է[40]: Ավելին՝ միգրանտ տնային տնտեսություններում կանայք կարող են բախվել իրավական և վարչական խոչընդոտների սոցիալական ծառայություններից օգտվելու հարցում, մասնավորապես, եթե սեփականության վկայականները, բանկային հաշիվները կամ պաշտոնական փաստաթղթերը մնում են բացակայող տղամարդ ընտանիքի անդամի անունով: Այս իրավական կախվածությունը կարող է խոչընդոտել նրանց հասանելիությունը նպաստներին, ժառանգությանը կամ երեխայի խնամքին, հատկապես ամուսնալուծության կամ միգրանտ ամուսնու մահվան դեպքերում[41]:

40 | Նույն տեղում:

41 | BBC. (2011). *Armenia migration: The villages of women left behind.* Retrieved from https://www.bbc.com/news/world-europe-14386472.

Հետխորհրդային տարիներին Հայաստանում մեծացել է նաև կանանց արտագնա աշխատանքային միգրացիան, կամ այլ կերպ ասած՝ աշխատանքային միգրացիան ֆեմինիզացվում է, որը գործազրկության, ծանր սոցիալական իրադրության ուղիղ հետևանք է: Հայաստանցի կանանց համար աշխատանքային միգրացիայի աշխարհագրությունը տարբեր է՝ Ռուսաստանի Դաշնություն, Հունաստան, Իրան, եվրոպական երկրներ, սակայն գերիշխող են Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Թուրքիան, որը արտագնա աշխատանքային վայր է դարձել Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո: Արտագնա աշխատանքը դարձյալ հիմնականում կապված է խնամքի և այլ ծառայությունների մատուցման հետ: Սակայն կին աշխատանքային միգրանտների մասին, առհասարակ, ուսումնասիրություններ գրեթե չկան. կանանց միշտ ներկայացրել են որպես ընտանիքին ուղեկցողի,

ընտանիքը վերամիավորողի: Սակայն, ի տարբերություն տղամարդկանց, կանայք ավելի խոցելի են, հատկապես այնպիսի երկրներում, որտեղ կան մարդու իրավունքների, կանանց իրավունքների ոտնահարումների հետ կապված բազմաթիվ խնդիրներ, կամ այնպիսի երկրների հետ, որոնց հետ չկան դիվանագիտական հարաբերություններ, ինչպիսին, օրինակ, Թուրքիան է[42]:

42 | *Մկրտչյան, Գ. (2024). Աշխատանքային միգրացիան ֆեմինիզացվում է. կանանց դերակատարումը ընտանիքում փոփոխվում է.* վերցվել է՝ https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/the-feminization-of-labor-migration/:

1.2 | Սոցիալական քաղաքականություններ և ծրագրեր

ՀՀ Կառավարությունը 2020 թվականին իր հրապարակած **«Հայաստանի վերափոխման ռազմավարություն-2050»**-ում «աշխատանքը» սահմանում է որպես ազգային արժեք և *«միակ գործիքը, որ հնարավորություն է տալիս իրացնելու կուտակված ստեղծարար ներուժը»*: Ըստ վերափոխման ռազմավարության՝ մինչև 2050 թվականը Հայաստանը պետք է հաղթահարի աղքատությունը աշխատանքով, պետք է ստեղծվի 1,500,000 աշխատատեղ, յոթնապատկվի միջին աշխատավարձը[43]:

Կառավարությունն իր այս ծրագրում կարևորում է կանանց հզորացումն ու գենդերային հավասարությունը և դրան հասնելու համար սահմանում է մի շարք պետական ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը[44]: Ըստ ՀՀ Կառավարության ծրագրի 2024 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի[45]՝ կանանց հզորացման և գենդերային հավասարության ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր ու միջոցառումներ, որոնց արդյունքում, օրինակ, ընտանիքում բռնության ենթարկված 60 կին

43 | *Հայաստանի վերափոխման ռազմավարություն. 2050.* վերցվել է՝ https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf:

44 | *ՀՀ Կառավարության ծրագիր. 2021-2026 թթ.* վերցվել է՝ https://www.gov.am/files/docs/4586.pdf:

45 | *ՀՀ Կառավարության ծրագրի 2024 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց.* վերցվել է՝ http://www.parliament.am/draft_docs8/K-1016_Zekuyc.pdf:

տնտեսական հզորացման բաղադրիչի շնորհիվ վերակրթվել և վերամասնագիտացել է: Ընդլայնվել են մարզերում և Երևանում գործող՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակներն ու մատուցվող ծառայությունները՝ ներառելով կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծառայություններ: Տնտեսական հզորացման ծրագրերն իրականացվել են 6 մարզում: Շահառուների թիվը եղել է 118: 2023 թվականին՝ այս ծրագրի մեկնարկի առաջին տարում, շահառուների թիվը եղել է 72[46]:

2025 թվականի ապրիլին Կառավարությունը հաստատել է **Հայաստանում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը**[47,48]: 2025-2028 թվականների գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը սահմանում է գենդերային քաղաքականության վեց գերակայություն[49], որոնցից երկրորդի առաջնահերթություններն են աշխատաշուկայի, զբաղվածության, տնտեսական զբաղվածության, տնտեսության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների խրախուսումը, աշխատուժի գենդերային խզվածքի նվազեցումը, աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը և այլն[50]:

ՀՀ Կառավարությունն իր այս ռազմավարության շրջանակում որպես անհրաժեշտություն է սահմանում կանանց տնտեսական ակտիվության կայուն աճին և ներառական զարգացմանն ուղղված թիրախային և երկարաժամկետ միջոցառումների իրականացումը[51]:

Ոլորտում առկա հետազոտությունների, ինչպես նաև ներկա իրադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք

46 | Բացի այս ծրագրերից՝ նաև միջոցառումներ են իրականացվել Զինված ուժերում, ինչպես նաև ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման ուղղությամբ: Տե՛ս http://www.parliament.am/draft_docs8/K-1016_Zekuyc.pdf:

47 | Հետք (23 ապրիլի, 2025 թ.). *Հաստատվել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը*. վերցվել է՝ https://www.hetq.am/hy/article/173973:

48 | Կարևոր է նաև նշել, որ ՀՀ-ն շուրջ մեկուկես տարի չի ունեցել գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարություն: ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման նախորդ ռազմավարությունը, որը նախատեսված էր 2019-2023 թվականների համար, ավարտվել էր 2023 թվականի վերջին:

49 | E-draft.am (2025). *«Հայաստանի հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ*. վերցվել է՝ https://www.e-draft.am/projects/6821/about:

50 | Հետք (23 ապրիլի, 2025 թ.). *Հաստատվել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը*. վերցվել է՝ https://www.hetq.am/hy/article/173973:

51 | Arlis.am. (2025). *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը*. վերցվել է. https://new.arlis.am/hy/acts/188061:

(ներառյալ երիտասարդ, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, գյուղաբնակ, տեղահանված, փախստական կամ փախստականի նման կարգավիճակ ունեցող, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող և այլ խոցելի խմբերից) ավելի խոցելի են վերոնշյալ բոլոր հարցերում, և Կառավարությունը կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական կյանքում հավասար ներգրավվածության և առաջխաղացման խթանումը դիտարկում է առանցքային: Այսպես՝ սոցիալ-տնտեսական կյանքում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածության համար նախատեսված միջոցառումների պատշաճ իրականացման արդյունքում Կառավարությունը, ի թիվս այլ փոփոխությունների, ակնկալում է, որ ՀՀ ամբողջ տարածքում ապահովված կլինեն աշխատող ծնողների՝ մայրերի և հայրերի համար երեխաների տարբեր տեսակի խնամքի և ցերեկային ծառայություններ, որոնք կլինեն մատչելի և հասանելի, կմշակվի և ներդրված կլինի չվճարվող խնամքի աշխատանքի վճարման հայեցակարգ, կկրճատվի գենդերային խզվածքը տնային տնտեսության վարման աշխատանքներում՝ ներառյալ երեխայի, ընտանիքի հիվանդ, տարեց անդամի, աջակցության կարիք ունեցող այլ անձանց խնամքի աշխատանքներում, գենդերային խզվածքը կրճատված կլինի նաև տնտեսության տարբեր ճյուղերում և զբաղմունքի տեսակներում[52]: Այս ակնկալվող արդյունքների վրա էլ Կառավարությունը սահմանել է որոշակի ցուցանիշեր, որոնք պետք է արտացոլեն այս ծրագրի իրականացումը, որը, սակայն, չունի հստակ նախնական և վերջնական թվային արտահայտում, ինչն էլ հնարավորություն կտա ռազմավարության իրականացումից հետո գնահատելու, թե որքանով է այն հասել իր թիրախին, ինչպես նաև ռազմավարության իրականացման թվային պատկերը[53]:

Հայաստանի Հանրապետության **ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավա-**

52 | ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի ամփոփ ֆինանսական գնահատականը 443,046,600 դրամ է չորս տարիների համար, որից 124,201,600 դրամը տրամադրվելու է պետական բյուջեից, իսկ 318,845,000-ը վերցվելու է օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Arlis.am (2025). *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը*. վերցվել է՝ https://new.arlis.am/hy/acts/188061: Այսինքն՝ գենդերային քաղաքականության ռազմավարության և միջոցառումների վրա պետությունը մոտակա չորս տարիների ընթացքում պատրաստվում է ներդնելու ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախնական ընդհանուր բյուջեի 1/3-ից էլ քիչ գումար: Սա նախորդ տարիների համեմատ էական առաջընթաց է, բավարար չէ հավակնոտ և կայուն փոփոխությունների իրականացման համար:

53 | Նույն տեղում:

ությունը[54] նպատակ ունի ձևավորելու բնակչության հավասարակշռված և կայուն կառուցվածք՝ միտված մարդկային կապիտալի զարգացմանը և կյանքի որակի բարձրացմանը: Այն ընդգրկում է մարդու կյանքի բոլոր փուլերը՝ նախածննդյան խնամքից մինչև ակտիվ ծերություն, և ուղղված է ժողովրդագրական մարտահրավերների, մասնավորապես ծնելիության նվազման, բնակչության ծերացման և միգրացիայի բացասական հետևանքների հաղթահարմանը:

Ռազմավարության առանցքում մարդն է՝ որպես զարգացման և բարեկեցության հիմնական կրող, իսկ նպատակներն են մարդկային կապիտալի զարգացումը, առողջ կյանքի խթանումը, ընտանիքի բարեկեցության ամրապնդումը, աղքատության նվազեցումը և հավասար հնարավորությունների ապահովումը:

Ռազմավարության մեջ որպես առաջնահերթություններ առանձնացված են նաև կանանց դերակատարության բարձրացմանը, գենդերային հավասարության ապահովմանը և ընտանիքի բարեկեցության ամրապնդմանը ուղղված քաղաքականությունները: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ Հայաստանում նկատվում է գենդերային անհամաչափ բաշխում. թեև բնակչության ընդհանուր թվաքանակը նվազում է, կանայք կազմում են ավելի մեծ մասնաբաժին, ինչը մասամբ պայմանավորված է տղամարդկանց բարձր միգրացիոն հոսքերով: Միաժամանակ, կանանց կյանքի տևողությունն ավելի մեծ է, սակայն նրանք հաճախ բախվում են առողջապահական և սոցիալական ծառայությունների անհավասար հասանելիության խնդիրների: Հետևապես, կանանց առողջությունը ռազմավարության շրջանակում դիտարկվում է որպես հասարակության ընդհանուր «բարեկեցության հիմնասյուն», իսկ պտղաբեր տարիքի կանանց մասնաբաժնի բարձր լինելը՝ որպես «ժողովրդագրական աճի ներուժ»:

54 | E-draft.am (20250. *ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարության գործողությունների ծրագիր.* վերցվել է՝ https://www.e-draft.am/projects/8167/about:

Ռազմավարությունը շեշտադրում է նաև մայրական մահացության նվազեցման, վերարտադրողական առողջության և առողջ կյանքի տևողության բարձրացման կարևորությունը:

Ռազմավարությունը նաև անդրադառնում է այն խնդրին, որ կանայք տղամարդկանցից ավելի քան երկու անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում չվարձատրվող տնային աշխատանքի, երեխաների և տարեցների խնամքի վրա, ինչը սահմանափակում է նրանց հնարավորությունները աշխատաշուկայում: Այս անհավասարակշռությունը պայմանավորված է կրթության և զբաղվածության ոլորտներում առկա խոչընդոտներով, ինչպես նաև երեխայի խնամքի բարձր ծախսերով և ոչ բավարար պետական աջակցության մեխանիզմներով: Այդ համատեքստում փաստաթուղթն առաջարկում է գենդերազգայուն ընտանեկան քաղաքականություն, որը կօգնի կանանց և տղամարդկանց՝ հավասարակշռելու աշխատանքային և ընտանեկան պարտականությունները, կնպաստի չվճարվող աշխատանքի հավասար վերաբաշխմանը և կանանց տնտեսական ներուժի լիարժեք օգտագործմանը: Այս մոտեցումը միաժամանակ դիտվում է որպես գործիք և՛ ծնելիության խթանման, և՛ զբաղվածության ու տնտեսական աճի բարձրացման համար:

Ռազմավարությունը որպես հատուկ առաջնահերթություն է առանձնացնում աղքատության հաղթահարումը՝ դիտարկելով այն որպես ժողովրդագրական կայունության հիմնական գործոն: Այստեղ ևս, ինչպես նախորդիվ ուսումնասիրված քաղաքականություններում, աղքատության հաղթահարման հնարավորությունները սահմանվում են կրթության, զբաղվածության և սոցիալական համակարգերում ինտեգրված փոփոխություններով, որտեղ պետք է հատուկ ուշադրություն դարձվի կանանց և խոցելի խմբերի ներգրավման վրա: Աշխատաշուկայում կանանց ավելի մեծ ներգրավվածությունը

դիտվում է որպես աղքատության կրճատման կարևոր մեխանիզմ:

Ժողովրդագրական ռազմավարությունն ամրապնդում է այն գաղափարը, որ կանանց հզորացումը ժողովրդագրական կայունության և տնտեսական զարգացման առանցքային նախապայման է:

Կանանց կրթության, զբաղվածության և առողջության մեջ ներդրումները ոչ միայն բարելավում են նրանց սոցիալական դիրքը, այլև նպաստում են ընտանիքների բարեկեցությանը, ծնելիության կայունացմանը և աղքատության կրճատմանը:

Այսպիսով՝ ռազմավարությունը միավորում է սոցիալական արդարության, գենդերային հավասարության և տնտեսական զարգացման օրակարգերը՝ որպես Հայաստանի ժողովրդագրական ապագայի ապահովման միավորող հիմք:

Թեև ժողովրդագրական ռազմավարությունն ընդգրկում է լայն հարցեր՝ ծնելիության, առողջության, զբաղվածության և սոցիալական ապահովության ոլորտներում, փաստաթղթի գենդերային բաղադրիչը սահմանափակ է և մեծ մասամբ ձևակերպված է ընդհանուր՝ առանց բավար չափով խորանալու կանանց տնտեսական և սոցիալական իրականության մեջ: Ռազմավարությունն արձանագրում է կանանց չվճարվող աշխատանքի անհամաչափ բեռը, սակայն չի ներկայացնում հստակ մեխանիզմներ այդ խնդրի լուծման համար: Օրինակ՝ բացակայում են նշումներ աշխատանքի և ընտանիքի համատեղման գործիքների մասին՝ ճկուն աշխատանքային ժամանակացույց, հեռավար աշխատանք, ծնողական արձակուրդի հավասար օգտագործման հնարավորություններ տղամարդկանց համար և այլն: Կամ չկա անդրադարձ այն հանգա-

մանքին, որ կանանց համար աշխատաշուկա վերադառնալը երեխայի խնամքի արձակուրդից հետո հաճախ բարդանում է մասնագիտական հմտությունների կորստի և գործատուների խտրական վերաբերմունքի պատճառով:

Մյուս կողմից՝ կանանց զբաղվածության և աղքատության ցուցանիշերը տարբեր են քաղաքային և գյուղական համայնքներում, սակայն ռազմավարությունը քիչ ուշադրություն է դարձնում այս տարածքային անհավասարություններին: Գյուղաբնակ կանայք հաճախ զրկված են ոչ միայն աշխատանքային հնարավորություններից, այլև սոցիալական ծառայություններից, ինչպիսիք են նախադպրոցական հաստատությունների հասանելիությունը կամ տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունը, ինչը նրանց տնտեսական ակտիվության վրա կարող է էական ազդեցություն ունենալ:

Ռազմավարությունն անդրադառնում է ընտանիքի բարեկեցության և խնամքի աշխատանքներին, բայց չի առաջարկում հստակ գործողություններ խնամքի ենթակառուցվածքների՝ մանկապարտեզների, տարեցների խնամքի կենտրոնների, համայնքային ծառայությունների զարգացման ուղղությամբ: Այս բացը հատկապես կարևոր է, քանի որ խնամքի համակարգերի զարգացումը ոչ միայն սոցիալական, այլև տնտեսական նշանակություն ունի՝ ստեղծելով նոր աշխատատեղեր, հիմնականում կանանց համար:

Ավելին, թեև փաստաթուղթը շեշտում է գենդերային հավասարության կարևորությունը, այն չի անդրադառնում գենդերային բռնությանը, որն ունի ինչպես սոցիալական, այնպես էլ ժողովրդագրական հետևանքներ: Կանանց նկատմամբ բռնությունը նվազեցնում է նրանց մասնակցությունը հասարակական և տնտեսական կյանքին, ազդում է նրանց առողջության

և ծնելիության որոշումների վրա, ուստի նման թեմայի բացակայությունը լուրջ թերություն է:

2024 թվականի հոկտեմբերին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց **Ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմանն ուղղված նախագծերի փաթեթները՝** համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքներում ու հարակից օրենքներում: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգը պետք է նպաստի ծայրահեղ աղքատության հաղթահարմանը, սոցիալական աջակցության ծրագրերի արդյունավետության հասցեականության բարձրացմանը, ինչպես նաև պետք է խրախուսի անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը՝ հիմնվելով սոցիալական աջակցության ծառայությունները կարիքին համաչափ տրամադրելու սկզբունքի վրա[55]:

Այս փոփոխությունները, ըստ ԱՄՀՆ-ի, բխում են ՀՀ Կառավարության ծրագրի «Մարդկային կապիտալի զարգացում» ուղղությունից՝ սոցիալական աջակցության հասցեականության բարձրացման նպատակով:

Անապահովության գնահատման համակարգում առաջարկվող այս փոփոխությունները նախարարությունը մեկնաբանում է նրանով, որ նախորդ համակարգն ուներ մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- ցածր հասցեականություն,
- ներառման և բացառման սխալներ,
- խոցելիության գնահատման ոչ օբյեկտիվ մոտեցում,
- աշխատունակ բնակչության պասիվության խթանում,

55 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. (2024). *Ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմանն ուղղված նախագծերի փաթեթները երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ԱԺ-ի կողմից.* վերցվել է՝ https://mlsa.am/news/799:

- թույլ տեղեկատվական փոխգործելիություն[56]:

Այս խնդիրները, ըստ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, հանգեցրել են նրան, որ նպաստներ են ստանում նաև ոչ աղքատ ընտանիքներ, մինչդեռ իրական կարիքավորները հաճախ դուրս են մնում համակարգից: Ավելին, ըստ նախարարության տվյալների, անապահովության գնահատման բանաձևում անուղղակի ցուցանիշերի կշիռները սահմանվել են հիմնականում ինտուիտիվ մոտեցմամբ, ինչի հետևանքով ընտանիքների խոցելիությունը հաճախ գնահատվել է նրանց սոցիալական կարգավիճակի հիման վրա՝ իրական եկամուտների փոխարեն: Սա թույլ է տվել նպաստ ստանալ նաև այն ընտանիքներին, որոնց եկամուտները գերազանցում են աղքատության սահմանը, ինչի արդյունքում համակարգը ավելի շեշտադրել է ձևական խոցելիությունը, քան իրական կենսամակարդակը[57]:

Խնդիրը լուծելու համար առաջարկվում է ներդնել անապահովության գնահատման նոր համակարգ, որի հիմքում կլինի Հիբրիդային ստուգման մեթոդը: Այն թույլ կտա գնահատել ընտանիքի տնօրինվող եկամուտներն ու ունեցվածքը և նպաստի իրավունք տալ միայն այն ընտանիքներին, որոնց եկամուտները չեն գերազանցում պարենային զամբյուղի արժեքը: Այսպիսով՝ նոր համակարգի ներդրմամբ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախատեսում է փոխարինել գործող «ընտանեկան» և «սոցիալական» նպաստները մեկ միասնական՝ «անապահովության նպաստով»: Դրան իրավունք կունենան Կառավարության սահմանած կարգով սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքները, որոնց մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը կլինի անապահովության շեմից ցածր: Շեմը յուրաքանչյուր տարի կհաստատի Կառավարությունը՝ հիմք ընդունելով մեկ չափահաս անձի նվազագույն պարենային

56 | e-draft.am. (2023). Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգը և ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգից բխող՝ ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը փոխանցվող (առկայության դեպքում՝ փոխգործելիության հարթակի միջոցով) թվային տվյալների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշման նախագիծ. հիմնավորում. վերցվել է՝ https://www.e-draft.am/projects/5830/justification:

57 | Նույն տեղում:

զամբյուղի արժեքը, այսինքն՝ ծայրահեղ աղքատության սահմանը[58]: Անապահովության գնահատման նոր համակարգը 2025 թվականի մարտից ներդրվել է պիլոտային եղանակով Սյունիքի և Կոտայքի մարզերում: Նոր սոցիալական աջակցության համակարգի նախագծին մի շարք փորձագետներ և կառույցներ քննադատաբար են մոտեցել՝ նշելով, որ այն չի վերացնում գործող համակարգի հիմնական թերությունները, այլ որոշ դեպքերում նույնիսկ խորացնում է դրանք: Քննադատությունները վերաբերում են ինչպես մեթոդաբանական, այնպես էլ սոցիալական արդարության խնդիրներին:

Նախ, որպես հակադրություն նախարարության կողմից տրված հիմնավորումների, շարունակում է գործել անապահովության գնահատման նույն տրամաբանությունը, որի հիմքում անուղղակի ցուցանիշերն են՝ ընտանեկան կազմ, բնակարանային պայմաններ, սոցիալական կարգավիճակ և այլն: Այս մեթոդը, ըստ մասնագետների, հաճախ չի արտացոլում ընտանիքների իրական եկամուտներն ու կարիքները, ինչի հետևանքով նպաստներ են ստանում ոչ աղքատ ընտանիքներ, մինչդեռ իսկապես կարիքավորները դուրս են մնում համակարգից[59]: Բացի այդ՝ քննադատվում է նպաստառու համարվելու սահմանաչափերի փոփոխության եղանակը. օրինակ՝ ընտանիքի անապահովության սահմանագծի վերանայումն առանց հստակ սոցիալ-տնտեսական հիմնավորման կարող է նվազեցնել օգնություն ստացողների թիվը՝ առանց նրանց կենսապայմանների իրական բարելավման: Քննադատության մեկ այլ ուղղություն վերաբերում է այն հանգամանքին, որ նախագիծը չափազանց մեծ նշանակություն է տալիս «սոցիալական կարգավիճակով խոցելիությանը»՝ անտեսելով իրական եկամուտներն ու ծախսերը: Արդյունքում նպաստների բաշխումը մնում է ոչ թե սոցիալ-տնտեսական տվյալների վրա հիմնված քաղաքականություն, այլ ինտուիտիվ մոտեցումների հետևանք:

58 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (2024). *Ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմանն ուղղված նախագծերի փաթեթները երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ԱԺ-ի կողմից*. վերցվել է՝ https://mlsa.am/news/799:

59 | Խաչիկյան, Մ. (2025). *Անապահովությունը գնահատելիս պետությունն ընտանիքին ենթադրյալ եկամուտ է վերագրում. նոր համակարգի նորամուծությունները*. վերցվել է՝ https://infocom.am/10009394/:

Ընդհանուր առմամբ, քննադատությունը վերաբերում է նաև նրան, որ առաջարկվող բարեփոխումները չեն ապահովում սոցիալական աջակցության արդար և թիրախային բաշխում, չեն նվազեցնում աղքատության մակարդակը և կարող են նույնիսկ խորացնել «գենդերային և տարածքային անհավասարությունները»՝ հատկապես գյուղական ու բազմազավակ ընտանիքների շրջանում[60]:

60 | Նույն տեղում:

Առաջարկող բարեփոխումներն անտեսում են այլ ինստիտուցիոնալ խնդիրներ ևս, մասնավորապես անօթևանության հարցը: Անօթևանները դուրս են մնում սոցիալական աջակցության համակարգից, քանի որ անապահովության գնահատման մեխանիզմը չի ճանաչում «անօթևանի» կարգավիճակը՝ որպես անապահովության ցուցանիշ: Ինքնաշխատ համակարգը, որը որոշում է նպաստառու համարվելու իրավունքը, անտեսում է ծայրահեղ խոցելիությունը, մասնավորապես բնակարան չունեցող անձանց պարագայում: Արդյունքում մարդիկ, որոնք իրականում սոցիալական ամենացածր շերտերում են, մերժվում են՝ չհավաքելով անհրաժեշտ միավորներ[61]:

61 | Epress.am. (2025). *Պետության համար անօթևանները հաշիվ չեն.* վերցվել է՝ https://epress.am/2025/09/19/state-does-not-care-about-the-homeless.html:

Այսպիսով՝ Հայաստանում իրականացվող սոցիալական աջակցության համակարգի բարեփոխումները նպատակ ունեն նպաստների տրամադրումն ավելի թիրախային և արդար դարձնելու՝ օգտագործելով ինքնաշխատ գնահատման մեխանիզմներ և թվայնացված գործընթացներ: Նոր համակարգը հիմնված է միավորային գնահատման մոդելի վրա, որտեղ անապահովության աստիճանը որոշվում է ընտանեկան կազմի, սոցիալական կարգավիճակի, գույքի և բնակարանային պայմանների վերաբերյալ տվյալներով:

Սակայն մի շարք փորձագետներ և քաղաքացիական կառույցներ քննադատում են այս մոտեցումը՝ ընդգծելով, որ այն

պահպանել է հին համակարգի մեթոդաբանական թերությունները: Գլխավոր մտահոգությունն այն է, որ անուղղակի ցուցանիշերի գերակայությունը հանգեցնում է իրավիճակի, երբ իրական կարիքավորները շարունակելու են դուրս մնալ համակարգից, քանի որ հաշվի չեն առնվելու նրանց խոցելիությունները:

1.3 | Աղքատության քաղաքական ընկալումը

Աղքատությունը հանրային և քաղաքական քննարկումների առանցքային թեմաներից է: Այս քննարկումները ոչ միայն վերաբերում են աղքատության պատճառներին, հետևանքներին և հնարավոր հաղթահարման ուղիներին, այլև ներկայացնում են աղքատության ընկալման տարբեր ձևեր: Աղքատության շուրջ գերիշխող քաղաքական դիսկուրսները և ընկալումները ոչ միայն պայմանավորում են ոլորտային քաղաքականությունները և որոշումները, այլև ազդում են հանրային ըմբռնումների ու դիրքորոշումների ձևավորման վրա: Դրանք ընդգրկում են մի շարք տեսանկյուններ՝ սկսած համակարգային անհավասարությունները շեշտող կառուցվածքային բացատրություններից մինչև անձնական բացթողումների վրա կենտրոնացած հիմնավորումներ: Քաղաքական գերակա դիսկուրսները և քննարկումները ոչ միայն փոխլրացնում են միմյանց, այլև մրցակցում են իրար հետ: Այսպես՝ հիմնական մրցակցությունը երկու հիմնական դիսկուրսների միջև է. մի կողմից՝ այն, որ աղքատությունը համակարգային խնդիր է, և մարդկանց ու տնային տնտեսություններին աղքատության մեջ գցող և պահող գլխավոր գործոնները կապված են կառուցվածքային խնդիրների հետ, ինչպիսիք են կրթության և առողջապահության սահմանափակ

հասանելիությունը, մյուս կողմից՝ նեոլիբերալ մոտեցումը, որը շեշտը դնում է անհատական պատասխանատվության (անձնային հատկանիշեր, աշխատանքային էթիկայի բացակայություն, աղքատների ծուլություն, աշխատելու ցանկության բացակայություն և այլ նմանօրինակ ձևակերպումներ) և շուկայական լուծումների անհրաժեշտության վրա, որը խրախուսում է պետության միջամտության նվազեցումը՝ կենտրոնացնելով ուշադրությունը անհատական ջանքի և ինքնաբավության վրա:

Այս երկու հիմնական ընկալումներն արտացոլվում են նաև հայաստանյան քաղաքական մտքում: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը աղքատության թեմային անդրադառնում է հիմնականում մի քանի դիտանկյունից՝ աշխատանք, կրթություն, տնտեսական զարգացում և զբաղվածության խթանում, ինչպես նաև անհատական ջանքի կարևորություն: Վարչապետը բազմիցս ընդգծել է, որ աղքատության հաղթահարման և անհատի բարեկեցության համար աշխատանքը գլխավոր նախապայմանն է, և որ անձը կարող է հաղթահարել աղքատությունը միայն աշխատանքի միջոցով: Այս դիրքորոշումը ենթադրում է, որ աշխատանքի բացակայությունը համարվում է անձնական ընտրության հետևանք, ինչը աղքատության պատճառը կապում է անհատի վարքագծի և ջանքերի հետ՝ տեղ չթողնելով համակարգային կամ կառուցվածքային պատճառների համար. *«...Մեր խնդիրն է աղքատությունն ու ծայրահեղ աղքատությունը հաղթահարել: Մարդը լսում է, ասում է՝ վայ, այս ինչ լավ բան է արել, իլը այն երկու դիվանը քանդենք, մեկը հավաքենք, որ ավելի հարմար պառկենք, որ շուտով կառավարությունը մեր ծայրահեղ աղքատությունը հաղթահարելու է: Ո՛չ, ժողովուրդ ջան, աղքատությունը կլինի ծայրահեղ, թե որևէ այլ, հաղթահարվում է աշխատանքով* [խմբ.՝ շեշտադրված վանկերով]*: Մենք մարդուն պետք է ասենք շատ ուղիղ՝ հարգելի՛ս, եթե դու աշխատունակ ես,*

սա շատ կարևոր բան է, ուրեմն քո աղքատությունը դու ինքդ պետք է հաղթահարես քո աշխատանքով: Եթե դու չես ուզում աշխատես, աղքատությունը քո ընտրությունն է, ոչ ոք պարտավոր չէ գնալ առավոտից երեկո աշխատել, որ դու քո յոթ անգամ ռեմոնտ արած դիվանի վրա պառկես ու սերիալ նայես կամ թոք-շոուներ նայես: Վե՛ր կաց, աշխատի՛: Չե՞ս աշխատում, ուրեմն աղքատությունը քո ընտրությունն է...»[62]:

Փաշինյանը նման հայտարարություններ արել է բազմիցս: Թեև, մի կողմից, կարող է թվալ, թե նա փորձել է վերլուծել աղքատության պատճառահետևանքային կապերը, մյուս կողմից՝ նրա համոզմունքը, որ աշխատանքն է աղքատությունը հաղթահարելու միակ միջոցը, թույլ չի տալիս խնդիրը դիտարկել առավել լայն տեսանկյունից և ընդունել կառուցվածքային ու համակարգային գործոնների ազդեցությունը. *«...Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին համապատասխան հանձնարարական տվել եմ, որ մեր աղքատության կառուցվածքը պետք է խորը վերլուծենք և աղքատության հաղթահարման ռազմավարությունը մշակենք գաղափարախոսության շրջանակներում: Մեր գաղափարախոսությունը, իմ համոզմունքը հետևյալն են՝ աղքատությունը հնարավոր է հաղթահարել միայն աշխատանքի միջոցով: Աղքատությունը հաղթահարելու այլ տարբերակ չկա...»*[63]: Այս համատեքստում կարևոր է նշել, որ աշխարհում աղքատ բնակչության մեծ մասը զբաղված է, ինչը ցույց է տալիս, որ նրանց աշխատանքը բավարար եկամուտ չի ապահովում նույնիսկ հիմնական կարիքները հոգալու համար: Հայաստանում ծայրահեղ աղքատ բնակչության ավելի քան մեկ հինգերորդը զբաղված է, իսկ աղքատ, բայց զբաղված բնակչության մասնաբաժինը 45–47% է (Խալաթյան, Մարգարյան, 2023): Հետևաբար Փաշինյանի այն պնդումը, որ աշխատանքը աղքատությունը հաղթահարելու միակ միջոցն է, ռելևանտ չէ զբաղված բնակչության գրեթե կեսի համար:

62 | Նիկոլ Փաշինյան (2025). *Աղքատությունը հաղթահարում են աշխատանքով*. վերցվել է՝ https://www.facebook.com/reel/1290825092069944:

63 | Armenpress.am (2022). *Աղքատությունը հնարավոր է հաղթահարել միայն աշխատանքի միջոցով. վարչապետը հանձնարարեց ռազմավարություն մշակել*. վերցվել է՝ https://armenpress.am/hy/article/1098589:

Կրթության և աղքատության փոխադարձ կապին անդրադառնալիս Փաշինյանը պարզորեն շեշտում է կրթական համակարգում առկա խնդիրները[64]՝ միաժամանակ մեղադրանքի ուղղությունը կրկին տեղափոխելով համակարգից դեպի անհատը: Նրա խոսքում ակնհայտ է հորդորը մարդուն՝ սեփական կենսագրության մեջ հետ նայել և որոնել, թե կրթական որ փուլում է «սխալվել» կամ «բացթողում» արել, որը, ենթադրաբար, նրան բերել է աղքատության վիճակի[65]:

Սակայն այս մոտեցումը հիմնված է աղքատության չափազանց նեղ ընկալման վրա: Աղքատությունը հաճախ դրվում է մեկ չափողականության՝ եկամտի կամ սպառման մեջ, և աշխատանքը ներկայացվում է որպես այն հաղթահարելու գլխավոր միջոց: Փաշինյանի դիտարկումներն էլ հիմնականում տեղավորվում են այս ավանդական տրամաբանության մեջ: Այդուհանդերձ, աղքատությունը նման չափողականությամբ սահմանելը խիստ նեղացնում է խնդրի բարդությունը:

Ժամանակակից հետազոտողները և սոցիալական քաղաքականություն մշակողները աշխարհում և Հայաստանում աղքատության գնահատման համար վաղուց արդեն կիրառում են բազմաչափ մոտեցումներ: Բազմաչափ աղքատության գնահատումը հնարավորություն է տալիս դիտարկելու այն իր բազմաբնույթ գործոններով հանդերձ՝ վերհանելով ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, կենցաղային, առողջապահական և կրթական շերտերը: Այս համատեքստում կրթությունը կարևորագույն չափողականություններից մեկն է: Դրա շրջանակում ուսումնասիրվում են միջնակարգ կրթության առկայությունը, կրթական հաստատություն պարտադիր հաճախելու իրականացված կամ խաթարված իրավունքը, կրթական ծառայությունների որակը, ինչպես նաև կրթության մատչելիությունն ու աշխարհագրական անհավասարությունները[66]:Հետևաբար նման

64 | Հայկական ժամանակ (2023). *Աղքատության հիմնական պատճառը կրթության և դրա որակի բացակայությունն է. Նիկոլ Փաշինյան*. վերցվել է՝ https://armtimes.com/hy/video/21724:

65 | Հայկական ժամանակ (2025). *Ով չի կարողանում ապրի, պետք է հետ գնա, տեսնի՝ կրթության որ փուլում է այդ պրոբլեմն առաջացել. վարչապետ*. վերցվել է՝ https://armtimes.com/hy/article/310546:

66 | ՀՌԿԿ Հայաստան (2022). *Բազմաչափ աղքատություն. Լոռիում, Շիրակում և Տավուշում համայնքային մակարդակով իրականացված հետազոտություն*. վերցվել է՝ https://crrc.am/wp-content/uploads/2022/06/MPI-and-CVI_PPT_Arm.pdf:

պարզեցված հայտարարությունները ոչ միայն ստեղծում են մակերեսային պատկերացում աղքատության բարդ և կառուցվածքային բնույթի մասին, այլև շեղում են ուշադրությունը այն համակարգային խնդիրներից, որոնց լուծումը պետության ձեռքերում է, և որը կարող է իրականում նվազեցնել աղքատության մակարդակը և բարելավել մարդկանց կյանքի որակը: Բացի այդ՝ Փաշինյանի՝ աղքատության վերաբերյալ հրապարակային հայտարարությունների մի զգալի հատված տեղավորվում է «աղքատը մեղավոր է սեփական աղքատության համար» նարատիվի շրջանակում: Այս թեզը հաճախ հիմնավորվում է նրա անձնական փորձառությամբ. ինքն իրեն ներկայացնելով որպես մարդ, որը հաղթահարել է աղքատությունը՝ նա ենթադրում է, որ այդ ճանապարհը հավասարապես հասանելի է բոլորին: Այս տրամաբանության մեջ աղքատության հաղթահարումը, ըստ նրա, պետք է սկսվի ոչ թե կառուցվածքային պայմանների փոփոխությունից, այլ «մարդու գլխում» աղքատության հաղթահարումից՝ որպես ներքին սահմանափակման հաղթահարում. *«...Ասում եմ՝ աղքատությունը մեր գլուխներում է: Ես սա ասում եմ որպես մի մարդ, որ այդ ամբողջ ճամփան ծայրից ծայր անցել է: Եվ սա ասում է մի մարդ, որը 1991 թվականին, երբ Երևանի պետական համալսարանի ուսանող է դարձել, իր ընտանիքն ի վիճակի չի եղել իր ուսման վարձը վճարի: Եվ ես ասում եմ՝ այո՛, աղքատությունը մեր գլուխներում է, և ես սա ասում եմ որպես մի մարդ, որ իմ գլխում հաղթահարել եմ: Իմ գլխում հասկացել եմ, թե ինչ է նշանակում քաղաքացին...»*[67]:

Աղքատ մարդկանց աղքատության մեջ մեղադրելով՝ անտեսվում են այն կառուցվածքային և համակարգային գործոնները, որոնք ձևավորում և վերարտադրում են աղքատությունը: Այս մոտեցումը միաժամանակ նպաստում է աղքատության «նորմալացման» դիսկուրսին, որը ներառում է այնպիսի նարատիվներ, ինչպիսիք են՝ *«աղքատությունը բնական և*

67 | Gov.am (2019). *Վարչապետ Նիկոլ Փաշինյանի եզրափակիչ ելույթը ՀՀ Ազգային ժողովում.* վերցվել է՝ https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/02/14/Nikol-Pashinyan-Final-Speech/:

անխուսափելի է», «աղքատներն իրենք են մեղավոր իրենց աղքատության համար», «աղքատ լինելը ամոթ է»: Արդյունքում պատասխանատվության ամբողջ ծանրությունը դրվում է անհատի վրա՝ աղքատության իրական պատկերը ոչ թե բացահայտելով, այլ, հակառակը, «մեղմելով» և վերածելով անհատական թերությունների ներկայացման, այլ ոչ թե համակարգային անհավասարությունների լուծման խնդրի[68]:

Աղքատությանը վերաբերող այս անհատականացնող նարատիվն ամրապնդում է «արդար աշխարհի» մոլորեցնող գաղափարը, ըստ որի՝ մարդիկ ստանում են այն, ինչին «արժանի» են: Այս պատկերացումը աղքատ մարդկանց բնորոշում է որպես ծույլ, անպատասխանատու կամ անհաջողակ և աղքատությունը ներկայացնում է որպես անձնական ձախողում՝ մոռացության մատնելով այն, որ աղքատությունը մեծ մասամբ ձևավորվում է քաղաքական որոշումների, կառուցվածքային խտրականության, տնտեսական անհավասարության և պատմական անարդարությունների հետևանքով (Walker, Smith, 2017): Բացի համակարգային պատճառների վերացումից՝ այս մոտեցումը կարող է ունենալ լուրջ հոգեբանական հետևանքներ աղքատության մեջ ապրող մարդկանց համար: Հետազոտությունները ցույց են տալիս, որ աղքատության պիտակավորումը մեծացնում է ամոթի և անօգնականության զգացումը, սոցիալական մեկուսացումը և խորացնում է մեկուսացումն ու ընկճվածությունը: Այս ամենը նվազեցնում է մարդկանց մոտիվացիան՝ դիմելու օգնության, ներգրավվելու համայնքային կամ հանրային գործընթացների մեջ կամ ձևակերպելու պահանջներ՝ ուղղված իրենց սոցիալական պայմանների բարելավմանը:

Աղքատության հարցի դիսկուրսիվ մակարդակում Նիկոլ Փաշինյանը հաճախ կենտրոնանում է սոցիալական աջակցության ծրագրերի վրա՝ դրանք ներկայացնելով որպես

68 | Թադևոսյան, Ա. (2018). *Անհավասարության դիսկուրսը և աղքատության հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանում.* Բուն TV, վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=sMHXeL7pcNM&t=1s:

աղքատության պահպանման կամ խրախուսման գործոն: Նա քննադատում է այդ ծրագրերի տրամաբանությունը՝ պնդելով, որ ոչ բավարար հասցեականությունը կամ դրանց սխալ իրականացումը ապամոտիվացնում է մարդկանց և թույլ չի տալիս դուրս գալ աղքատության «ցիկլից»: Ավելին՝ սոցիալական քաղաքականության վերաբերյալ իր տարբեր, երբեմն միմյանց հակասող հիմնավորումներում Փաշինյանը կրկին հղում է անում սոցիալական աջակցության ծրագրերին՝ ընդգծելով, որ դրանցում ընդգրկված անձանց մի զգալի մասը, ըստ իրեն, իրականում աղքատ չէ և աջակցության իրական կարիք չունի: Արդյունքում այդ թեզը ներկայացվում է որպես որոշակի ծրագրերի փոփոխության, սահմանափակման կամ չեղարկման հիմնավորում. *«Ունենք սոցիալական անապահովության գնահատման համակարգ, որը ավանդաբար եղել է մեր երկրի ամենակոռումպացված տեղերից մեկը: Մարդու սոցիալական վիճակի գնահատումը տեղի է ունենում սուբյեկտիվ: Ընդ որում՝ ունենք բազմաթիվ ընտանեկան կամ աղքատության նպաստ ստացող մարդիկ, որոնք կարող են բանկերում ընդհուպ մի քանի միլիոնի ավանդներ ունենալ ու տոկոսներ ստանալ»*[69]:

Ամփոփելով Նիկոլ Փաշինյանի՝ աղքատության վերաբերյալ դիսկուրսի քննությունը՝ կարելի է արձանագրել, որ նրա դիտարկումների հիմքում աշխատանքը, կրթությունը և անհատական պատասխանատվությունը դրված են որպես աղքատության հիմնական հաղթահարման միջոցներ: Այս մոտեցումը մեծապես պայմանավորված է նրա անձնական պատկերացումներով և սեփական կենսափորձով: Փաշինյանը պնդում է, որ աղքատությունը պետք է հաղթահարել ոչ թե սոցիալական աջակցության, այլ կրթության, աշխատասիրության և «ազնիվ աշխատանքի» միջոցով: Նրա ելույթներում հաճախ հնչում է այն գաղափարը, որ աղքատությունը նախ և առաջ «մարդու գլխում է», և որ այն

69 | Armenpress.am. (2025). *Պետությունը ոչ մեկի գրպանը չի մտնում. Փաշինյանը ներկայացրեց հայտարարագրման նպատակը*. վերցվել է՝ https://armenpress.am/hy/article/1210156:

վերացնելու համար անհրաժեշտ է փոխել մտածողությունը, ինքնուրույն ջանք գործադրել և ինքնաբավ դառնալ: Այս տրամաբանության մեջ պետության դերը սահմանափակվում է հնարավորությունների ստեղծմամբ, մինչդեռ այն չպետք է, ըստ վարչապետի, փոխարինի անհատական նախաձեռնությանն ու ջանքին: Սակայն այս դիսկուրսը խնդրահարույց է այնքանով, որ աղքատության հաղթահարման պատասխանատվության զգալի մասը նա տեղափոխում է անհատի վրա՝ հաճախ անտեսելով աղքատության խորքային, կառուցվածքային և համակարգային պատճառները: Արդյունքում սոցիալ-տնտեսական անհավասարությունների, սահմանափակ հասանելիության, քաղաքական որոշումների կամ կառուցվածքային խոչընդոտների ազդեցությունը մղվում է երկրորդ պլան, մինչդեռ հենց դրանք են աղքատության ձևավորման և վերարտադրության հիմնական գործոնները: Միաժամանակ, Փաշինյանը հաճախ է քննադատում նախկին սոցիալական համակարգը՝ այն համարելով ոչ նպատակային և աղքատությունը վերարտադրող: Նա հատկապես ընդգծում է, որ սոցիալական ապահովության ծրագրերը արդյունավետ չեն եղել, մարդուն մղել են ավելի շատ անգործության և ոչ մի բան չանելու, քան խթանել են աղքատությունից դուրս գալու փորձերը: Ուստի Կառավարությունը հայտարարում է, որ իր նպատակը սոցիալական աջակցության հասցեականության բարձրացումն է և աշխատունակ մարդկանց ներգրավումը աշխատաշուկայում՝ որպես բարեկեցության և աղքատությունից դուրս գալու հիմնական միջոց:

ԲԱԺԻՆ 2 | 2.1 | Կանանց ընտանեկան դրությունը և պայմանները՝ որպես աղքատության ցուցիչ

Աղքատությունը հիմնականում չափվում է տնտեսական գործոններով և դրանցով պայմանավորվածությամբ, սակայն ավելի խոր համատեքստում այն բազմաչափ երևույթ է՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով: Բազմաչափ աղքատության գնահատման հիմքում ընկած են հիմնական կարիքները, բնակարանային պայմանները, կրթությունը, աշխատանքը և առողջապահությունը[70]: Աղքատության բազմաչափությունը, նշվածներից զատ, պայմանավորված է նաև մարդու խոցելիությամբ հնարավոր ռիսկերի նկատմամբ և անպաշտպանվածությամբ այդ ռիսկերից, որոնք ներառում են ինչպես գլոբալ ռիսկերն ու ճգնաժամերը (Justino, 2012), այնպես էլ անձնական՝ ներընտանեկան իրավիճակը, բռնության միջավայրը[71] և այլն: Թեև բազմաչափ աղքատության ցուցանիշերը հիմնականում դուրս են բերվում տնային տնտեսության համընդհանուր չափմամբ, այս հետազոտության առանցքում միայն կանայք են իրենց սոցիալական դրությամբ՝ ընտանեկան կարգավիճակով, բռնության փորձառությամբ, կրթական և առողջության խնդիրներով, կյանքի կազմակերպման սովորություններով:

Հետազոտությանը մասնակցած կանանց պատմությունները սկսվում են հենց այս հիմնահարցերի շուրջ քննարկումներից՝ ծնողական ընտանիքի պատմությունից մինչև սոցիալական վիճակ, բնակարանային պայմաններ, բռնություն, կրթություն, առողջություն և առօրյա կյանքի կազմակերպում: Ընտանիքը, նրա պայմաններն ու ներքին հարաբերությունների բնույթը ձևավորում են կանանց սոցիալական կարգավիճակի հիմնական միջավայրը: Մասնակիցների պատմությունների մեծ մասում աղքատության թեման բացվում է իր շղթայա-

70 | ՀՌԿԿ Հայաստան (2022). *Բազմաչափ աղքատություն. Լոռիում, Ծիրակում և Տավուշում համայնքային մակարդակով իրականացված հետազոտություն.* վերցվել է՝ https://crrc.am/wp-content/uploads/2022/06/MPI-and-CVI_PPT_Arm.pdf:

71 | UN Women. (2020). *Progress of the World's Women 2019–2020: Families in a Changing World.*

կան և համակարգային ամբողջ խորությամբ: Աղքատության այդ համակարգային բնույթն արտահայտվում է նրանում, որ կանայք սոցիալական ու ֆինանսական դժվարությունները հիշում են դեռ ծնողական ընտանիքի փորձից, ապրում են դրանցով ներկայում և լուրջ անհանգստություն են հայտնում իրենց երեխաների ապագայի համար: Այս իմաստով ծնողական ընտանիքը, ինչպես նաև դրա ներքին կառուցվածքն ու փոխհարաբերությունների բնույթը, ձևավորում են կանանց կյանքի ուղիները և դառնում նրանց սոցիալական և անձնական զարգացման վրա ուղղակի ազդեցություն ունեցող հիմնական գործոններ:

Աղքատության գիտական չափման սանդղակներից ու տարբեր մոտեցումներից բացի՝ կանայք իրենց առօրյայի միջոցով ձևակերպում են նաև աղքատության իրենց՝ շոշափելի չափանիշերը: Այդ չափումները տատանվում են, օրինակ, *սեպտեմբերի 1-ին երեխաներին հագուստով ապահովել կարողանալուց կամ չկարողանալուց, քաղաքի ծայրամասից երեխաներին կենտրոն տանելու տրանսպորտային դժվարություններից, Նոր տարուց հետո միս չուտելու փաստից, չունեցած պայմաններում ունեցածը կիսելու պատրաստակամությունից մինչև ծնողների ծննդյան համար ընդամենը 3000 դրամի սահմաններում նվեր գնելու հնարավորությունը և այլ նման իրավիճակներ:*

Աղքատության պայմաններում ապրող ընտանիքներում կանայք ստիպված են լինում գործադրել խիստ կազմակերպվածության և ֆինանսական գրագիտության հմտություններ՝ սննդի, հագուստի, դեղորայքի և մյուս կենսական ծախսերի կառավարումն ապահովելու համար: Նրանց առօրյան բնութագրվում է հաշվարկվածության ու խնայողության պրակտիկաներով, որոնք միաժամանակ արտահայտում են ինչպես պատասխանատվություն, այնպես էլ գոյատևման ռազմավարություն:

«Մենք չէինք տեսել դեռ ֆանտանները: Գնացինք, մինչև երեկոյան ժամը 21:30 նստեցինք, մեր բախտից ֆանտանները չաշխատեցին: Ասում են՝ մամա, բա հիմա ինչո՞վ ենք գնալու [տուն], ասացի՝ տաքսիով, երեխեք ջան: Մեզ համար գերծախս էր, բայց 300 դրամ տրանսպորտին էինք տալու, 400 դրամ ավել տվեցինք, մեկ-մեկ հատ էլ իրեց պաղպաղակ առանք, հրապարակում ման եկանք»:

Գյումրի, տնտեսությունը միայնական վարող կին (1)

Միաժամանակ, սոցիալական բարդ պայմաններում մեծացած երեխաները նույնպես բախվում են աղքատության և խտրականության հետևանքներին ինչպես դպրոցում, այնպես էլ այլ սոցիալական միջավայրերում՝ հասակակիցների, մեծահասակների և ուսուցիչների կողմից: Աղքատության մասին հիշեցումները, մարգինալացումը և «աղքատ ընտանիքի երեխա» պիտակը վերարտադրում են նրանց խոցելիության զգացումը:

«Իմ աղջիկը պարի էր գնում: Ուսուցչուհին քաղաքից էր գալիս: Վարձն ուշացրել էի, ասել էր՝ վարձը ե՞րբ եք բերելու: Աղջիկս ասել էր՝ տատիկը թոշակ ստանա, կբերենք: Ամբողջ խմբի մոտ ասել էր՝ հա դե, դուք աղքատ եք: Լաց ու կոծ, ես էլ պարի չեմ գնա, ամբողջ խումբն ինձ ասում է՝ դու աղքատ ես»:

Շիրակի մարզ, գյուղ Ոսկեհասկ, միայնակ մայր

Այս պայմաններում կանայք երեխաների կարիքներն ու պահանջմունքները ձևակերպում են որպես սոցիալ-տնտեսական կարգավիճակ չճանաչող, նաև ժամանակի պահանջ և հանրային սպասելիքների հետ համընթաց գնալու սովորություն:

«Հարցեր կան, որ, անկախ սոցիալական վիճակից, պետք է անես: Չես կարող ասել՝ չկա, որովհետև Շիրակի մարզում, Գյումրիում ես: Երեխան հագնել է ուզում: Հիմիկվա դպրոցը, հիմիկվա երեխեքը հագ ու կապին շատ են ուշադրություն դարձնում: Ա՛յ, դրանից եմ նեղվում, կուզեի՝ գոնե երկու-երեք փոխնորդ ունենան, չեմ ասում՝

պահարանը լցված լինի: Գոնե ամեն սեզոնին իրենց հարմար հագուստ, ոչ թե հարմարեցնեի»:

Կանանց առօրյայի շուրջ քննարկումներում առաջնային տեղ են զբաղեցնում տնային և կենցաղային գործերի կազմակերպման հարցերը: Կանանց օրվա առանցքը տնային գործերն են՝ կենցաղավարությունը, իսկ հանգստի պլանավորումը գրեթե բացակայում է: Ծատերի պատմություններում նշվում է «ոչինչ չհասցնելու» մշտական զգացումը, որը նրանց հոգեբանական ծանրաբեռնվածության կարևոր ցուցիչ է: Հանգստի վերաբերյալ խոսակցությունները հաճախ մնում են փակ և ճնշված՝ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պայմաններում: Սոցիալական ծանր վիճակում և անչափահաս երեխաների կամ մեծահասակների խնամքի կազմակերպման պայմաններում կանայք հաճախ անտեսում են սեփական հոգեկան առողջությունը: Այն կանայք, որոնք խնամում են առողջության խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող երեխաների, հանգիստը դիտարկում են ոչ թե որպես վերականգնման հնարավորություն, այլ որպես լրացուցիչ տագնապի աղբյուր: Միայնակ մայրերի պատմություններում, հատկապես այն դեպքերում, երբ նրանք ապրում են մեծ ընտանիքներում, հաճախ բարձրաձայնվում է երեխայի հետ միայնակ լինելու ցանկության և հանգստանալու հնարավորության բացակայության մասին: Նման իրավիճակներում մասնագիտական աջակցության հնարավորությունները թերագնահատված են կանանց կողմից: Կանանց հանգստի պատկերացումներն առավելապես կապված են մշակութային ժամանցի ձևերի հետ՝ ֆիլմ դիտել, թատրոն այցելել: Սակայն ֆինանսական սահմանափակումները զգալիորեն խոչընդոտում են այդ հնարավորությունները:

«Էնպես չի, որ չունենք: Շատ լավ թատրոն էլ ունենք, կինոներ էլ են լինում հետաքրքիր: Ուղղակի չես հասցնում: Եթե 3000 դրամ

Գյումրի, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կին (1)

պետք է տաս թատրոնի տոմսի համար, մտածում ես՝ չէ՛, էսօրվա դեղերս առնեմ»:

Միայնակ կամ ամուսնալուծված մայրերի օրվա խիստ գրաֆիկը, աշխատանքի և երեխաների խնամքի համադրումը հատկապես բարդացնում են հանգստի կամ սեփական կարիքների մասին մտածելու հնարավորությունը: Նրանց համար երբեմն աշխատանքը դառնում է ոչ միայն տնտեսական անհրաժեշտություն, այլև սոցիալական և ֆինանսական անհանգստություններից շեղվելու ձև:

Ընտանիքի մասին կանանց զրույցները ուղղակիորեն հանգեցնում են բռնության հարցերի բարձրաձայնման, ամուսնալուծության պատմությունների և սոցիալական անարդարության հարցերի մասին մտորումների: Տարբեր ուսումնասիրություններ, որոնք իրականացվել են կանանց շրջանում, ցույց են տալիս, որ բաժանությունները, բռնությունը և ընտանեկան խնդիրները կապված են տնտեսական վտանգների հետ և ունեն շղթայական ազդեցություն՝ բերելով նաև երեխաների անտուն մնալու ռիսկերի և հավելյալ պատասխանատվության առաջացման (Williams, 1998): Չնայած հետազոտության որակական բնույթին և ընդհանրացումների շուրջ սահմանափակումներին՝ կանանց պատմություններում մեծ մասամբ նկատելի էր կապը վաղ ամուսնությունների և բռնության միջավայրում ապրելու փորձառության հետ: Ամուսնալուծված և բռնության միջավայրում ապրած կանանց պատմությունները հետազոտության առանցքն էին, ինչը հերթական անգամ վկայում է Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի մեծաթիվ լինելու մասին[72]: Հետազոտությանը մասնակցած կանանց պատմությունները վկայում են այն մասին, որ վաղ ամուսնությունը հաճախ հանգեցնում է կրթությունը կիսատ թողնելուն կամ աշխատանքը դադարեցնելուն/ընդհանրապես աշխատելու

72 | Women's Support Center. (2024, October 10). *Joint stakeholder report for the United Nations Universal Periodic Review (49th Session).* Coalition of Domestic Violence Support Centers. https://www.womensupportcenter.org/WSC_CDVSC%20UPR%20submission_10.10.24.pdf?utm_source=chatgpt.com

հնարավորություն չունենալուն, ինչը հետագայում սահմանափակում է կանանց կայացման, ինքնադրսևորման, մասնագիտական աճի հնարավորությունները և կախյալության վիճակի մեջ է պահում նրանց: Երիտասարդ կանանց համար, կյանքի անփորձությամբ պայմանավորված, ամուսնական հոգսերը հետագայում վերամտածվել են որպես կյանքի պայմաններին հարմարվելու ծանր պարտադրանք: Այդ փորձառությունը դարձել է ինչպես իրենց անձնական կայացման խոչընդոտ, այնպես էլ թերարժևորման պատճառ՝ ստիպելով նրանց տարիներ շարունակ ապրել բռնության հանդուրժման պայմաններում:

«Ես միշտ ասում եմ՝ երբեք պետք չէ շուտ ամուսնանալ: Էլի թող նույն կյանքս լիներ, էլի թող նույն խնդիրները լինեին, բայց գոնե մի քիչ այդ ամեն ինչը հասկանալով լիներ: ...Ես մեղադրում եմ մամայենց, որ ես շուտ եմ ամուսնացել՝ 17 տարեկանում: 18 տարեկանս իրենց [խմբ.՝ ամուսնու] տանն է լրացել»:

Կոտայքի մարզ, Եղվարդ, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող միայնակ մայր

Ամուսնալուծությունների շուրջ հանրային «անընդունելիության» ընկալումը երկար ժամանակ եղել է այն հիմնական գործոններից մեկը, որը ստիպել է կանանց հանդուրժել բռնությունը: Հետազոտությունը հաստատում է, որ հանրության շրջանում ընդունված այս մոտեցումը հաճախ հանգեցրել է նրան, որ կանայք բռնությունից ազատվելու քայլեր են ձեռնարկել միայն ավելի հասուն տարիքում: Ամուսնալուծության կամ բռնության միջավայրից ազատվելու վերաբերյալ հանրային արձագանքներն ու վերաբերմունքները հաճախ ուղղված են եղել կանանց՝ հարմարվելու և համակերպվելու խորհուրդներին, դիմանալուն, կտրուկ որոշումներ չկայացնելուն: Ծնողական ընտանիքում հոգսի և կախվածության փորձը վաղ ամուսնացած կանանց պարագայում հաճախ շարունակվում է՝ փոխարինվելով ամուսնուց կամ ամուսնական ընտանիքից կախվածությամբ: Իսկ ամուսնալուծությունը որոշ

իրավիճակներում դառնում է ազատման և ինքնուրույնության ձեռքբերման ճանապարհ: Շատ կանանց համար այն վերածվել է ինքնուրույնության հաստատման իրական հնարավորության՝ «հույսն ինձ վրա» սկզբունքով առաջնորդվելու կարևոր շրջադարձային պահի:

«Հիմա ավելի հանգիստ է, վերջիվերջո այն վախը, այն սթրեսը արդեն դուրս են եկել, արդեն ավելի շատ կայացել եմ ես ինքնուրույն, որովհետև, կոպիտ ասած, ծնողների թևի տակից դուրս եմ եկել, մտել իր [խմբ.՝ նախկին ամուսնու] թևի տակ: Ես ինքնուրույնություն երբեք չեմ ունեցել, բայց հիմա՝ այս երեք տարին, արդեն ամուր կարողանում եմ կանգնել գետնին»:

Հրազդան, միայնակ մայր (1)

Կանայք ներկայացնում են նաև, թե ինչպես են ներկայում կարողանում սահմաններ ձևավորել թե՛ անձնական հարաբերություններում, թե՛ մարդկանց հանդեպ վստահության, ինչպես նաև իրենց և իրենց երեխաների անվտանգությունն ապահովելու առումով: Շատ դեպքերում ծնողական ընտանիքը կարող է դառնալ ինչպես աջակցության, այնպես էլ մերժման կամ նույնիսկ նոր բռնության միջավայր: Սակայն բազմաթիվ կանանց համար նույն բնակավայրում ապրող ծնողները կամ հարազատները կարևոր աջակցություն են, հատկապես երեխաների խնամքն ու աշխատանքի կազմակերպումը հնարավոր դարձնելու տեսանկյունից:

«Այն, որ ինձ ծնողներս տեղ են տվել իրենց տան մեջ, ինձ բավարար էր: Չեն ասել՝ մի՛ բաժանվի... Ճիշտ է, հա, ցանկացած ծնող ուզում է, որ միասին լինեն, իմ ծնողները ևս ասել են, որ կարող է մի փոքր էտապ է, անցնի, ուղղվի, հնարավորություն տուր... Բայց հասկանում ես, որ այդ հնարավորությունը ոչ մի բան է»:

Հրազդան, միայնակ մայր (1)

«Մաման որ մենակ ապրեր, ես հաստատ չէի գա հասնեի այստեղ [խմբ.՝ անտունների կացարան], *իսկ եղբոր ու եղբոր կնոջ հետ ես*

ընդամենը մեկ ամիս այնտեղ մնացի: Ինձ [հարսս] ասաց՝ երբ ես գնում: Վարձով տուն էի փնտրում այդ ժամանակ... Երբ իմ պապան կար, իմ աչքի վերևը ոչ մեկ չէր կարողանում ասել՝ ունք կա, որ եղբայրս էլ ասեր՝ իմ տունն է, գնա՛: Եղբորս այնպես կհաներ տանից, կասեր՝ գնա՛... Իսկ հիմա իրանց ձեռքն է, հասկացե՛ք, է՛լի: Մամաս ասում է՝ ինչ անեմ, ա՛յ բալա, ես էլ շատ բան եմ ուզում անեմ, ձեռքս ճար չկա»:

Հրազդան, միայնակ մայր (2)

Ընտանիքի վիճակի կարևոր խնդիրներից մեկը խնամքի կազմակերպումն է՝ թե՛ անչափահասների, թե՛ մեծահասակների կարիքների բավարարումը, ինչպես նաև առօրյա կենցաղային աշխատանքների կատարումը՝ զուգահեռ աշխատելու անհրաժեշտության պայմաններում: Միայնակ մայրերը և ամուսնալուծված այն կանայք, որոնք միաժամանակ խնամում են իրենց երեխաներին կամ մեծահասակ ծնողներին, բախվում են բազմաշերտ սոցիալական դժվարությունների: Այս կանանց մեծ մասը ընտանիքում միակ հոգացողն է՝ իր վրա կրելով և՛ նյութական ապահովման, և՛ խնամքի, և՛ հոգեբանական կայունության պահպանման պատասխանատվությունը:

Աշխատանքի կազմակերպումը նրանց համար հաճախ դժվարանում է, քանի որ խնամքի փոխարինող կամ աջակցող համակարգերը գրեթե բացակայում են:

«Մի հատ սայլակ եմ տանում, մի հատ իրան եմ տանում... Չունեմ, ոչ մեկ չկա, որ ինձ օգնի: Ես եմ մենակ անում, որովհետև չեն օգնում, որ չեն օգնում, արդեն ես գիտեմ՝ իմն է»:

Հրազդան, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող միայնակ մայր (1)

Բացի այդ՝ ծնողների առողջության խնդիրները կամ նրանց մշտական խնամքի կարիքը լրացուցիչ սահմանափակումներ են ստեղծում կանանց աշխատելու և եկամուտ ստանալու հնարավորությունների համար: Տանը մեկ աշխատող

ունենալը՝ լինի դա հենց կինը կամ նրա տարեց ծնողը, հանգեցնում է եկամուտների անբավարարության և առօրյայի կազմակերպման բարդությունների: Հետազոտությանը մասնակցած ամուսնալուծված կանանց մեծ մասի պատմություններում նախկին ամուսինների մասնակցությունը հաճախ լիովին բացակայում է երեխաների խնամքի ու ֆինանսական ծախսերի մեջ: Այս անտարբերությունը երբեմն հանգեցնում է հայր-երեխա հարաբերության խզման՝ թողնելով ամբողջ պատասխանատվությունը մոր ուսերին:

«Եթե դու լավ հայր ես, մտածում ես՝ արդյոք քո երեխաները կերան, գյուղում վառելիք ունեն, դպրոց ինչպես են գնում. հազար ու մի հանդես է, էքսկուրսիա: Իրենք ոչ մի բանից տեղյակ չեն, մի ասեղ անգամ չեն տա»:

Շիրակի մարզ, գյուղ Ոսկեհասկ, միայնակ մայր

Ամուսնալուծված կանանց պարագայում, այն եզակի դեպքերում, երբ ամուսինների հետ հարաբերությունները որևէ կայուն ու շփման ենթակա փուլում են, հնարավոր է լինում երեխաների խնամքը կազմակերպել համատեղ, հատկապես այն դեպքերում, երբ կանայք ունեն բնակարանային կամ առողջության խնդիրներ, լուծումը ժամանակավոր հայրերի հետ հոգսի համատեղումն է:

«...Ես նպաստառու էի, բայց ներկա պահին երեխաներս գտնվում են ամուսնուս մոտ՝ սկեսուրիս տանը: Ես Երևանում առողջական խնդիրներով պառկած եմ եղել, էդ նպաստից էլ են կտրել»:

Գյումրի, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կին (2)

Բռնության պայմաններում ապրած և ամուսնալուծված կանանց մեծ մասը նշում է, որ նախկին ամուսինները չեն տրամադրում ալիմենտ՝ չնայած դատարանի որոշումներին: Երբեմն ալիմենտը դիտվում է որպես «բարի կամքի» դրսևորում և օգտագործվում է որպես կանանց վերահսկելու կամ կախվածության մեջ պահելու միջոց: Այս համատեքստում զագ-

սում գրանցված լինելը որոշակի իրավական երաշխիք է ապահովում, հատկապես երեխայի խնամքի և ունեցվածքի հետ կապված հարցերում:

Գյումրի, Ղարաբաղից տեղահանված միայնակ մայր (1)

«Ես աշխատանքով ահագին բան արել եմ: Երեխեքի հայրն էլ է փող ուղարկում ամեն ամիս՝ 40-50 հազար՝ նայած: Ալիմենտ չէ, իր ցանկությամբ: Լինում է ամիս, որ չի ուղարկում կամ քիչ է ուղարկում, եթե չի ունենում»:

2.2 | Տան բացակայությունը՝ որպես աղքատության և խոցելիության առանցքային չափում

Բնակարան ունենալը մարդու հիմնարար իրավունք է: Լավ բնակարանային պայմանները կարող են նպաստել կենսամակարդակի բարելավմանը, հնարավորությունների և բարեկեցության աճին, մինչդեռ վատ բնակարանային պայմանները կարող են հանգեցնել աղքատության, սոցիալական անպաշտպանության և առողջության խնդիրների:

Բնակարանային ապահովության ոլորտը նաև կյանքի այն ոլորտներից է, որը կանայք և տղամարդիկ տարբեր կերպ են փորձառում՝ սկսած անօթևան դառնալու ռիսկերից և դրանից դուրս գալու ուղիներից ու բնակարանային ծառայությունների հետ փոխհարաբերություններից մինչև արժանապատիվ կենսապայմանների և մասնավոր բնակարանային շուկայի հասանելիությունը:

Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս բազմաթիվ ձևեր, թե ինչպես է գենդերը ձևավորում, սահմա-

նում և ազդում բնակարանային անկայունության փորձառությունների վրա (Mayock և այլք, 2015; Anderson, 2001): Բացի այդ, եթե նախորդ տարիների ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնացած էին այն անհատական առանձնահատկությունների կամ հատկանիշերի վրա, որոնք կարող են պայմանավորել բնակարանային անապահովությունը կամ անօթևանությունը (օրինակ՝ թմրամիջոցների և/կամ ալկոհոլի օգտագործում, հոգեկան առողջության խնդիրներ և այլն), ապա վերջին տարիների հետազոտությունները մեծապես շրջվել են դեպի կառուցվածքային կամ համակարգային գործոնների ուսումնասիրություն՝ այնպիսիք, որոնք ազդում են մարդկանց՝ բնակարան ձեռք բերելու հնարավորության վրա, օրինակ՝ աղքատություն, աշխատաշուկա մուտք գործելու սահմանափակումներ, սոցիալական ապահովության քաղաքականություններ և հենց բնակարանային համակարգի կամ շուկայի կառուցվածք (Savage, 2016; Anderson, 2001; Edgar և Doherty, 2001): Օրինակ, ինչպես ցույց է տալիս Մայք Սավիջի (Savage, 2016) հետազոտությունը, թեև անօթևան մարդիկ իրենց անօթևանության պատճառը վերագրում են անհատական իրադարձություններին կամ գործոններին, հիմնական գործոնը, որը հանգեցնում է ժամանակավոր կամ երկարաժամկետ անօթևանության, այն է, որ մարդիկ զրկված են կամ դուրս են մնացել «մարդկային, սոցիալական, նյութական կամ ֆինանսական կապիտալի ռեսուրսներից», որոնք կարող էին չեզոքացնել այդ բացասական անհատական իրադարձությունների հետևանքները: Մի շարք հեղինակներ առաջարկում են այն մոտեցումը, որ բնակարանային անապահովությունը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել այն որպես ***«հասարակական և անհատական գործոնների բարդ փոխազդեցություն, որը դրսևորվում է որոշակի հանգամանքներում, որոշակի մարդկանց շրջանում»*** (McNaughton, 2008): Այս մոտեցումը դիտում է բնակարանի բացակայությունը որպես ընդամենը

մեկ գործոն այն բազմազան ձևերի շարքում, որոնցով մարդիկ կարող են դուրս մնալ բնակարանային ապահովությունից:

Կանանց բնակարանային կարիքները և այդ կարիքները բավարարելու հնարավորությունները սերտորեն կապված են համակարգային և կառուցվածքային գենդերային անհավասարությունների, մասնավորապես կանանց նկատմամբ բռնության և կանանց տնտեսական անհավասարության հետ: Կանանց տնտեսական անբարենպաստ դիրքը աշխատաշուկայում (այդ թվում՝ հաճախ կես դրույքով, անկայուն և/կամ ցածր վարձատրվող աշխատանքներում ներգրավվածությունը, ինչպես նաև չվճարվող խնամքի պարտականությունները և կենցաղավարությունը) անմիջական ազդեցություն է ունենում նրանց բնակարանային իրավիճակի վրա: Միաժամանակ ակնհայտ է, թե ինչպես են հայրիշխանական քաղաքականությունները, որոնք ելնում են նուկլեար ընտանիքների շահերից, միայնակ կանանց առավել խոցելի դարձնում շուկայական բնակարանային համակարգում (Novac, 1996):Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, տուն ունենալու հարցը ոչ միայն նյութական ապահովության, այլև սոցիալական արժանապատվության հիմնարար բաղադրիչներից է: Հայաստանյան համատեքստում տան հարցը բացում է տնտեսական անապահովության, գենդերային անհավասարության և պետության աջակցության քաղաքականությունների և մեխանիզմների բացթողումների շերտերը: Մեր հետազոտությունը դուրս է բերում տան բացակայության, վարձով ապրելու և սոցիալական օգնության սահմանափակումների հարցերը: Խոցելի խմբերի կանանց շրջանում տուն չունենալը աղքատության հիմնական նշան է: Այն ոչ միայն նյութական կարիքի, այլև սոցիալական անպաշտպանության, ինչպես նաև արժանապատվության կորստի հարց է:

«Որ ասում են՝ դուրս եկեք, դու քեզ ամենավերջին մարդն ես զգում: Այնպիսի տհաճ զգացողություն է տուն չունենալը... Տան հարցը ցավ էր դարձել ամուսնուս սրտին, ասում էր՝ որ տուն չունենք, ինձ էնքան թերի եմ զգում: Վարձակալը, որ հանկարծ պահ է լինում, ուզում է դուրս հանել, մի այլ կարգի սթրես եմ տանում, ոտքերիս տակից հողը գնում է»:

Գյումրի, տնտեսությունը միայնակ վարող կին (1)

«Հայաստան. աղքատության սուբյեկտիվ գնահատականը 2024 թ.» հետազոտությունը ցույց է տալիս, որ տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի անդամների կարծիքով կենսամակարդակի առաջնային խնդիրներից է բնակարանային հիմնահարցը՝ 11.1%: Երկրորդ ամենակարևոր խնդիրը առողջությունն է՝ 9.5%[73]:

73 | ՀՀ վիճակագրական կոմիտե (2025). *Հայաստան. աղքատության սուբյեկտիվ գնահատականը 2024 թ.*, վերցվել է՝ https://www.armstat.am/file/article/poverty_2025_am_5.pdf:

Վարձով ապրելու և մշտապես «դրսում հայտնվելու վտանգի» թեման կառուցվածքային և համակարգային խնդիր է, որը դիսկուրսիվ մակարդակում արտահայտվում է պետության, սեփական ուժերի և ապագայի նկատմամբ անվստահությամբ:

«Բարի, հարուստ մարդ է, տվել է [մեր ներկա տունը], ուրիշի տանն ենք ապրում ու ամեն պահի կարող ենք հայտնվել դրսում»:

Շիրակի մարզ, գյուղ Ոսկեհասկ, միայնակ մայր

Կանանց շեշտադրումները՝ *«ոտքերիս տակից հողը գնում է»*, *«դրսում հայտնվել»*, *«սթրես տանել»*, *«թերի մարդ»*, արտահայտում են գոյաբանական անհանգստություն. «տունը» դառնում է ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական կայունության համարժեքը:

Հատկապես հանրակացարաններում կամ սոցիալապես անապահով խմբերի համար նախատեսված կացարաններում ապրող կանանց պատմություններում հաճախ հանդիպում է այն ընկալումը, որ տան բացակայությունը նրանց

զրկում է ծնողական և մայրական դերը լիարժեքորեն կատարելու հնարավորությունից:

Գյումրի, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կին (2)

«Մի տեղ ես գնում, տեսնում ես՝ երեխաները վազում են, ասում ես՝ ես էլ եմ ուզում: Դրա համար աշխատում եմ, ստեղծում եմ, հավաքում եմ մի քիչ, որ երեխեքիս բերեմ ինձ մոտ»:

Հրազդան, միայնակ մայր (2)

«Ապրում եմ անտունների կացարանում, որտեղից ելքն ու մուտքը շատ դժվար է, շատ խիստ է, չեն թողնում՝ աշխատես»:

Միաժամանակ, տարբեր բնույթի կացարանները, որոնք նախատեսված են որպես սոցիալական աջակցություն կամ ժամանակավոր ապաստան, հաճախ վերածվում են վերահսկողության և մեկուսացման միջավայրերի: Այս տարածքներում բնակվող մարդիկ, հատկապես կանայք, հաճախ զրկված են ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունից՝ սկսած առօրյա կենցաղային հարցերից մինչև աշխատանքի ընտրություն: Այս իրավիճակը ոչ միայն խորացնում է աղքատությունը, այլև բացահայտում է համակարգային անարդարության խորքային բնույթը, որտեղ սոցիալական աջակցության քաղաքականությունները վերարտադրում են այն ենթակայացման մեխանիզմները, որոնցից մարդիկ փորձում են խուսափել:

Տուն չունենալու հարցը առավել սուր է արտահայտվում միայնակ մայրերի, ընտանեկան բռնության ենթարկված, առողջության խնդիրներ ունեցող, ինչպես նաև հաշմանդամ երեխա ունեցող կանանց դիսկուրսներում: Նրանց խոսքում տունը ոչ միայն ապաստանի, այլև ինքնության վերահաստատման վայրի նշանակություն ունի: Տունը կամ տան հարմարության ստեղծումը միայնակ մայրերի համար նաև և առաջ գոյատևման սուբյեկտիվ փորձ է՝ վերականգնելու սեփական տարածքը՝ որպես ինքնության, լինելիության ֆիզիկական հիմք:

«Ես որ իմ շորով դուրս եմ եկել, մտել եմ մամայենցս տուն, մի քիչ հարմարություն եմ ստեղծել»:

Միաժամանակ պարզ է դառնում, որ թեև իշխանությունները փորձում են համակարգային լուծումներ գտնել սոցիալապես խոցելի խմբերի խնդիրներին, սակայն այս գործընթացը բախվում է ինչպես ռեսուրսների սահմանափակությանը, այնպես էլ սոցիալական և ինստիտուցիոնալ մարտահրավերներին: Դրանք ենթադրում են ֆինանսական սահմանափակումներ, ծրագրերի ծավալի և ընդգրկման սահմանափակումներ, համակարգային անարդյունավետություն: Վերջինս արտացոլվում է նաև տեղական համայնքների ամորֆ և անգործունյա վիճակում: Համայնքները, որոնք տարիներ շարունակ համարվել են ամենակոռումպացված և ոչ արդյունավետ ինստիտուտները, պետք է լինեին սոցիալապես անապահով բնակչության աջակցության հիմնական օղակները, ապահովեին ծառայությունների մատչելիություն, սոցիալական վերահսկողություն և աջակցություն տեղական մակարդակում: Սակայն իրականում նրանք չեն ստանձնում իրենց այս պատասխանատվությունը և միայն առանձին «բարեգործական» դրսևորումներով են օժանդակում համայնքների կարիքավոր մարդկանց: Անգործունյա համայնքային կառավարման հետևանքով տեղի բնակիչները, հատկապես խոցելի խմբերը, հայտնվում են համակարգային աջակցության բացակայության, սոցիալական մեկուսացման և տնտեսական կախվածության պայմաններում: Այս խնդիրն ավելի խորն է դառնում, երբ համայնքային կառույցները լիովին կախված են կենտրոնական իշխանությունից կամ ֆինանսական հոսքերից, սակայն չունեն սեփական նախաձեռնողականություն կամ ներքին մեխանիզմներ՝ տեղական խնդիրները ժամանակին և արդյունավետորեն լուծելու համար: Սա կառուցվածքային մարտահրավեր է, որը պահանջում է ոչ միայն ֆինանսական և ռեսուրսային հզորացում,

այլև համայնքային կառավարման ինստիտուցիոնալ բարեփոխում, թափանցիկություն և մասնակցային մեխանիզմների ներդրում:

Մեկ այլ խնդիր է կանանց նկատմամբ բռնության (որն, իր հերթին, ինչպես կանանց անհավասարության պատճառ է, այնպես էլ հետևանք) և կանանց բնակարանային անապահովության միջև առկա անքակտելի կապը: Շատ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ գենդերային բռնությունը կանանց պատշաճ և կայուն բնակարան ապահովելու հնարավորությունը խոչընդոտող ամենակարևոր գործոններից մեկն է: Անվտանգ բնակարանը կանանց համար հատկապես կարևոր աջակցություն է ընտանեկան բռնության փորձառության ժամանակ: Միաժամանակ, կանանց՝ բնակարանի կորուստը կարող է հանգեցնել նոր բռնության ռիսկերի: Ավելին՝ կանանց առավել ցածր եկամուտները և մատչելի բնակարանների անբարենպաստ շուկան, ինչպես նաև պետական աջակցության բացը էլ ավելի են խորացնում նրանց աղքատությունն ու սոցիալական անապահովությունը: Մեր հետազոտությունը ակնառու է դարձնում նաև ամուսնալուծված կանանց նկատմամբ առկա խորքային սոցիալական նախապաշարումները և խտրականությունը «տան շուկայում»:

Գյումրի, միայնակ մայր (1)

«Տան տերն իմացավ, որ ամուսնալուծված եմ, ասաց՝ չէ՛, չէ՛, դու մարդ չունես, վարձը ժամանակին ոնց պետք է տաս, ու հանեց մեզ»:

Այս դիսկուրսը բացահայտում է, որ միայնակ կինը հաճախ ընկալվում է որպես «անվստահելի» վարձակալ՝ միաժամանակ կրելով և՛ աղքատության, և՛ գենդերային խարանի բեռը: Մեր ուսումնասիրությունը բացահայտել է նաև, որ հայաստանյան համատեքստում տունը ընկալվում է ոչ միայն որպես ֆիզիկական տարածք, այլև արժանապատվության,

սեփականության և «հայկական ընտանեկան արժեհամակարգի» հիմնական խորհրդանիշ:

Գյումրի, տնտեսությունը միայնակ վարող կին (1)

«Հայ տղամարդու, հայ մարդու համար կարևոր բան է, չէ՞ [տունը]: Եվրոպայում, Ամերիկայում, մարդիկ կան՝ ամբողջ կյանքում վարձով են ապրում, բայց իրենց համար նորմալ է, սթրես չեն տանում»:

Այստեղ նկատվում է հայկական մշակույթի առանձնահատկությունը, որտեղ տան սեփականությունը հավասարեցվում է ինքնաբավությանը և սոցիալական հաջողությանը: Բացի այդ՝ հատկապես պատերազմից հետո տրավմատիկ ժամանակներում տուն ունենալու ցանկությունը ընկալվում է որպես ապագայի նկատմամբ վերահսկողության միակ միջոց:

Հրազդան, Ղարաբաղից տեղահանված կին (1)

«Հիմա մտածում եմ՝ ինչքան էլ հոգեբանի մոտ գնաս, մեկ ա, չես կարող... Հիմնական խնդիրը պետք է լուծված լինի՝ տուն ունենաս, որ մի քիչ հանգիստ լինես»:

Չնայած խոցելիությանը՝ կանանց խոսքում առկա է դիմակայության և ապագայի նկատմամբ հույսը՝ հաճախ ինքնագործունեության և աշխատանքի միջոցով. ***«մի օր լուսամուտ փոխեցի, մի օր դուռ փոխեցի...», «աշխատում եմ, ստեղծում եմ, հավաքում եմ մի քիչ...»***: Այսպիսի ձևակերպումները ներկայացնում են անհատական մակարդակում դիմակայության ռազմավարություններ, երբ կանայք փոքր քայլերով փորձում են վերականգնել վերահսկողությունը սեփական կյանքի նկատմամբ: Չնայած բնակարանային պետական աջակցության հասցեին Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց քննադատություններին՝ մեր հետազոտության մասնակիցների հետ զրույցները փաստում են, որ կան խոցելի և անապահով խմբեր, որոնք, սակայն, դուրս են մնացել բնակարանային պետական աջակցության ծրագրից: Թեև տեղահանված կանանց և նրանց ընտանիքների

համար նախատեսված աջակցությունը լիովին չի վերացնում խնդիրները և չի փոխհատուցում նրանց նյութական և ոչ նյութական կորուստները, այն, միևնույն է, որոշ չափով ապահովում է պաշտպանիչ ցանց՝ դուրս բերելով մարդկանց անօթևանության, բնակարանային անապահովության կամ համակարգային աղքատության սահմաններից: Այդուհանդերձ, պետական աջակցությունը չի ապահովում բռնի տեղահանված կանանց լիարժեք անվտանգություն կամ հոգեբանական հանգստություն, ինչն ընդգծում է սոցիալ-տնտեսական շերտավորման խորացումը:

Գյումրի, Ղարաբաղից տեղահանված միայնակ մայր (2)

«10 մլն-ը տրամադրել են, մի քիչ ավելացրել եմ, հիմա դրա տոկոսներն եմ տալիս»:

Միաժամանակ, այլ խոցելի խմբերի կանայք բախվում են բնակարանային շուկայի ճնշող խնդիրներին և կեղեքիչ բնույթին՝ առանց բնակարան ձեռք բերելու որևէ հեռանկարի:

Հրազդան, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող միայնակ մայր (2)

«2020 թվականին 20 հազար էր վարձը, հիմա 90 հազար է»:

Պետական աջակցության շրջանակում խոցելի խմբերի միջև առկա անարդարությունը, որը հայտնի է որպես «հորիզոնական անհավասարություն», առաջանում է այն ժամանակ, երբ որոշ խմբեր համակարգային տեսանկյունից ավելի անապահով են համարվում նման կարիքներ կամ կարգավիճակ ունեցող մյուս խմբերի համեմատ: Այս անհավասար բաշխումը հաճախ հետևանք է ոչ միայն տնտեսական, այլև ավելի համապարփակ գործոնների և կարող է ստեղծել դժգոհություն և սոցիալական լարվածություն հանրային տարբեր շերտերի միջև: Խոցելի խմբերին անհավասար աջակցությունը կարող է ուժեղացնել դժգոհություններն ու անարդարության զգացումը, հատկապես երբ դրանք համընկնում են մշակութային կամ խմբային ինքնության

հետ: Բացի այդ՝ մեծ հորիզոնական անհավասարությունները կարող են բարձրացնել սոցիալական անկայունության և հասարակական կոնֆլիկտի ռիսկը, ինչպես նաև քայքայել սոցիալական համերաշխությունը, քանի որ անապահով խմբերի անդամները հաճախ զգում են ինքնագնահատականի և սոցիալական դիրքի նվազում: Հորիզոնական անհավասարության և անարդարության հաղթահարման տեսանկյունից կարևոր է ոչ միայն ռեսուրսների բաշխումը՝ առաջնահերթություն տալով առավել խոցելի խմբերին, այլև քաջալերող, հզորացնող ծրագրերի իրականացումը բոլոր մարգինալացված խմբերի հզորացման համար: Այսպիսով, ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, տան բացակայությունը Հայաստանում հանդես է գալիս որպես սոցիալական և գենդերային անհավասարությունների խտացված արտացոլում: Կանանց հետ զրույցների դիսկուրսիվ վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակարանային անապահովությունը կառուցվում է ոչ միայն նյութական պակասի, այլև արժանապատվության, վերահսկողության, գենդերային խտրականության և խոցելիության հարցերի շուրջ: Բնակարանային պետական աջակցության ծրագրերի մասնակի բնույթը ի ցույց է դնում հորիզոնական անհավասարության խորացող բնույթը: Կանայք հստակ մատնանշում են, որ տուն ունենալը նրանց համար ոչ միայն գոյության հարց է, այլև սոցիալական ինքնության վերականգնման պայման:

2.3 | Կրթության, առողջության և աղքատության փոխառնչությունները

Կրթության հասանելիությունը շարունակում է լուրջ խնդիր մնալ մարզերում բնակվող կանանց համար, ինչն ուղղակի որոշ

ազդում է նաև նրանց սոցիալ-տնտեսական պայմանների վրա: Հետազոտության 18 պատմություններում կանայք տարբեր պատճառներով զրկված են եղել բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Ժամանակային պահանջներն ու ընտանիքի սոցիալական վիճակը ցույց են տալիս, որ բարձրագույն կրթություն չստանալու պատճառները կապված են տրանսպորտային սահմանափակումների, Երևանում բնակարանի վարձակալության բարձր գների, ընտանեկան ֆինանսական դժվարությունների, վաղ ամուսնությունների և ընտանեկան բռնության առկայության հետ:

Գյումրի, միայնակ մայր (3)

«Ո՛չ, վարձի պատճառով [խմբ.՝ չեմ շարունակել], *երկու տարի եմ սովորել, իմ բոլոր փաստաթղթերն այնտեղ են մնացել, այն էլ փակվել է, հիմա էլ չգիտեմ ոնց վերականգնել»:*

Հրազդան, միայնակ մայր (1)

«Ես, քանի որ դպրոցն ավարտելուց հետո ամուսնացել եմ, կար պլաններում, որ պետք է սովորեմ, ավարտեմ, աշխատեմ, ոնց նորմալ, հասուն մարդկանց մոտ, բայց շրջանցեցինք այդ թեման, դարձա հայկական ավանդական՝ «կինը պետք է խոհանոցում լինի»:

Այս գործոնները ոչ միայն սահմանափակել են կանանց կրթության հնարավորությունները, այլև դարձել են նրանց սոցիալական ու տնտեսական խնդիրների, արժանապատիվ աշխատանքի հասնելու դժվարությունների և շարունակվող սոցիալական անարդարության հիմնական պատճառը: Միջին մասնագիտական կրթություն ստացած կանանց համար նույնպես դժվարություններ են առաջացել համապատասխան աշխատանք գտնելու հարցում: Այս հանգամանքները կրկին բերում են կանանց տնտեսական սահմանափակումների ու բռնության դաշտ, ինչն իր հերթին խոչընդոտում է նրանց մասնագիտական զարգացումն ու ֆինանսապես անկախ լինելու հնարավորությունը: Ամուսնալուծված կանայք պատմում են, որ այս բացը փորձել են լրացնել տար-

բեր կարողություններ ու հմտություններ զարգացնելով՝ սովորելով վարսահարդարում, ծաղկի դիզայն, հրուշակագործություն և այլն, սակայն այս հմտությունները ևս հաճախ մնում են բազային մակարդակի վրա և չեն դառնում եկամուտ ստանալու միջոց: Ժամանակին բաց թողած կրթությունը լրացնելու ցանկությունը, հատկապես երբ դասընթացները կամ ծրագրերը անվճար են տրամադրվում հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից, կանանց շրջանում շատ մեծ է: Այս հետաքրքրությունն ու ցանկությունը հիմնականում կապված են ոչ թե բարձր եկամուտների, այլ սեփական գործ ունենալու, ինչպես նաև ինքնուրույնության ձգտման հետ: Օրինակ՝ դիմահարդարման դասընթացներին մասնակցությունը դիտվում է ոչ միայն որպես արհեստ սովորելու հնարավորություն, այլև որպես փոքր ներդրում ապագա աշխատանքի կամ սեփական բիզնեսի կազմակերպման մեջ: Սակայն ֆինանսական սահմանափակումները հաճախ ստիպում են հետաձգել նման նախաձեռնությունները:

«Չարենցավան եմ գնացել [սովորելու], բայց քանի որ չունեմ ֆինանս, իսկ նյութերն առնելու համար մեծ գումար է պետք՝ մի քանի հարյուր հազար... Այսօր 100 հազարն էլ ինձ համար, իրոք, մեծ գումար է արդեն: Չեմ կարողանում տեղավորվեմ, որ նյութերս առնեմ, կարողանամ գործ անել»:

Հրազդան, միայնակ մայր (1)

«Ճիշտ է, մի տարի է անցել, բայց ես չեմ կարողացել ո՛չ նոր ֆեն ձեռք բերել, ո՛չ մազի արդուկ, բայց դե ասում են՝ գործի կեսն էլ գործիքն է, չէ՞: Կարող է զանգեն այնպիսի բան ուզեն, որ ես չունենամ, ստիպված ասում եմ, ո՛չ, ես չունեմ այդ գործիքը ու չեմ կարող անել»:

Շիրակի մարզ, գյուղ Ոսկեհասկ, միայնակ մայր

Ինչպես որ սոցիալ-տնտեսական պատճառներով բարձրագույն կրթությունը հաճախ դժվարհասանելի է կանանց համար, այնպես էլ նոր կարողությունների ձեռքբերումը կամ

դրանք կիրառելու հնարավորությունները հաճախ սահմանափակված են եղել: Այս պայմաններում կանայք առանձնացնում են իրենց առողջության խնդիրները, ընտանիքի խնամքի բարդությունները և կենցաղային ծանրաբեռնվածությունը որպես հիմնական խոչընդոտներ՝ ձեռք բերված հմտությունները արդյունավետ օգտագործելու համար, ինչը հաճախ հանգեցնում է դրանց մոռացվելուն կամ չկիրառվելուն:

Կոտայքի մարզ, Եղվարդ, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող միայնակ մայր

«Սաղ խնդիր է. ձեռքերս են ցավում, ոտքերս են ցավում: Ես վարսավիրական գնացի սովորելու, բայց հենց վերցնում եմ ֆենը, ձեռքերս ցավում են, որովհետև երակների հետ խնդիր ունեմ, հոդերի հետ խնդիր ունեմ»:

Սեփական փորձը հաշվի առնելով և տեսնելով, թե ինչպես է կրթությունը ազդում աղքատության շարունակականության վրա, կանայք կարևորում են իրենց երեխաների կրթությունը՝ դիտարկելով այն որպես համակարգային աղքատության շղթան կոտրելու և ավելի բարեկեցիկ ապագա ապահովելու հնարավորություն:

Գյումրի, միայնակ մայր (1)

«Հիմա որ եղբայրս օգնում է, այդ ծանրությունը չեմ զգում: Ինքն էլ է արդեն 30 տարեկանին մոտ, եթե ամուսնանա, ես չեմ իմանա՝ որտեղ ապրենք: Ես էլ ասում եմ, թե ոչինչ, այս մի պահն է, որ երեխաներս էլ մեծանան, իրենք լավ կսովորեն, ես կհետևեմ: Իրենք սպորտով էլ են զբաղվում: Այսպես ասած՝ մի ձեռքը ծափ չի տալիս: Երեխաներն էլ կսկսեն աշխատել, լավ կլինի ամեն ինչ»:

Ընդհանուր առմամբ, կրթական և մասնագիտական զարգացման հնարավորությունների սահմանափակությունը խորապես փոխկապակցված է սոցիալ-տնտեսական խնդիրների, սոցիալական անարդարության, աշխարհագրական և գենդերային անհավասարությունների հետ:

Կանանց սոցիալական դրությունը և առողջության հարցերը փոխկապակցված են. իրենց առողջության խնդիրները, ինչպես նաև ընտանիքի անդամների, հատկապես երեխաների առողջական վիճակը, ուղղակիորեն ազդում են կանանց սոցիալ-տնտեսական հնարավորությունների վրա: Միաժամանակ, հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը կամ ծնողների առողջությանն առնչվող հոգսերը հաճախ դառնում են միայն կանանց պարտականությունը՝ սահմանափակելով նրանց զբաղվածության, աշխատանքի և հասարակական մասնակցության հնարավորությունները: Կանանց համար սեփական առողջության նկատմամբ հոգատարությունը հաճախ առաջնահերթություն չէ. նրանք պատմում են՝ ***«Մինչև դանակը ոսկորին չհասնի, չենք հետազոտվի»,*** ինչը նրանց փորձառության ամենատարածված ձևակերպումն է: Սոցիալական ծանր պայմաններում ապրող կանայք մեծ կարևորություն են տալիս պոլիկլինիկաներից օգտվելու հնարավորությանը՝ ցուցաբերելով պարտաճանաչություն ոչ միայն իրենց, այլև երեխաների առողջության հետազոտությունների հարցում: Այս ծառայություններից օգտվելու սովորությունը հաճախ արտահայտվում է այսպես. ***«Եթե ինչ-որ բան հասանելի է, պետք է անես»:***

Գյումրի, միայնակ տնտեսություն վարող կին (1)

«Ես հաճախակի ՊԱՊ քսուքն եմ հանձնում: Շատերին կանչում են ստուգման, չեն գնում: Ասում եմ՝ հասկանո՞ւմ եք, անվճար է»:

Պատմություններում նկարագրվում են թե՛ դրական, թե՛ բացասական փորձառություններ՝ կապված պոլիկլինիկաների ծառայությունների որակի, հասանելիության և հետազոտությունների ծավալի հետ: Միաժամանակ, կանայք բարձրաձայնում են առկա խնդիրները՝ ցանկանալով, որ ծառայություններն ավելի որակյալ և հասանելի դառնան: Ղարաբաղից տեղահանված կանանց պատմություններում առանձնահատուկ շեշտվում է, որ առողջապահական ծառա-

յությունները սկզբում եղել են անվճար, սակայն իրենց քաղաքացիություն ստանալուց հետո դրանք դարձել են վճարովի, ինչպես ՀՀ բոլոր քաղաքացիների համար: Այս փոփոխությունը զգալիորեն սահմանափակել է մի շարք ծառայությունների մատչելիությունը, օրինակ՝ ատամնաբուժական օգնությունը, ինչի հետևանքով առողջության խնդիրների լուծումը հաճախ ձգձգվում է: Առհասարակ, ատամնաբուժական ծառայությունների մատչելիությունը կանայք առանձնացնում են որպես լուրջ ֆինանսական խնդիր:

Գյումրի, տնտեսությունը միայնակ վարող կին (1)

«Նույնիսկ հիվանդանալդ խնդիր է: Ես էլ ունեմ ատամի խնդիր, բայց հասկանում եմ, որ դեռ ի վիճակի չեմ: Երբ որ արդեն թափվի, ծայրահեղ վիճակ լինի...[նոր կգնամ]: Ա՛յ, այդ գլոբալ խնդիրներն են, որ մեկ հոգու աշխատանքով դժվար է լուծել, անհասանելի է: Հաշվեցին, իմ ատամների համար 700000 դրամ էր ստացվում: Ասացի՝ գոնե էն ամենամատչելի տարբերակով հաշվեք, ստացվեց 350000: Դա էլ մատչելին էր, էլի»:

Միաժամանակ, եթե այլ առողջության խնդիրների պարագայում կանայք կարողանում են աչք փակել, ատամների առողջությունը կապված է նաև հանրային ներկայանալիության ու ամոթի հետ: Հետազոտությանը մասնակցած կանայք նշում են, որ հաճախ ստիպված են լինում պարտք կամ վարկ վերցնել՝ բուժման ծախսերը հոգալու համար:

Գյումրի, միայնակ մայր (2)

«Քանի որ բարեկամ է, պայմանավորվել եմ, որ ընթացքում աշխատեմ, մաս-մաս վճարումներն անեմ: Շատ էին խնդիրներս, թե չէ էլի կձգեի: Ուղղակի աշխատանքի բերումով, որ դուրս եմ գալիս, արդեն ամաչում եմ բերանս բացել»:

Կանանց պատմությունները ցույց են տալիս, որ հաճախ հենց իրենց վարած կենսակերպն է հանգեցնում առողջության բազմազան և բարդ խնդիրների: Ընդգծվում են, օրինակ,

աշխատանքային անբարենպաստ պայմանները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի ընթացքում առաջացած ֆիզիկական լուրջ ծանրաբեռնվածությունը:

«Արդուկ էի անում 100 աստիճան՝ 8 ժամ: Պայմանները՝ փոքրիկ պատուհան կար բաց, քամին մի կողմից էր խփում, մյուս կողմից՝ արդուկի տաքությունից քրտնած վիճակ՝ թոքաբորբի բուն էր, բայց այդ ժամանակ որ վատացա, խորհուրդ տվեցին անոթաբանի մոտ գնալ: Ճիշտն ասած՝ այդ ժամանակ չգիտեի, որ վարիկոզ կա, տեսնում էի, որ երակս կապույտ է ու ցավում է, բայց չգիտեի՝ ինչ էր»:

Ծիրակի մարզ, գյուղ Ոսկեհասկ, միայնակ մայր

Բռնության պայմաններում ապրած, երեխաների խնամքի պատասխանատվությունը միայնակ կրող կանայք իրենց պատմություններում շեշտում են հոգեբանական խնդիրները, անքնության դեպքերը, որոնք լրացուցիչ նյարդային լարվածություն են ստեղծում՝ ազդելով նաև երեխաների հետ հարաբերությունների վրա: Նրանք բարձրաձայնում են նաև իրենց սոցիալական վիճակի մասին, որը խոչընդոտում է հոգեկան առողջության կայուն պահպանումը: Ամուսնալուծված կանանց պարագայում բռնության ենթարկվելու և ամուսնալուծության փուլերում ապրած հոգեհուզական փորձառությունները հաճախ հանգեցրել են առողջության տարբեր խնդիրների առաջացման:

«Ներկա պահին է՛լ հոգեբանական այդպես աջակցության կարիք չեմ զգում, որովհետև նոր ամուսնալուծված ժամանակները, որ շատ սթրեսային էր՝ անընդհատ ցնցումների մեջ, խոսակցություններից ցանկացած, անգամ նախկին ամուսնուս տեսնելուց արդեն մարմինս դող էր ընկնում: Հիմա բավականին արդեն անցել է դեպի լավը»:

Հրազդան, միայնակ մայր (1)

Առողջության խնդիրների պատճառով աշխատելու հնարավորությունից զրկված լինելը պայմանավորված է ընտանիքի սոցիալ-տնտեսական դրությամբ և ֆինանսական պատասխանատվության բաշխմամբ: Երբ ընտանիքում եկամտի հիմնական աղբյուրը ամուսնալուծված և միայնակ կանանց աշխատանքն է, որոնք հոգում են ամբողջ ընտանիքի ֆինանսական կարիքները, նրանք նույնիսկ ծանր առողջական պայմաններում հաճախ ստիպված են շարունակել աշխատել՝ չկարողանալով գոնե ժամանակավորապես հեռանալ աշխատանքից: Այս դեպքերում սուր արտահայտվում է առողջության և սոցիալ-տնտեսական վիճակի փոխկապվածությունը: Մարզերում բնակվող կանայք հաճախ կանգնում են առողջապահական ծառայությունների մատչելիության սահմանափակումների առջև՝ հարկադրված լինելով բուժօգնություն ստանալ Երևանում: Ֆինանսական դժվարությունների պատճառով նրանք հաճախ ստիպված են հետաձգել անհրաժեշտ բուժզննությունը կամ բուժումը: Նրանց պատմություններում հաճախ արտահայտվում է դժգոհություն մարզային առողջապահական համակարգի ոչ արդյունավետ գործունեության, ինչպես նաև բժիշկների աշխատանքի որակի և մատուցվող ծառայությունների նկատմամբ: ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կանայք, խոսելով առողջապահական ծառայությունների հասանելիության և հնարավոր խտրական միջադեպերի մասին, հիմնականում պատմում են դրական փորձառություններ: Միաժամանակ նրանք առանձնացնում են ընթացակարգային որոշ գործընթացներ, որոնք նրանց լրացուցիչ խոցելի են դարձնում:

«Չէ, շատ լավ է [բժիշկների վերաբերմունքը]: Գիտե՞ք ոնց: Դե, բնականաբար, բժիշկները էդ ամեն ինչը գաղտնի են պահում: Բայց գիտե՞ք՝ ինչ վատ է, երբ դու ամեն օր գնում ես տամպոն դնելու, քույրն ասում է՝ դու գնա՛, վերջում կգաս»:

Գյումրի, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կին (1)

2.4 | Վարկեր և պարտքեր. կանանց ֆինանսական բեռը

Վարկավորման և պարտք վերցնելու պրակտիկաները գենդերային առումով չեզոք չեն: Կանայք ավելի հաճախ, քան տղամարդիկ, օգտվում են սոցիալական ապահովության ծրագրերից, ավելի հաճախ են աշխատում ցածր վարձատրվող, կեսդրույքային աշխատանքներում, ավելի հաճախ են հոգ տանում երեխաների կամ ընտանիքի այլ անդամների համար: Քանի որ կանանց եկամուտները ընդհանուր առմամբ ավելի ցածր են, նրանք ավելի խոցելի են կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական դժվարությունների կամ եկամտի կտրուկ նվազման նկատմամբ, ինչն էլ ստիպում է նրանց ավելի հաճախ ապավինել պարտքերին և վարկերին՝ իրենց անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Կանանց ֆինանսական խոցելիությունն ու վարկերով և պարտքերով պայմանավորված պարտավորվածությունը բազմաշերտ խնդիրներ են, որոնք բխում են համակարգային գենդերային անհավասարություններից, տնտեսական անհավասարությունից և կանանց նկատմամբ բռնությունից: Այս խոցելիությունները բնորոշ են ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներին, որտեղ կանայք անհամաչափորեն տուժում են պարտքի բեռից: Աշխատավարձի գենդերային ճեղքվածքը հանգեցնում է նրան, որ կանայք ավելի քիչ են վաստակում: Համակցվելով ցածր վարձատրվող և կեսդրույքային աշխատանքի հետ՝ աշխատավարձի գենդերային ճեղքվածքը մեծացնում է կանանց՝ պարտքերի կամ վարկերի բեռի տակ հայտնվելու հավանականությունը և դժվարացնում դրա կառավարումը: Ավելին՝ կանայք սովորաբար զգալիորեն ավելի քիչ սեփականություն ունեն, քան տղամարդիկ, ինչի հետևանքով ճգնաժամային իրավիճակներում նրանց համար սահմանափակվում են հենման ռեսուրսները: Բացի բուն նյութական

ասպեկտից՝ գերազանցապես կանանց վրա է տան գործերի, երեխաների և ընտանիքի մյուս անդամների խնամքը: Սա հաճախ ներառում է նաև ընտանիքի պարտքերի կառավարումը, ինչը բարձրացնում է նրանց սթրեսը և մեկուսացումը: Ինչպես ցույց են տալիս կանանց հետ մեր զրույցները, նրանք վարկերը մեծ մասամբ վերցնում են գոյատևման նպատակով (սնունդ, դեղեր, բնակարանի վարձ), ինչպես նաև հիվանդությունների և առողջության խնդիրների պատճառով: Վարկային պատմություններն ընդգծում են երկու բան՝ (ա) պարտքը՝ որպես անհետաձգելի անհրաժեշտություն, (բ) պարտքը՝ որպես շարունակական սպառնալիք (սև ցուցակ, հարկադիր միջոցառումներ): «Եթե հաց էլ չունենք, մուծումներս պիտի անեմ». դատապարտվածության այս բարոյականությունը գերիշխող նարատիվ է կանանց հետ զրույցներում: Միաժամանակ հետազոտությունն ակներևաբար ցույց է տալիս, որ խոցելի խմբերի կանայք մեծ մասամբ մեծ պատասխանատվությամբ են մոտենում վարկեր և/կամ պարտքեր վերցնելու երևույթին: Եթե չկա անհետաձգելի անհրաժեշտություն, նրանք, լավ գիտակցելով իրենց անպաշտպան սոցիալ-տնտեսական դրությունը, չեն մտնում վարկերի բեռի տակ: Այս իմաստով, սխալ չի լինի ասել, որ կանայք ֆինանսապես գրագետ են և գիտակցում են այն հետևանքները, որ կարող են ի հայտ գալ վարկերը չմարելու պարագայում:

Գյումրի, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կին (1)

«Իմ հիվանդանոցում եղած ժամանակ շատ-շատ դժվար էր: Լավ գիտեք՝ քիմիան, ճառագայթումը ինչ արժեքներ ունեն: Այդ ժամանակ բավականին վարկ վերցրեցինք: Հիմա ծայրը ծայրին կարողանում ենք վարկ փակել ու յոլա գնալ: Եթե տանը մի հոգի աշխատող լինի, ո՞նց պետք է լինի: ...Եթե մուծման օրն է, ու փող չկա, մեկ ուրիշից եմ վերցնում, մուծում: Էնպես եմ դասավորում, որ նորմալ լինի»:

«Նույնիսկ եթե հաց էլ չունենանք, ես մուծումներս պետք է անեմ: Ամուսնուս ուղարկած գումարը այնպես եմ դասավորում, որ հան-

Գյումրի, տնտեսությունը միայնակ վարող կին (1)

կարծ սև ցուցակ չընկնենք: Մենք երկար տարիներ բանկերից չենք օգտվել: Ինչ կար, դա ենք կերել, դա ենք հագել, մենակ թե հանկարծ պարտքի տակ չընկնեինք: Շատ էի վախենում»:

Հրազդան, Ղարաբաղից տեղահանված կին (3)

«Վարկերից խուսափում եմ, քանի որ ստաբիլ եկամուտ չունեմ... Մի քիչ պատասխանատու մարդ եմ... Նույնիսկ տան գումարը, որ տալիս են, հետը վարկ էլ են, չէ՞, տալիս, բայց միշտ մտածել եմ, որ չեմ վերցնի, որովհետև հիմնական աշխատանք չունեմ, կարող է, օրինակ, մյուս ամիս չկարողանամ տամ»:

Միաժամանակ, առանձնապես խոցելի իրավիճակներում հայտնված կանայք, որոնք զուրկ են աջակցող հենարաններից և սոցիալական կապիտալից, հաճախ հայտնվում են ֆինանսական փակուղում: Նույնիսկ համեմատաբար փոքր գումարների պարտքերը, որոնք արագ աճում են բարձր և կեղեքիչ տոկոսադրույքների պատճառով, դառնում են նրանց համար անլուծելի բեռ: Այդ պարտքերը ժամանակի ընթացքում վերածվում են «անհուսալի վարկային պատմությունների», ինչի հետևանքով կանայք կորցնում են բանկային համակարգին դիմելու հնարավորությունը և հայտնվում են սոցիալական մեկուսացման ու տնտեսական կախվածության արատավոր շղթայի մեջ: Այս իրավիճակը ոչ միայն խոչընդոտում է նրանց ֆինանսական վերականգնումը, այլև խորացնում է սոցիալական անհավասարությունները՝ սահմանափակելով սեփական կյանքի վրա վերահսկողություն և տնտեսական ինքնուրույնություն ձեռք բերելու նրանց հնարավորությունները:

«Ես երևի մի 5-6 տարի առաջ vark.am-ից գումար եմ վերցրել ու չեմ տվել: Զանգեցին, զանգեցին, էնքան զանգեցին, ասացի՝ ինչ ուզում եք՝ արեք: Ասացին՝ կգանք, իրերի առգրավում կանենք, ասացի՝ եկե՛ք: Եկե՛ք տեսեք, ինչ կգտնեք հարմար, տարե՛ք: Հարյուր հազար դրամ էր [վարկը]: Այդ ընթացքում էլ հիվանդանոց ընկա,

դեղեր-սրսկումներ... Ես 2-3 ամիսը մեկ 30-40 հազար դրամ փող եմ ծախսում դեղերի վրա»:

Հատկապես ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կանայք կրկնակի խոցելի են առողջության խնդիրների ու մարտահրավերների, ինչպես նաև (անհրաժեշտ ծախսեր, դեղեր) սոցիալական (խտրականություն, կայուն աշխատանք գտնելու դժվարություններ և այլն) առումներով: Այս խմբի կանայք վարկերը գրեթե միշտ վերցնում են բուժման կամ իրական գոյատևումը փոքր-ինչ տանելի դարձնելու նպատակով: Հաճախ կանայք հայտնվում են բանկերի կամ ԴԱՀԿ-ի «սև ցուցակներում» ընտանեկան և տնտեսական բռնության հետևանքով: Ֆինանսական ինքնուրույնության կամ սեփականության որևէ ձևի բացակայության պայմաններում բռնության ենթարկված կանայք հաճախ դառնում են իրենց ամուսինների գործիքը. նրանք հարկադրված են լինում իրենց անունով վարկեր վերցնել՝ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման ներքո: Հետագայում տղամարդիկ հրաժարվում են որևէ պատասխանատվությունից՝ ամբողջ ֆինանսական բեռը թողնելով կանանց վրա: Արդյունքում խորանում են կանանց սոցիալական անապահովությունն ու տնտեսական անկայունությունը, իսկ աշխատաշուկայում կայուն և գրանցված աշխատանք գտնելու հնարավորությունները նվազում են: Ավելին՝ այս նույն տղամարդիկ ամուսնալուծությունից հետո հաճախ հրաժարվում են իրենց ծնողական պարտավորությունները ստանձնելուց՝ մերժելով ալիմենտի վճարումը կամ դիմելով տարբեր տեսակի խուսափման ու փախուստի ռազմավարությունների: Շատ դեպքերում նրանք նույնիսկ փորձում են կասկածի տակ դնել իրենց հայրությունը՝ պնդելով, թե երեխան իրենցը չէ, կամ պարզապես անհետանում են՝ թողնելով կնոջն ու երեխաներին առանց ֆինանսական ու սոցիալական հենարանի: Այս վարքագիծը ոչ միայն խորացնում է կանանց արդեն իսկ գոյություն ունեցող տնտեսական

խոցելիությունը, այլև փոխանցում է սոցիալական անապահովության բեռը հաջորդ սերնդին: Մայրերն այս պայմաններում ստիպված են լինում միայնակ կրել ընտանիքի գոյատևման ամբողջ պատասխանատվությունը՝ առանց պետական համակարգերի բավարար աջակցության: Այս իրավիճակը վկայում է նաև ավելի լայն կառուցվածքային խնդրի մասին. ընտանեկան պատասխանատվության գենդերային անհամաչափությունը, երբ մայրությունը դիտվում է որպես բնական և անբեկանելի պարտականություն, իսկ հայրությունը՝ պայմանական դեր:

«Վարկեր վերցրել ենք, ունենք մոտավորապես 1 միլիոն դրամի վարկ, որն իմ անունով է վերցրած եղել մոտավորապես 5-6 տարի առաջ՝ նախկին ամուսնուս կողմից՝ ստիպողաբար: ...Այն, որ քո կամքին հակառակ, ուղղակի դու տարբերակ չունեիր... Գոռում էր, ձեռքը սեղմում, խփում սեղանին՝ պետք է գաս ու վերջ: Իսկ հիմա այդ վարկը մնացել է իմ վրա, ու ես չեմ կարողանում փակեմ, որի պատճառով հաշիվներս ԴԱՀԿ կալանքի տակ են: Ես արդեն քարտային աշխատավարձի հետ կապված խնդիրներ եմ ունենում, ամեն տեղ խնդիր է լինում... Եթե ես այսօր հացի խնդիր ունեմ, ես դա ոնց պետք է փակեմ... Դա բավական մեծ գումար է ինձ համար»:

Հրազդան, միայնակ մայր (1)

«Նպաստի համար դիմել եմ: Մնում է 280000 դրամ վճարումը կատարեմ, որպեսզի [նախկին] ամուսնուս ռոզիսկի տան: Ռոզիսկով ու ԴՆԹ-ով պարտավորեցնեն, որ ինքը ալիմենտներ վճարի: 9 տարին, ճիշտ է, արդեն անցել է, բայց դեռ 9 տարի էլ դիմացը կա: Իր բարեկամները կտրականապես հրաժարվեցին, իր հորքուրի ընտանիքին խնդրեցի, ասացին՝ մենք չենք ուզում իր հետ խնդիրներ ունենալ»:

Գյումրի, միայնակ մայր (2)

Մեր ուսումնասիրության ընթացքում մի շարք կանայք խոսում էին հիփոթեքային վարկերի մասին ոչ միայն որպես ֆինանսական պարտավորության, այլ նաև որպես սեփականու-

թյան և սոցիալական կայունության հասնելու միակ իրական հնարավորության: Թեև շատերը նշում են, որ «չեն կարող տակից դուրս գալ», այսինքն՝ իրենց եկամուտները բավարար չեն վարկը մարելու համար, այնուամենայնիվ, հիփոթեքային վարկը նրանց աչքերում հաճախ ընկալվում է որպես առնվազն արդարացված կամ արժանապատիվ պարտք: Այս մտածողությունը կարելի է հասկանալ որպես յուրատեսակ սոցիալական ռազմավարություն, որտեղ վարկը դառնում է ոչ միայն տնտեսական, այլև կարգավիճակային և հոգեբանական գործիք: Եթե արդեն պետք է պարտք վերցնել, ապա «թող գոնե հիփոթեք լինի». այս մոտեցմամբ կանայք փորձում են պարտքի հարաբերությունը վերափոխել սեփական կյանքի նկատմամբ որոշակի վերահսկողության փորձի: Տուն ունենալը՝ թեկուզ երկարաժամկետ վարկային բեռի դիմաց, ընկալվում է որպես անվտանգության, սոցիալական ճանաչման և ինքնավստահության սիմվոլ: Այսպիսով՝ հիփոթեքային վարկերը աղքատ և սոցիալապես խոցելի կանանց պարագայում վերածվում են յուրօրինակ սոցիալական կարգավորման մեխանիզմի, որտեղ պարտքը միաժամանակ և՛ կախվածություն է, և՛ ինքնության ամրապնդման միջոց՝ ընդգծելով նրանց ձգտումը կայունության, արժանապատվության և պատկանելիության նկատմամբ: Առանձին դեպքերում, երբ կանանց ընտանիքներում կան կայուն եկամտով աշխատողներ, նրանք ռիսկի են գնում՝ դիմելով հիփոթեքային վարկի: Սակայն ցանկացած անսպասելի ծախս կամ եկամտի կտրուկ նվազում կարող է շղթայական ֆինանսական ճգնաժամ առաջացնել այս կանանց և նրանց ընտանիքների համար: Այսպիսով՝ նույնիսկ կայուն աշխատանքի առկայությունը, եթե այն բարձր վարձատրվող չէ, չի վերացնում վարկառության ռիսկերը, բայց այն թույլ է տալիս կանանց տեսնել հիփոթեքային վարկը որպես հնարավորություն սեփական բնակարանի ձեռքբերման և սոցիալական կայունության համար:

«Տան հարցի հետ կապված այդ տարի թեթև քայլ ենք արել, տեսնենք՝ իրականություն կդառնա, թե չէ: Ամերիկյան թաղամասում տուն ենք գրվել. վարկերով, մեքենան ծախելով, սկեսրայրս է գումարով օգնել, երկու միլիոն կանխավճար ենք տվել: Օգոստոսից պիտի սկսեն կառուցումը՝ 6 հատ երեք մուտքանի շենք: Այնքան անիրական է թվում, որովհետև դեռ ոչ մի բան չեն անում: Ասում են՝ շինթույլտվություն չեն տալիս: Ամուսինս մեքենան 400 հազարով վաճառեց: Շատ հին մեքենա էր, նույնիսկ տաքսու տակ չէին թողնում քշել: Ոսկին ավանդ դրեցինք, սկեսրայրս ավանդ ուներ, խնդրեցինք, որ տար, հետո էլի հետ կտանք»:

Առանձին դեպքերում գյուղական համայնքներում ապրող կանայք, որոնք տարիներ շարունակ զբաղվել են փոքրածավալ գյուղատնտեսությամբ՝ պահելով կով, հավ կամ այլ կենդանիներ և վաճառելով կաթն ու ձուն տեղական խանութներին կամ անհատ գնորդներին, որոշում են քայլ անել դեպի ավելի կայուն տնտեսական գործունեություն: Նրանք վերցնում են ցածր տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկեր՝ նպատակ ունենալով ընդլայնելու արտադրությունը, բարելավելու սարքավորումները կամ ավելացնելու կենդանիների քանակը: Սակայն «տնտեսական սուբյեկտ դառնալու» այս քայլը հազվադեպ է արվում մենակ. հաճախ դրա հիմքում կա արտագնա աշխատող ամուսնու ուղարկած գումարը կամ աջակցությունը, որը ֆինանսական ապահովության ևս մի ձև է: Այս աջակցությունը, սակայն, երկակի բնույթ ունի. այն, մի կողմից, ստեղծում է հնարավորության դաշտ՝ նվազեցնելով վարկի հետ կապված ռիսկերը, մյուս կողմից՝ պահպանում է կնոջ տնտեսական կախվածությունը տղամարդու արտագնա աշխատանքի հոսքերից:

«Մենք գյուղատնտեսական վարկ ենք վերցրել, կովեր ենք առել ու անասնագոմն ենք կառուցել: Այդ վարկերի տոկոսը մի քիչ մատչելի է, 4 տարով է վարկը, մենք տարուց շատ արդեն տվել ենք, այս

փուլում ստացվում է ամեն ինչ փակել: Մինչ կովեր գնելը չենք ունեցել վարկեր, ամուսինս Ռուսաստանում է եղել, գումարն ուղարկել է»:

Սոցիալապես անապահով և աղքատ կանանց համար առօրյա կարիքները հոգալու հիմնական ռազմավարություններից մեկը տեղական խանութներից պարտքով, այսպես կոչված նիսյայով առևտուր անելն է: Նիսյայի մշակույթը, որն առկա է հատկապես փոքր համայնքներում ու թաղամասերում, ձևավորվել է փոխադարձ վստահության և սոցիալական կապերի վրա հիմնված ոչ ֆորմալ փոխօգնության համակարգի շրջանակում: Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, կանայք հիմնականում սննդի խանութներում են կուտակում պարտքեր՝ հաճախ ձևավորելով երկարաժամկետ փոխհարաբերություններ խանութպանների հետ: Նրանք պարտաճանաչորեն մարում են այդ պարտքերը մաս-մաս՝ փոքր գումարներով, միայն թե չկորցնեն վաճառողի վստահությունը և պահպանեն «նիսյայով առևտրի» հնարավորությունը: Շատերի համար սա ոչ թե պարզապես ֆինանսական գործարք է, այլ գոյատևման մեխանիզմ՝ տեղական տնտեսության և համայնքային փոխաջակցության մի ձև, որն արտացոլում է սոցիալական կապերի արժեքը այնտեղ, որտեղ պետական աջակցության համակարգերը թերի են կամ բացակայում են: Միաժամանակ, «նիսյայի» մշակույթը նաև վկայում է աղքատության և սոցիալական անհավասարության խորքային բնույթի մասին. այն հաճախ վերածվում է ֆինանսական կախվածության և մշտական պարտքի զգացողության, երբ յուրաքանչյուր ապրանք ձեռք է բերվում ապառիկի և ապագա վճարումների հաշվին: Այսպես՝ «նիսյան» դառնում է ոչ միայն գոյատևման միջոց, այլև անտեսանելի պարտքի և խոցելիության ցանցի մի մաս:

«Ներկա պահին գյուղի սննդի խանութին 450,000 փող ենք պարտք, շնորհակալ ենք, որ տալիս է: Ես մարդկանց գիտեմ, որոնց պարտ-

քը բարձրանում է 30,000, ասում են՝ էլ չենք տա, դա բեր փակի՝ հետո: Մեզ տալիս են՝ իմանալով մեր պարտաճանաչությունը, որովհետև աշխատավարձի և նպաստի օրերը մեզանից են իմանում պարտքատերերը: Ես եթե ստանում եմ գումար, գալիս եմ գյուղ, գազելից իջա, տուն չեմ մտնում, բաժանելով գնում եմ, որ սիրտս գոնե ինչ-որ չափավ հանգիստ լինի, որ իջավ պարտքս»:

Գյումրի, միայնակ մայր (1)

Հետազոտությունը հստակ ցույց է տալիս կանանց սեփականություն չունենալու կառուցվածքային և մշակութային բնույթը, որը շարունակում է պահպանվել որպես գենդերային անհավասարության հիմնական ձևերից մեկը: Զրույցներից պարզ է դառնում, որ շատ կանայք իրենց կյանքի տարբեր փուլերում՝ թե՛ ծնողական, թե՛ամուսնական, և նույնիսկ ամուսնալուծությունից հետո, չեն ունենում ոչ մի տեսակի սեփականություն կամ գույքային իրավունք: Այսինքն՝ նրանք մշտապես ապրում են այլոց տարածքներում՝ առանց իրավական կամ նյութական ապահովության, ինչը նրանց դարձնում է կախյալ և խոցելի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ հոգեբանական առումով:

74 | World Bank Group. (2024). *Armenia: Country Gender Assessment.* Retrieved from https://documents1.worldbank.org/curated/en/099100824162527996/pdf/P179877-90d0c0e9-71f5-456a-a683-a1a576083a16.pdf-.

Աղյուսակ 1 | Կանանց գույքի սեփականատեր լինելու մակարդակը, 2021 թ., %[74]

Գույքի տեսակ	Սեփականատեր (%)	Համասեփական կանատեր (%)	Չունեն սեփականություն (%)
Հող	7	18.9	72
Տուն	10.3	36.2	51.1
Ընկերություն/կազմակերպություն	2	1.8	95.6
Խոշոր անասուններ (կով, ձի և այլն)	1.6	12.3	85.9
Գյուղատնտեսական արտադրության բերք	3.2	24.6	71.9
Մեքենա (թեթև մարդատար ավտոմեքենա)	5	5.4	89
Այլ գույք	1.1	2.1	95.5

Վիճակագրական տվյալները նույնպես փաստում են, որ Հայաստանում կանայք հաճախ սեփականության տնօրինողներ չեն՝ թե՛ հողի, թե՛ բնակարանի տեսքով, ինչն արտացոլում է նրանց տնտեսական ինքնուրույնության և տնտեսական որոշումների ընդունման սահմանափակ հնարավորությունները: Ավելին՝ մեր զրուցակիցների խոսքում ակնհայտ է սեփականության բացակայության մշակույթի նորմալացումը: Հաճախ կարելի է լսել այսպիսի արտահայտություններ՝ ***«տները սկեսուր, սկեսրայրի վրա էին, տենց չի՞ գնում պապական»,*** որոնք վկայում են այն մասին, որ կանայք ոչ միայն զրկված են իրավական սեփականությունից, այլև հաշտ են այդ վիճակի հետ՝ որպես ընդունված սոցիալական կարգի մասի: Այս հաշտեցումը, սակայն, ինքնաբուխ չէ. այն բխում է տարածված հայրիշխանական արժեքային համակարգից, որտեղ սեփականությունը, հատկապես անշարժ գույքը, ավանդաբար կապվում է տղամարդկային ժառանգականության հետ: Ֆեմինիստական գրականության մեջ այս երևույթը անվանվում է գենդերացված սեփականության ռեժիմ (gendered property regime), որի շրջանակում կանանց նկատմամբ կիրառվում են ոչ միայն իրավական, այլև խորհրդանշական բացառման ձևեր: Կանանց աշխատանքը թեև կենսական է ընտանիքի և համայնքի վերարտադրության համար, չի նյութականացվում որպես սեփականություն կամ կապիտալ, այլ դիտվում է որպես բնական պարտականություն: Այս համակարգում կանայք դուրս են մնում սեփականության և կուտակման դաշտից՝ կորցնելով նաև սոցիալական ինքնավարության հնարավորությունը: Այսպիսով՝ կանանց սեփականություն չունենալը պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին սոցիալական փաստ, այլ որպես խոր կառուցվածքային անհավասարություն, որտեղ իրավական, տնտեսական և մշակութային գործոնները փոխկապակցված են՝ ձևավորելով կանանց տնտեսական կախվածության և իրավազրկության շարունակականությունը:

Ավելին՝ անգամ այն դեպքերում, երբ կանայք ունեն սեփականության որոշակի ձևեր, նրանք շարունակում են գործնականում սահմանափակված լինել սոցիալական ու մշակութային կարծրատիպերով, ճնշումներով և ինքնագրաքննությամբ, հատկապես, երբ ընտանիքում չկա տղամարդ: Սա ազդում է կանանց՝ սեփականությունը լիարժեք տնօրինելու, օգտագործելու կամ զարգացնելու կարողությունների վրա: Այս սահմանափակումները խորապես արմատավորված են հայրիշխանական մշակույթում, որտեղ գույքի նկատմամբ իրավական և խորհրդանշական իշխանությունը պատմականորեն վերագրվել է տղամարդկանց: Նման պայմաններում կանանց սեփականությունն ավելի շատ ունի նոմինալ, քան իրական բնույթ՝ չտալով նրանց այն տնտեսական և սոցիալական ինքնավարությունը, որը ենթադրվում է սեփականության ինստիտուտով:

«Մենք ունենք 2 հեկտար հող՝ գյուղից հեռու: Դաշտեր են, որտեղ խոտ է աճում: Այդ խոտը վաճառում ենք: Տարի կա, կարող է լավ խոտ լինի, 20,000 դրամով վաճառենք, կա, որ չի լինում խոտ ու 5-6000 դրամ են տալիս… Ում տանը տղամարդ կա, գնում է կոմբայնի, տրակտորի հետ խոսում է, գալիս են՝ վարում, ցանում: Չգիտեմ, գուցե մենք սխալ ենք, բայց մամաս ասում է. «Նան ջան, մենք անմարդ կին ենք, մեզ պետք չի կանգնել, տրակտորիստի հետ խոսել, կողքից նայողն էլ ուրիշ բաներ մտածի»: Այդպես ձգտում ենք, որ մեր անունը մաքուր պահենք: Քանի որ տղաս շատ փոքր է, թող մեծանա, ինքը որոշի՝ ուզում է՝ զբաղվի հողերով, թե ոչ»:

Գյումրի, միայնակ մայր (1)

Այսպիսով՝ կանանց ֆինանսական խոցելիությունը և պարտքերի բեռը Հայաստանում արտացոլում են գենդերային և սոցիալ-տնտեսական համակարգային անհավասարությունները: Կանայք ավելի հաճախ հայտնվում են ցածր վարձատրվող, ոչ կայուն աշխատանքներում, ստանձնում ընտանիքի և երեխաների խնամքը և հաճախ ստիպված են ապավինել

վարկերին ու պարտքերին գոյատևման համար: Վարկերը ծառայում են ոչ միայն նյութական անհրաժեշտությունների բավարարմանը, այլև որպես սոցիալական և հոգեբանական կարգավորման գործիք, հատկապես հիփոթեքային վարկերը, որոնք ընկալվում են որպես բացառիկ հնարավորություն սեփականության և կայունության ձեռքբերման համար: Միաժամանակ, կանանց ֆինանսական որոշումները սահմանափակվում են սոցիալական նորմերով, հայրիշխանական մշակույթով և սեփականության նկատմամբ խորհրդանշական ու իրավական սահմանափակումներով: Նման պայմաններում անգամ սեփականություն ունենալը հաճախ չի ենթադրում իրական ինքնավարություն, և կանայք շարունակում են կախված մնալ տղամարդկանց աջակցությունից կամ արտագնա եկամուտներից: Այս իրավիճակն ընդգծում է ոչ միայն կանանց տնտեսական և սոցիալական խոցելիությունը, այլև համակարգային գենդերային անհավասարության շարունակականությունը, որտեղ իրավական, մշակութային և տնտեսական գործոնները խստորեն փոխկապակցված են:

ԲԱԺԻՆ 3 | 3.1 | Կանանց աշխատանքային փորձառությունը. կառուցվածքային սահմանափակումներ

Հայաստանի մարզային քաղաքներում և գյուղական համայնքներում ապրող կանայք հաճախ կանգնած են բազմաշերտ և համակարգային խոչընդոտների առջև, որոնք սահմանափակում են նրանց տնտեսական ակտիվությունն ու կայուն աշխատանքի հասանելիությունը: Սահմանափակ աշխատաշուկան, ցածր վարձատրվող և ոչ կայուն աշխատատեղերը, աշխատանքային իրավունքների թույլ պաշտպանությունը, խնամքի ծառայությունների անբավարարությունը, տրանսպորտի խնդիրները և արմատացած գենդերային կարծրատիպերը ձևավորում են կանանց աշխատանքային փորձառության ընդհանուր դաշտը: Այս խնդիրներին զուգահեռ, Ղարաբաղյան երկրորդ պատերազմից և Ղարաբաղի բնակչության տեղահանումից բխող այլևայլ խոցելիությունները հանգեցրել են սոցիալական, հոգեբանական և տնտեսական նոր մարտահրավերների: Այս դասավորությունը ոչ միայն սահմանափակում է կանանց մուտքը աշխատաշուկա, այլև հաճախ ստիպում է նրանց ընկնել ցածր վարձատրվող, ծանր և ոչ ֆորմալ աշխատանքի փակ շրջանի մեջ՝ դժվարացնելով երկարաժամկետ կայունության, մասնագիտական առաջընթացի կամ արժանապատիվ եկամտի հասնելը: Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի մարզերում և մայրաքաղաքում հասանելի աշխատատեղերի քանակն ու որակը էապես տարբերվում են: Մարզերում կանանց համար առավել հասանելի են այնպիսի աշխատանքներ, որոնք.

- ֆիզիկապես ծանր են,
- ցածր վարձատրվող,
- ոչ ֆորմալ (առանց պայմանագրի),
- չունեն սոցիալական կամ աշխատանքային երաշխիքներ:

«Հիմա էլ որ չեմ աշխատում, աշունները կարտոֆիլ հավաքելու եմ գնում, որ գոնե մեզ համար ձմեռվա կարտոֆիլ ունենանք: Պետք է 50-60 հազար տանք կարտոֆիլի, գոնե գիտեմ՝ այդպես փող չենք տալիս, ամբողջ ձմեռ կարտոֆիլ ենք ուտում, որ գոնե 400 հազար խանութի պարտքն իջնի 100 հազար»:

Գյումրի, միայնակ մայր (2)

Աշխատանքները հիմնականում ներառում են՝

- մաքրություն և տնային աշխատանքներ,
- սպասարկում խանութներում,
- արտադրություն/գործարաններ,
- գյուղատնտեսական աշխատանքներ:

Այս աշխատատեղերը հազվադեպ են ապահովում երկարաժամկետ կայունություն կամ մասնագիտական զարգացում: Աշխատավարձերը հաճախ չեն համապատասխանում կյանքի նվազագույն պահանջներին, իսկ աշխատանքային միջավայրերը հաճախ խնդիրներ ունեն ֆիզիկական պայմանների, ղեկավարության վերաբերմունքի և աշխատանքի կազմակերպման առումով: Ֆեմինիստական մոտեցումների տեսանկյունից կանանց նկատմամբ տնտեսական անհավասարությունների ամբողջական ըմբռնումն անհնար է առանց ընտանիքի ներսում անհատույց խնամքի աշխատանքի վերլուծության: Հայաստանում, հատկապես մարզային համայնքներում, ընտանիքի խնամքի բեռն ամբողջությամբ ընկնում է կանանց ուսերին: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծ ընտանիքները (6–9 անդամ) էապես նվազեցնում են կնոջ աշխատանքային ընտրության հնարավորությունները: Երեխաների, տարեցների կամ առողջության խնդիրներ ունեցող ընտանիքի անդամների խնամքը հաճախ շուրջօրյա պարտականություն է: Տնային տնտեսության ամբողջ բեռը՝ խոհարարություն, մաքրություն, երեխայի դպրոց-մանկապարտեզ տանելը, տանը մնացող հիվանդների հոգսը, գերազանցապես կանանց վրա է: Այս իրավիճակում կանայք չեն

կարողանում մասնակցել նույնիսկ առկա աշխատաշուկային, քանի որ աշխատանքի գրաֆիկը, ժամային ծանրաբեռնվածությունը կամ տրանսպորտային (ենթակառուցվածքային) խնդիրները պարզապես անհամատեղելի են խնամքի բեռի հետ: Միաժամանակ, պետությունը բավարար խնամքի ենթակառուցվածքներ և ծառայություններ չի տրամադրում, ինչի հետևանքով կանայք փակվում են տնային տնտեսության ներսում: Այս պարագայում աշխատաշուկայի ցանկացած առաջարկ գնահատվում է ոչ թե աշխատանքի որակի, այլ ընտանիքի խնամքի պահանջներին համապատասխանելու տեսանկյունից: Ավելին՝ կանանց աշխատանքային դժվարությունները ձևավորվում են միաժամանակ մի քանի գործոնների համակցված ազդեցությամբ: Մասնավորապես.

Սեռ. կանանց աշխատանքը հաճախ ընկալվում է որպես «օժանդակ», իսկ ընտանիքի հիմնական տնտեսական պատասխանատվությունը վերագրվում է տղամարդուն:

Սոցիալական կարգավիճակ. միայնակ մայրերն առավել խոցելի դիրքում են՝ չունենալով աջակցության համակարգ:

Աշխարհագրություն. մարզերում աշխատավարձերը ցածր են, իսկ աշխատատեղերը՝ սահմանափակ:

Տեղահանում. Ղարաբաղից տեղահանված կանանց համար ավելանում են հոգեբանական, տնտեսական և սոցիալական մեկուսացման նոր շերտեր:

Առողջական վիճակ. ընտանիքի որևէ անդամի քրոնիկական հիվանդությունը կամ հաշմանդամությունը ամբողջությամբ փոխում է կանանց՝ աշխատանքային շուկայում իրենց արժանի տեղը գտնելու հեռանկարը:

«Վերջերս աղջիկներից մեկը Ֆեյսբուքով ուղարկեց [աշխատանքի հայտարարություն], որ տանը հարդուկ են անում: Դիմեցի, բայց մերժվեցի, որովհետև Երևանի մեջ էր պետք... Ինձ հարմար կլիներ տանը մի գործ անել, ինչ-որ մի բանով զբաղվել, որ իմ երեխեն իմ կողքը լիներ, ես կարողանայի աշխատել, որովհետև իրան ես չեմ կարա մենակ թողնեմ, ինքը ցնցում է ունենում, սովորական դեղն իրան չի օգնում»:

Հրազդան, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող միայնակ մայր (1)

Այս բոլոր գործոնները միահյուսված ձևով սահմանափակում են կանանց ընտրությունը՝ ստեղծելով փակ շրջան, որտեղից դուրս գալը դժվար է առանց պետության և համայնքի թիրախավորված աջակցության: Կանանց հետ մեր հարցազրույցները փաստում են, որ մարզային աշխատաշուկան ոչ միայն ցածր վարձատրվող է, այլև հաճախ՝ իրավազերծ.

- աշխատավարձերը ուշանում են կամ պահվում,
- աշխատանքի ժամերի և պայմանների վերաբերյալ *բանավոր* պայմանավորվածությունները խախտվում են,
- աշխատանքը հիմնականում առանց պայմանագրի է,
- գերիշխում է նվաստացնող կամ ճնշող վերաբերմունքը աշխատողների նկատմամբ,
- կանայք վախենում են բողոքելուց՝ աշխատանքը կորցնելու ռիսկով պայմանավորված:

Այս իրավիճակը նվազեցնում է կանանց աշխատանքային ինքնավստահությունը, երկարաժամկետ մոտիվացիան և մասնագիտական զարգացման հնարավորությունները: Ղարաբաղից տեղահանված կանանց փորձառություններն ունեն լրացուցիչ ծանրության շերտեր, ինչպիսիք են բնակարանային անորոշությունը, սոցիալական կապերի և աշխատանքի կորուստը տեղահանության պատճառով, հոգեբանական ծանր տրավման, ինչպես նաև նոր միջավայրում ապաստարան գտնելու հիմնական անհրաժեշտությունը:

Եթե տեղացի կանայք արդեն իսկ բախվում են աշխատաշուկայի համակարգային անհավասարությունների, ապա տեղահանված կանանց համար այս խնդիրները կրկնապատկվում են:Կանանց աշխատանքային փորձառությունը մեծապես պայմանավորված է տեղական սոցիալական ու մշակութային առանձնահատկություններով, որոնք հաճախ ճնշող ու սահմանափակող են՝ հիմնված պահպանողական և տղամարդակենտրոն մոտեցումների վրա: Օրինակ՝ Գյումրիում, հատկապես սպասարկման և փոքր առևտրային ոլորտներում, ամուսնալուծված կանայք և միայնակ մայրերը հաճախ հայտնվում են խոցելի դիրքում: Նրանք կարող են խուսափել որոշ աշխատանքներից, մի կողմից՝ հանրային բամբասանքից և քննադատությունից պաշտպանվելու, մյուս կողմից՝ ղեկավար տղամարդկանց հնարավոր ոտնձգություններից խուսափելու համար:Միաժամանակ, Ղարաբաղից տեղահանված կանայք, եթե նախկինում աշխատել են այնտեղ, հաճախ ունեցել են ավելի բարձր աշխատավարձեր, ինչը ստեղծում է ներհասարակական լարվածություն և աղճատված ակնկալիքներ՝ կապված աշխատանքի հնարավորությունների և պետական աջակցության հետ: Արդյունքում մի շարք կանայք դժվարանում են հարմարվել հայաստանյան իրականությանը և աշխատաշուկային: Իսկ կանայք, որոնք նախկինում չեն ունեցել աշխատանքային փորձ, հաճախ՝ ընտանեկան բռնության կամ այլ սոցիալական սահմանափակումների պատճառով, այժմ ստիպված են աշխատել տնտեսական կարիքից մղված, սակայն չունեն անհրաժեշտ հմտություններ և փորձ, ինչը դարձնում է նրանց տեղավորումը աշխատաշուկայում դժվար և երկարատև գործընթաց: Այս համակցված հանգամանքներն ընդգծում են այն բազմաշերտ մարտահրավերները, որոնց կանայք բախվում են Հայաստանում՝ փորձելով հավասարակշռել աշխատանքի պահանջները, սոցիալական ակնկալիքները և անձնական կարիքները:

Հրազդան, Ղարաբաղից տեղահանված կին (2)

«Չէ՛, չեմ աշխատել, կարիքը չեմ ունեցել: Ավելի ճիշտ՝ չեն թողել, որ ես աշխատեմ, ասել են՝ տան գործերով, երեխու հետ: Ծնողներս չեն թողել, քանի որ իրենք աշխատում էին բոլորը, ֆինանսը հերիքում էր: Ես շատ էի ուզում աշխատեի, որ դուրս գամ...»:

Գյումրի, միայնակ մայր (2)

«Աշխատանք կա, բայց պիտակավորում են: Օրինակ՝ մատուցողուհի չեն գնում, ասում են՝ կպիտակավորեն: Ես նույնպես մաքրուհի եմ. ես մեծ պատասխանատվությամբ եմ իմ գործն անում, բայց էլի ինչ-որ տեղ ասում եմ՝ թող չիմանան մարդիկ: Իրենց վերաբերմունքով քեզ ստիպում են, որ դու նեղվես: Ես ո՛չ գողանում եմ, ո՛չ անբարո բան եմ անում, որ տունս պահեմ»:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանանց աշխատանքային փորձառությունները պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին խնդիրների պարզ շարք, այլ որպես փոխկապակցված և փոխազդող համակարգ: Կանայք հաճախ ունենում են մի քանի մասնակի աշխատանք՝ փորձելով համադրել նվազագույն եկամտի անհրաժեշտությունը և ընտանիքի խնամքի կարիքները: Չնայած մեծ դիմակայունությանը, ճկունությանը և աշխատասիրությանը՝ խոցելի խմբերի կանայք հաճախ մնում են ցածր եկամտային շերտերում՝ չունենալով առաջընթացի ռեսուրսներ: Հայաստանի մարզերում կանանց աշխատանքային փորձառությունները ձևավորվում են միաժամանակ տարածքային, սոցիալական, ինստիտուցիոնալ և մշակութային գործոնների համադրությամբ: Խնամքի անբավարար ենթակառույցները, աշխատաշուկայի ցածր որակը, աշխատանքի իրավունքների թույլ վերահսկողությունը և պատերազմի հետևանքով առաջացած նոր խոցելիությունները խորացնում են կանանց տնտեսական կախվածությունը և սահմանափակում են ընտրության դաշտը:

Թեպետ կանայք հանդես են գալիս որպես համայնքային և ընտանեկան դիմակայության առանցքային դերակատարներ՝

ցուցաբերելով ուժ, ճկունություն և ստեղծարարություն, դա չի կարող փոխհատուցել համակարգային բացերը, որոնք շարունակում են խոչընդոտել նրանց տնտեսական ինքնորոշումը:

3.2 | Կանանց փորձառությունները պետական աջակցության համակարգում

Մեր ուսումնասիրությունը բացահայտում է այն, թե ինչպես են սոցիալապես խոցելի կանայք՝ միայնակ մայրեր, ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող կանայք, բռնի տեղահանված կանայք, տնտեսությունը միայնակ վարող կանայք, առնչվում պետական աջակցության համակարգին: Նրանց պատմություններում արտահայտվում է ոչ միայն նյութական աղքատությունը, այլև սոցիալական հարաբերությունների անհավասարությունը, որը ձևավորվում է պետության, համայնքային կառույցների և ընտանիքի հետ փոխգործակցության մեջ: Կանանց պատմությունները ցույց են տալիս, որ պետական աջակցության համակարգն ընկալվում է որպես միաժամանակ անհրաժեշտ, բայց նաև՝ խոչընդոտներով լի և հաճախ նվաստացնող միջավայր: Այն պահանջում է հարմարվողականություն, ճկունություն, երբեմն էլ՝ «արժանի աղքատի» կերպարի կառուցում՝ աջակցության իրավունքը վավերացնելու համար: Այս փորձառություններն արտացոլում են հորիզոնական և ուղղահայաց անհավասարությունների համադրություն. պետությունը գործում է որպես վերահսկող, իսկ շահառուները՝ որպես պասիվ ընդունողներ, որոնց ինքնավարությունն ու արժանապատվությունը հաճախ ստորադասվում են բյուրոկրատական չափորոշիչներին: Որոշ դեպքերում կանայք նկարագրում են, որ աջակցության ծրագրերին դիմելը պահանջում է բարձր տեղեկացվածություն և

գիտելիք, որը բոլորին հասանելի չէ: Դիմելու գործընթացը դառնում է հոգեբանական և սոցիալական փորձություն, ոչ միայն տեխնիկական քայլ: Այս բարդությունը հատկապես ծանր է այն կանանց համար, որոնք չունեն ընտանիքի կամ համայնքի աջակցությունը: Նրանք ստիպված են ինքնուրույն անցնել բյուրոկրատական գործընթացներ, ինչը հաճախ դիտարկվում է որպես կախվածության փորձառություն, ոչ թե իրավունքների իրացում: Այս դիտարկումները վկայում են, որ աջակցության համակարգը կառուցված է և ընկալվում է ոչ թե որպես քաղաքացիական իրավունքների իրացման գործիք, այլ որպես «բարեգործություն»՝ պետական իշխանության վերին դիրքից տրամադրվող շնորհ: Կանանց պատմություններում բազմիցս հայտնվում է սոցիալական անարդարության զգացումը և պետական աջակցության ծրագրերի քննադատությունն իբրև ոչ թիրախային:

«Երևանից պետք է հաստատում լիներ, բայց իրենցից էլ ձայն չկա, սոցիալական աշխատողին եմ զանգում, պատասխանող չկա: Այս երկու օրը փորձեմ տեսնել՝ ինչ կլինի: Վերջին պահին պետք է մտնեմ շեֆի մոտ, ասեմ՝ շնորհակալություն, Ձեր երեսից է, որ մենք այս օրին ենք: Գյուղում այնպիսի մարդիկ են ստանում [նպաստ], որ երբեք չեն էլ ունեցել կարիք»:

Գյումրի, միայնակ մայր (2)

Կանանց մի մասը նշում է, որ չեն հասկանում՝ ինչ սկզբունքով է որոշվում, թե ով կարող է ստանալ աջակցություն: Նույն սոցիալական իրավիճակում գտնվող մարդիկ տարբեր արդյունքներ են ունենում. ոմանք ստանում են նպաստ, իսկ մյուսները՝ ոչ: Այս ընկալումը ձևավորում է ոչ միայն անարդարության զգացում, այլև խորացնում է պետության նկատմամբ անվստահությունը: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Հայաստանի պետական սոցիալական քաղաքականության առանցքային շահառուների թվում են Ղարաբաղից տեղահանված անձինք: Պետությունը և միջազգային գործըն-

կերները գործարկել են մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր՝ ներառյալ դրամական նպաստներ, վարձակալության, բնակարանային և այլ փոխհատուցումներ: Այս ծրագրերն իրենց բնույթով ուղղված են սոցիալական կայունության ապահովմանը՝ տեղահանված ընտանիքների տարրական կենսապահովման խնդիրները մեղմելու նպատակով: Սակայն այս աջակցության շարունակական և համատարած բնույթը որոշակի կախվածության միտումներ է ձևավորել: Հաճախ ընտանիքները երկարաժամկետ են ընդգրկվում տարբեր աջակցությունների շրջանակներում՝ անկախ աշխատունակության կամ աշխատաշուկայում ներգրավվելու հնարավորություններից: Այս իրավիճակը նվազեցնում է աշխատանքի նկատմամբ մոտիվացիան, քանի որ սոցիալական ապահովության որոշ ծրագրեր (օրինակ՝ վարձակալության կամ դրամական նպաստների շարունակական տրամադրումը) ապահովում են նվազագույն, սակայն որոշակի կայուն եկամուտ՝ առանց զբաղվածության խիստ անհրաժեշտության, հատկապես բազմանդամ ընտանիքների դեպքում, երբ աջակցություն են ստանում ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվարկով: Միաժամանակ, այս երևույթը բացահայտում է պետական սոցիալական քաղաքականության կառուցվածքային թերությունները. նույնիսկ այն դեպքերում, երբ սոցիալական աջակցությունը զուգորդվում է զբաղվածության խթանման միջոցներով, առաջարկվող աշխատատեղերը հիմնականում լինում են ցածր վարձատրվող, իսկ կանանց պարագայում դրան ավելանում է նաև սահմանափակ կամ անհարմար աշխատաժամերի խնդիրը: Աշխատաշուկայում ներգրավման ծրագրերը՝ մասնագիտական վերապատրաստումներով, ոչ բավարար ծավալով են: Արդյունքում ձևավորվում է համակարգային կախվածություն պետական աջակցությունից, որը, չնայած իր կարճաժամկետ սոցիալական արդյունավետությանը, երկարաժամկետ կտրվածքով կարող է թուլացնել անհատների և առանձին

խոցելի խմբերի գործականությունը: Այս համատեքստում կարևոր է, որ սոցիալական աջակցության ծրագրերը աստիճանաբար փոխակերպվեն խթանային մեխանիզմների, որոնք միաժամանակ ապահովում են սոցիալական պաշտպանություն և խրախուսում աշխատանքի վերադարձը, հատկապես կանանց և երիտասարդների շրջանում:

«Որպես խնամակալ 38 հազար եմ ստանում, այն էլ, եթե մտնեմ աշխատանքի, այդ 38 հազարն էլ կկտրեն, ու փաստացի այնքան է աշխատավարձը քիչ, որ եթե այդ 38-ը կտրեն, սաղ ամիսը պետք է գնաս, չարչարվես»:

Հրազդան, Ղարաբաղից բռնի տեղահանված կին (2)

Ամփոփում

Հայաստանում աղքատության գենդերային ասպեկտի շուրջ մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ այն հնարավոր չէ դիտարկել միայն եկամուտներով կամ տնտեսական ցուցանիշերով: Կանանց պատմությունները ցույց են տալիս, որ աղքատությունը սոցիալապես կառուցված և ակնհայտորեն գենդերացված երևույթ է, որն ուրվագծվում է միաժամանակ նյութական, սոցիալական, կրթական, առողջապահական մակարդակներում: Ի հակադրություն գերիշխող քաղաքական դիսկուրսի՝ մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ կանանց տնտեսական անապահովությունը չի բխում միայն անհատական ռեսուրսների կամ ջանքի պակասից, ընդհակառակը, նրանք ամենօրյա ռեժիմով ներգրավված են ամենատարբեր ծանր աշխատանքներում, սակայն անապահովությունը պայմանավորված է կառուցվածքային անհավասարություններով, խնամքի ծանրաբեռնված աշխատանքով, աշխարհագրական անհավասարությամբ, սոցիալական պաշտպանության համակարգերի ու քաղաքականությունների թերություններով և Ղարաբաղյան երկրորդ պատերազմից ու տեղահանությունից բխող նոր խոցելիություններով:

Այսպիսով՝ ամփոփենք որոշ առանցքային բացահայտումներ.

> Միայնակ մայրերը և այն տնային տնտեսությունները, որոնք գլխավորում են կանայք, Հայաստանի տնտեսապես ամենախոցելի խմբերից են: Գենդերային նորմերը, կանանց վրա թողված խնամքի պարտականությունները և աշխատաշուկայի անբարենպաստ պայմաններն այն կառուցվածքային խոչընդոտներից են, որոնք անմիջա-

պես և բացասաբար են ազդում կանանց տնտեսական կայունության վրա:

Տնային տնտեսությունների ներսում ռեսուրսների բաշխումը հաճախ արտոնյալ դիրք է ապահովում տղամարդ անդամներին, հատկապես որդիներին՝ դուստրերի հաշվին: Այս սոցիալ-մշակութային և տնտեսականորեն արմատացած տղամարդակենտրոն ավանդույթը ոչ միայն կարճաժամկետում անբարենպաստ ազդեցություն է ունենում կանանց և աղջիկների վրա, այլև վերարտադրում է աղքատության և գենդերային անհավասարության միջսերնդային ցիկլերը:

Սոցիալական աջակցության և ընտանիքի անապահովության գնահատման համակարգի առաջարկվող բարեփոխումները թեև նպատակ ունեն բարձրացնելու հասցեականությունն ու արդյունավետությունը, պահպանել են հին մեթոդաբանական խնդիրները. անուղղակի ցուցանիշերի գերակայությունը շարունակում է հանգեցնել իրական կարիքավորների բացառմանը և կարող է խորացնել գենդերային ու տարածքային անհավասարությունները:

Խնամքի աշխատանքի անհավասար բեռի, խնամքի ենթակառուցվածքների զարգացման, գենդերային բռնության և խոցելի խմբերի (գյուղաբնակ, բազմազավակ, անօթևան կանայք և այլն) հատուկ կարիքների նկատմամբ սահմանափակ ուշադրությունը լրջորեն թուլացնում է սոցիալական քաղաքականությունների կարողությունը՝ նպաստելու կանանց տնտեսական ներառմանը և աղքատության համակարգային կրճատմանը:

Կանանց աղքատությունը պայմանավորող հիմնական գործոններից են ուսումից վաղ դուրս մնալը, վաղ ամուս-

նությունը, ծնողական և ամուսնական ընտանիքներում հոգեբանական, տնտեսական և ընտանեկան բռնության փորձառությունները, ցածր վարձատրվող և մասնակի զբաղվածությամբ աշխատանքներում ներգրավվածությունը:

Կանանց կյանքի որակը և նրանց՝ այս կամ այն աշխատանքի ընտրության ազատությունը ձևավորվում են նաև հետևյալ կառուցվածքային տարրերով՝ ընտանիքի կառուցվածք և աջակցություն, երեխաների ու ընտանիքի անդամների խնամքի չափ, բնակարանային ապահովություն, սոցիալական և մշակութային կարծրատիպեր և նախապաշարումներ, գենդերային խարաններ, բռնության միջավայր և սոցիալական կապիտալի և ցանցերի առկայություն: Այս բոլոր գործոնները սահմանափակում են կանանց սոցիալական շարժունությունը՝ թողնելով նրանց փակված ցածր եկամուտների, բարձր խնամքի բեռի և ցածր որակի աշխատանքի շրջանում:

Մարզային քաղաքներում և գյուղական համայնքներում խոցելի խմբերի կանանց աշխատանքային հնարավորությունները, ինչպես նաև նրանց ընդհանուր սոցիալ-տնտեսական դրությունը սահմանափակվում են միաժամանակ երեք առանցքային գործոններով՝ աշխատաշուկայի կառուցվածքով, սոցիալական ու մշակութային նորմերով, տեղական համայնքների ամորֆ դրությամբ: Կանանց համար հասանելի աշխատատեղերը հիմնականում ֆիզիկապես ծանր են, ցածր վարձատրվող, ոչ ֆորմալ (առանց պայմանագրի), ինչպես նաև չեն ապահովում սոցիալական պաշտպանության երաշխիքներ:

Կանանց աշխատանքային հնարավորության վրա ամենամեծ ազդեցությունն ունեն խնամքի ծանր պարտակա-

նությունները՝ անչափահաս և հաճախ հաշմանդամություն ունեցող երեխաների, առողջության խնդիրներով տարեցների շուրջօրյա խնամքը, կենցաղավարությունը, ինչպես նաև խնամքի ենթակառուցվածքների բացակայությունը:

Կանանց աշխատանքը հաճախ դիտվում է որպես «օժանդակ», որոշ մասնագիտություններ՝ «ոչ պատշաճ», իսկ միայնակ մայրերը, ամուսնալուծված կանայք, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող կանայք հաճախ են ենթարկվում պիտակավորման և խարանման: Այս երևույթը ոչ միայն սահմանափակում է աշխատանքային ընտրությունները, այլ նաև ազդում է կնոջ ինքնավստահության և սոցիալական կապերի վրա:

Հավելյալ խոցելիություն ունեն Ղարաբաղից տեղահանված կանայք. տեղահանությունը բերում է բնակարանային անորոշության, սոցիալական կապերի և աշխատանքի կորստի, հոգեբանական ծանր տրավմայի և նոր միջավայրում կայունություն ապահովելու հրատապ անհրաժեշտության: Եթե տեղացի կանայք արդեն իսկ գործում են աշխատաշուկայի համակարգային անհավասար պայմաններում, ապա տեղահանված կանանց համար այդ նույն խոչընդոտները դառնում են բազմապատիկ ծանր:

Պետական աջակցության համակարգը կանանց կողմից ընկալվում է ոչ թե որպես իրավունքների իրացում, այլ որպես բարեգործական, երբեմն նվաստացնող գործընթաց: Բյուրոկրատիան, տեղեկատվության պակասը, սխալ թիրախավորումը, և «արժանի աղքատի» կերպարի պահանջը նվազեցնում են պետական քաղաքականությունների արդյունավետությունն ու կանանց վստահությունը համակարգի նկատմամբ:

> Ղարաբաղից տեղահանված կանանց դեպքում աջակցության շարունակական բնույթը երբեմն ստեղծում է կախվածության դինամիկա՝ զուգորդվելով աշխատանքային շուկայում ինտեգրվելու սահմանափակ հնարավորություններով:

Այսպիսով՝ աղքատության գենդերային չափման քննությունը ցույց է տալիս, որ կանանց սոցիալ-տնտեսական անապահովությունը չի կարող լուծվել միայն աշխատաշուկայի կամ եկամտային քաղաքականություններով: Անհրաժեշտ են համալիր մոտեցումներ՝ խնամքի ենթակառուցվածքների զարգացում, անվտանգ աշխատանքային միջավայրերի ստեղծում, սոցիալական պաշտպանության թիրախավորում, ինչպես նաև տեղական համայնքների գործականության և պատասխանատվության բարձրացում:

Գրականություն

Anderson, I. (2001). *Pathways through homelessness: Towards a dynamic analysis* (Seminar paper, May). Urban Frontiers Program, University of Western Sydney.

Chant, S. (2010). *The International Handbook of Gender and Poverty: Concepts, Research, Policy.* Edward Elgar Publishing.

Edgar, B., & Doherty, J. (2001). *Women and homelessness in Europe: Pathways, services and experiences.* Bristol: The Policy Press.

Justino, P. (2012). War and poverty. In *The Oxford Handbook of the Economics of Peace and Conflict.*

Kocabıçak, E. (2022). Why property matters? New varieties of domestic patriarchy and property. *Social Politics: International Studies in Gender, State & Society, 29*(3), 812–835. https://doi.org/10.1093/sp/jxab032

Խալաթյան Մ., Մարգարյան Ն. (2025). *Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրություն. Գեղարքունիքի և Շիրակի մարզերի օրինակը.* Սոցիոսկոպ. https://socioscope.am/wp-content/uploads/2025/04/A-Participatory-Assessment-of-Poverty-Employment-and-Labor-Rights-Issues-the-Example-of-Gegharkunik-and-Shirak-regions.pdf

ՀՌԿԿ Հայաստան (2022). *Բազմաչափ աղքատություն. Լոռիում, Շիրակում և Տավուշում համայնքային մակարդակով իրականացված հետազոտություն.* https://crrc.am/wp-content/uploads/2022/06/MPI-and-CVI_PPT_Arm.pdf

Mayock, P., Parker, S., & Sheridan, S. (2015). *Women, homelessness and service provision.* Simon Communities.

McNaughton, C. (2008). *Transitions through homelessness: Lives on the edge.* Hampshire, NY: Palgrave Macmillan.

Novac, S., Brown, J., & Bourbonnais, C. (1996). *No room of her own: A literature review on women and homelessness.* Canadian Housing Information Centre.

Shahnazaryan, G. (2022). Gender inequality and poverty in Armenia: A multidimensional approach. *Journal of Sociology: Bulletin of Yerevan State University, 13*(2 (36)), 38–47. https://doi.org/10.46991/BYSU:F/2022.13.2.038

Savage, M. (2016). Gendering women's homelessness. *Irish Journal of Applied Social Studies, 16*, 44–65.

Stewart, F. (2010). *Horizontal inequalities as a cause of conflict.* World Development Report Background Paper. World Bank.

Vijaya, R., Lahoti, R., & Swaminathan, H. (2013). Moving from the household to the individual: Multidimensional poverty analysis: https://doi.org/10.48550/arXiv.1304.5816

Walker, C. M., & Smith, A. (2017). *Poverty stigma and mental health: The role of social attribution.* Journal of Community & Applied Social Psychology, 27(2), 145–160

Williams, J. C. (1998). Domestic Violence and Poverty: The Narratives of Homeless Women. *Frontiers: A Journal of Women Studies, 19*(2), 143 165. https://doi.org/10.2307/3347163

Women's Support Center. (2024, October 10). *Joint stakeholder report for the United Nations Universal Periodic Review (49th Session).* Coalition of Domestic Violence Support Centers.

ANNEX 1 | Methodological Overview

Traditional methods of measuring poverty are often insufficiently sensitive and tend to overlook its gender dimensions. Although income, in particular household income, is the most common in the process of assessing poverty, they sometimes omit other poverty measurement units, in particular non-monetary ones, such as, for example, unpaid housework, time use, decision-making dynamics, and so on (Shahnazaryan, 2022). Various studies on poverty measurement suggest focusing not only on households but also on individuals, which allows for uncovering intra-household dynamics, issues of gender inequality, and the effects of hidden hardships on poverty assessment (Vijaya et al., 2013).

In Armenia, issues of poverty and social inequality have, in recent years, led us as researchers to a field of study where we have examined poverty and labor rights, the impact of crises on the protection of labor rights, the functioning of labor rights and trade unions, as well as the problem of in-work poverty. Women have been at the center of these studies. The 2024 research conducted by Socioscope on in-work poverty and labor rights in the Shirak and Gegharkunik regions revealed that women often perform physically demanding, varied work, yet they do not perceive or categorize it as “work” (Khalatyan, Margaryan, 2024). High levels of women’s poverty are shaped by multiple economic, cultural, and social factors, including limited employment opportunities, socially and culturally entrenched perceptions of women’s roles, intra-family restrictions, manifestations of domestic violence, gender wage gaps, gaps in social protection systems, and non-gender-sensitive policies.

The search for answers on these issues led us to formulate the objective of this research: to analyze the gender dimensions of poverty in Armenia in the aftermath of multiple crises in order to make research-based advocacy and propose alternative solutions to gender-based poverty issues. The study focuses on women's narratives and experiences, as well as on the analysis of the gender-specific features of poverty measurement. To achieve the research objective, we not only examined gaps and shortcomings in existing state policies but also contextualized them alongside women's personal stories and perceptions.

Thus, to achieve the research goal, we have defined the following research objectives:

> To identify and analyze policies related to the gender dimensions of poverty in state social and employment programs, and to highlight their gaps and shortcomings.

> To uncover the actual connections between poverty and women's issues through the analysis of state social programs, proposed reforms, statistical data, related documents, and thematic studies.

> To analyze the dominant political ideology and discourse surrounding poverty, with particular attention to statements made by the Prime Minister of Armenia, Nikol Pashinyan.

> To identify the most vulnerable groups among women in terms of poverty.

> To analyze how unpaid care work obstructs women's access to paid employment and economic independence.

> To examine the intersections of women's poverty with gender-based or domestic violence.

> To understand the multidimensional relationships between women's poverty, health, and education.

Based on these research objectives, we conducted a two-phase qualitative study. In the first phase, we conducted a secondary document analysis of state policies aimed at poverty reduction, social and employment programs, and official statistical data, with particular attention to the identification of gender aspects in them. From the document analysis, we identified groups of women most vulnerable to poverty, particularly women aged 30–45:

- Single mothers[75],
- Female-headed households,
- Women with displaced or refugee status,
- Women living with HIV/AIDS.

For each of these vulnerable groups, we conducted four in-depth interviews with women living in the Shirak and Kotayk regions. Shirak region was chosen because it is consistently recorded as Armenia's poorest region. Kotayk[76] region was selected because the Women's Resource Center conducted an advocacy campaign there in the autumn of 2025, aimed at identifying and addressing women's issues.

In total, we conducted 16 case studies (8 in Shirak, 8 in Kotayk regions), ensuring proportional inclusion according to the criteria mentioned above. Initially, the study was intended to be conducted exclusively in regional centers; however, the need to include specific target groups required a more flexible approach in

75 | The research sample also included divorced women. Although they are not legally classified as single mothers, in practice they provide childcare independently, without the participation or support of the fathers. In this situation, they perceive themselves as single mothers.

76 | At the time of conducting the interviews, Kotayk region had its own peculiarity: it was one of the pilot regions for the implementation of the new family vulnerability assessment program (along with Syunik region), but this circumstance was not a direct criterion for the research sample.

the selection process. To this end, the research area was expanded to include cities adjacent to Gyumri and Hrazdan, as well as two rural communities, which allowed us to include participants meeting the established criteria.

When reading this research analysis, it is important to consider that the research has limitations and does not include women from other vulnerable groups, their stories and experiences, which are also worthy of study. Such vulnerable groups include women with disabilities, women from ethnic minorities, rural women, and transgender women.

Although this study does not include all women from vulnerable groups, it nevertheless deeply examines the gender aspect of poverty and makes evident issues that are generally relevant to the most diverse groups of women living in poverty. At the same time, it is important to broaden the research scope and include women from all vulnerable groups to uncover all the subtle layers and differences of problems and needs.

ANNEX 2 | Summary

Our research on the gender dimensions of poverty in Armenia demonstrates that it cannot be examined solely through income or economic indicators. Women's stories demonstrate that poverty is a socially constructed and clearly gendered phenomenon, manifested simultaneously at material, social, educational, and healthcare levels. In contrast to the dominant political discourse, our findings indicate that women's economic insecurity does not stem only from a lack of individual resources or effort. On the contrary, women are engaged on a daily basis in a wide range of demanding forms of labor, while their insecurity is shaped by structural inequalities, the heavy burden of care work, geographic disparities, shortcomings in social protection systems and policies, and new vulnerabilities arising from Second Nagorno-Karabakh war and forced displacement.

Thus, several key findings can be summarized as follows:

> Single mothers and female-headed households are among the most economically vulnerable groups in Armenia. Gender norms, care responsibilities disproportionately assigned to women, and unfavorable labor market conditions constitute structural barriers that directly and negatively affect women's economic stability.

> The distribution of resources within households often favors male members, especially sons, at the expense of daughters. This socio-cultural and economically entrenched male-centered tradition not only has adverse short-term impacts on women and girls but also perpetuates intergenerational cycles of poverty and gender inequality.

Although the proposed reforms to the social assistance and family vulnerability assessment system aim to improve targeting and efficiency, they retain longstanding methodological shortcomings: the dominance of indirect indicators continues to lead to the exclusion of those truly in need and may deepen gender and territorial inequalities.

Limited attention to the unequal burden of care work, the development of care infrastructure, gender-based violence, and the specific needs of vulnerable groups (including rural women, women with many children, homeless women, and others) significantly weakens the capacity of social policies to promote women's economic inclusion and achieve systemic poverty reduction.

Key factors shaping women's poverty include early school dropout, early marriage, experiences of psychological, economic, and domestic violence in parental and marital families, as well as involvement in low-paid and part-time jobs.

Women's quality of life and their freedom to choose one or another type of employment are also shaped by a range of structural factors, including family structure and support systems, the extent of childcare and family care responsibilities, housing security, social and cultural stereotypes and prejudices, gender stigma, exposure to violence, and the availability of social capital and networks. Together, these factors constrain women's social mobility, trapping them in a cycle of low income, high care burdens, and poor-quality employment.

In regional towns and rural communities, vulnerable women's employment opportunities and overall socio-economic conditions are constrained by three interrelated factors: the

structure of local labor markets, prevailing social and cultural norms, and the weak institutional capacity of local communities. Employment options available to women are predominantly physically demanding, low-paid, informal (without contracts), and lack social protection guarantees.

The most significant constraint on women's employment opportunities is the heavy burden of care responsibilities, including round-the-clock care for minor children and often children with disabilities, elderly family members with health conditions, household management, and the absence of care infrastructure.

Women's labor is frequently perceived as "supplementary," certain professions are considered "inappropriate" for women, and single mothers, divorced women, as well as women living with HIV are often subjected to labeling and stigmatization. This phenomenon not only limits employment choices but also undermine women's self-confidence and social ties.

Women displaced from Nagorno-Karabakh face additional layers of vulnerability. Displacement entails housing insecurity, loss of social networks and employment, severe psychological trauma, and the urgent need to establish stability in a new environment. While local women already operate under structurally unequal labor market conditions, for displaced women these same barriers become significantly more severe.

The state support system is perceived by women not as a realization of rights, but as a charitable, sometimes humiliating process. Bureaucracy, lack of information, incorrect targeting, and the demand for the image of the "deserving poor" reduce the effectiveness of state policies and women's trust in the system.

> In the case of women displaced from Nagorno-Karabakh, the continuous nature of support sometimes creates a dynamic of dependency, coupled with limited opportunities for integration into the labor market.

Thus, the examination of the gender dimension of poverty demonstrates that women's socio-economic vulnerability cannot be addressed by labor market or income policies alone. Comprehensive approaches are required, including the development of care infrastructure, the creation of safe working environments, improved targeting within social protection systems, and the strengthening of local community agency and accountability.